ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ժ Գ

ՈՒՄ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԺԳ

ՈՒՄ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԿԱԶՄԵՑ՝ Բ. Ա. ԳԱՆԱԳՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

ՀՏԴ 820 / 89 - 93 : 23/28
ԳՄԴ 84 + 86.37
Ու 480

Տպագրվում է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական Խորհրդի
երաշխավորությամբ

Թարգմանությունը ռուսերենից՝
Կարինե Բաբայանի

Ու 480 Ում են այցելում հրեշտակները: Պատմվածքների ժողովածու: Կազմեց՝ Բ. Գանագոն: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010.- 240 էջ:

Կրոնաբույր պատմվածքների այս ժողովածուն գրվել է երեխաների համար, պատմությունները վերցված են կյանքից, զանազան հետաքրքրաշարժ պատումներից:

ՀՏԴ 820 / 89 - 93 : 23/28
ԳՄԴ 84 + 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-074-1
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010 թ.

Հրատարակչության կողմից

Բելառուս գրող Բորիս Գանագոն քաջ հայտնի է ուղղափառ ընթերցողին: Նրա հետաքրքրաշարժ գրքերը հիմնականում գրվել են երեխաների համար, բայց կարդում են նաև տարբեր տարիքի մարդիկ: Բորիս Գանագոն գրել է ավելի քան տասնհինգ գիրք ամենատարբեր տարիքների համար՝ սկսած կտրսեր տարիքից մինչև ավագ դպրոցականները: Դրանցից են՝ «Կիրակնօրյա հրաշքը», «Երկնային հյուրը», «Պատրա՞ստ է արդյոք սիրտը», «Լինենք երեխաների նման», «Ու՞մ են այցելում հրեշտակները», «Երեխաներին հավատի մասին» և այլն: Իր անխոնջ գործունեության համար (20 տարուց ավելի) Բորիս Գանագոն արժանացել է Բելառուսիայում «Հոգևոր վերածննդի» համար Բելառուսիայի նախագահական դափնեկրի մրցանակին:

Ներկայացնում ենք Բորիս Գանագոյի «Ո՞ւմ են այցելում հրեշտակները» պատմվածքների ժողովածուն, որտեղ ընդգրկված են պատմվածքներ, որոնց նյութը մեր առօրյա կյանքն է՝ իր հոգսերով, ցնցումներով, ուրախություններով: Թեմաների զանազանության, պարզության մեջ զգում ես մարդու ներքին խորը էութ-

յունը՝ իր աղավաղված պատկերով, երբեմն պարզունակ միամտությամբ, ու այդ ամենի հետ անտեսանելի այն կապը Արարչի հետ, որը շատ հաճախ չի գիտակցվում, որն էլ պատճառն է մեր տառապանքների: Նրա հերոսները ամենատարբեր տարիքի են: Կարծես բոլորն ապրում են իրենց առօրյա կյանքը, օրերը հոսում են, տարիները փոխվում են մեկը մյուսով, և այդ հերթագայության մեջ մարդն աճում է ու անցնում հավատի իր ճանապարհը՝ ընկնելով և վեր կենալով, ցավերով և հայտնագործություններով, խորունկ հետևություններ անելով կամ չանելով: Այդ ամենը, ինչպես զգում ենք պատմվածքներից, մի անտես ձեռք նախախնամում է և ուղղորդում, խրատում է և պահպանում մեզ: Չնայած մեր մաղսալից էությանը բազումողորմ և բարեգութ Աստված ձեռք է մեկնում և պատրաստ սպասում է մեզ՝ թեթևացնելու մեր երկրավոր բեռը: Տարիներ շարունակ գող և հարբեցող մարդը, որը կորցրեց իր կնոջը և երեխային, հանկարծ բանտում տուբերկուլյոզով հիվանդանալով, սկսում է սթափվել. ինքնավստահությունը և լկտիությունը չքանում են, և մնում է ինքն իր և Ճշմարտության հետ դեմառդեմ: Կարեկցանքի ձեռքը հասնում է մի հավատացյալ կնոջ հետ նամակագրության միջոցով: Ներսում արթնանում է այն իրական մարդը, որ ստեղծել է Աստված և, որը նա կորցրել էր իր եսի և հպարտության պատճառով. և կատարվում է հրաշքը. ձեռքն է վերցնում «Աստվածաշունչը»... Տերը կանչեց. «Եկե՛ք ինձ մոտ բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես կհանգստացնեմ ձեզ...»: Եվ նա եկավ... «Հոգեգալստյան օրը» պատմվածքը վկայություն է այն անաստված տարիների մասին, երբ ամեն ինչ արվում էր՝ մարդկանց սրտերից և հիշողությունից ջնջելու բոլոր սրբությունները. տիրում էր վախի, անվստահության մթնոլորտը: Հոգեգալստյան տոնը անաստվածները փոխարինում էին ժողովրդական զբոսանքով՝ երգ, պար, գինարբուք:

Երբեմն մեր մեծ ողբերգությունները այնքան են խտանում, թվում է ելք չկա, բայց երբ աչքերդ հառնում ես երկինք, որտեղից փրկությունդ ես սպասում, այն չի ուշանում:

Այդպես էլ «Բեկում» պատմվածքում՝ մի պարզ և շատ տարածված պատմություն է. ամուսինը թողնում է կնոջը, աղջիկ ամուսնանում է. կինը մնում է միայնակ, ընկճված և իրեն կորցրած, և միայն բնության մեջ, նայելով աստղազարդ երկնքին, ինքն էլ ձուլվում է տիեզերքին ու հանկարծ իր հոգու խորքերից հասկանում է, թե որքան չնչին է իր վիշտը Արարչի այս անհունության, հրաշագործությունների առջև և որքան նեղ է մարդկային միտքը այն հասկանալու համար: Մի կայծ, և այստեղ էլ բեկվում է նրա կյանքը:

Օգնությունը և փրկությունը գալիս են տարբեր կերպ՝ անձանց, երևույթների և դեպքերի միջոցով. պարզապես պետք է հոգու աչքերով տեսնել, հասկանալ, այնպես ինչպես օգնությունը եկավ Կոլյային՝ «Սիրով փրկվածը» պատմվածքում կամ ականապատ դաշտով քայլելիս. Աստծո խոսքի կենդանի ներգործությամբ կոմերիտկազմակերպիչը սկսում է հավատալ

Աստծուն: Պատմվածքները լի են Աստծո լույսով, հույսով և սիրով:

Գիրքը օգտակար կլինի հատկապես երիտասարդների համար, ովքեր նոր են կյանք մտնում: Ինչ էլ լինի չմոռանանք, որ Աստված մեզ սիրում է, ինչպես Յուլկային՝ «Յուլկան, կամ Աստված կների» պատմվածքից, Իգորին՝ «Եկեք ինձ մոտ...», Պոլինային «Կնոջ բախտ» պատմվածքից: Իսկ մենք բացենք մեր հոգու աչքերը և դռները՝ ներս ընդունելու մեր կորցրած պատկերը՝ Աստծուն, ընդունենք կյանքի ամեն ծանր պահերը քաջությամբ և ամրանաք ու մխիթարվենք Աստծու Խոսքով:

ՈՒՄ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գնա՛ և եղ մի՛ շրջվիր

Մի քանի տարի առաջ ես աշխատում էի Ռուսաստանում, արական մենաստանում: Մի անգամ ձմռանը հարկ եղավ անտառով ութ կիլոմետր մի հեռավոր ճգնարան գնալ:

Մթնում էր: Քայլում էի արագ՝ Հիսուսին ուղղված աղոթքը մրմնջալով: Տագնապալից կչկչաց կաչաղակը՝ ասես նախազգուշացնելով վտանգի մասին: Եվ հանկարծ թիկունքիս ետևում հստակ ինչ-որ բան զգացի, գուցե և մեկի ներկայությունը: Ուզում եմ շրջվել, Աֆղանստանը սովորեցրել էր ուղիղ նայել վտանգի աչքերի մեջ: Բայց ներսումս մի ձայն եմ լսում. «Գնա՛ և ետ մի՛ շրջվիր և մի՛ վախեցիր ոչ մի բանից»: Ես գնում եմ, բայց զգում եմ՝ գլխիս մազերը բիզ-բիզ են կանգնել: Սոսկալի է: Բարձրաձայն աղոթում եմ:*

Երևաց ճանապարհը: Կրկին փորձում եմ գլուխս ետ շրջել: Բայց նույն ձայնը. «Ես քեզ ասացի՝ մի՛ շրջվիր: Գնա՛ առաջ և մի՛ վախեցիր»: Հանկարծ տես-

---

* Թարգմանաբար՝ *«Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստուծո, ողորմեա ինձ, մեղավորիս»* աղոթքն է *(ծնթ. խմբ.):*

նում եմ՝ ճանապարհով մի մարդատար մեքենա է սուրում մեծ արագությամբ: Կտրուկ կանգ առավ իմ կողքին: Դուռը բացվեց, վարորդը գոռում է. «Ինչ է, չե՞ս տեսնում, արագ նստի՛ր, թիկունքումդ գայլեր են»: Տեղից պոկվեցինք: Ետ շրջվելով տեսա՝ ճանապարհի մոտ կիսաշրջանով գայլերի մի ոհմակ էր կանգնած՝ կենտրոնում առաջնորդը:

Ինչպե՞ս էինք սլանում: Իսկ եթե ես ետ շրջվեի:

ՀՆՈՐՀԻ ԳԻՆԸ

Անհիշելի ժամանակներում մի գյուղում մի ծեր հեքիմ էր ապրում: Ոչ թե հեքիմ, այլ՝ կախարդ: Խոսում էին, թե նա պիղծ ուժի հետ կապ ունի՝ այնքան զորեղ է. և՛ «կկապի», և՛ «կքանդի», և՛ տղային աղջկան կկապի, և՛ նշանվածներին կբաժանի, և՛ կբժշկի, և՛ հիվանդություն կուղարկի...

Տեղի բնակիչները թաքուն, բայց կողքերը նայելով մեկմեկու տարբեր պատմություններ էին պատմում նրա կախարդություններին մասին. լինում էին նաև ստեր: Ասում էին, որ գիշերը նա խրճանոցում խոսում է սատանաների հետ, վատ եղանակ է ուղարկում, օձի լեզուն է հասկանում...

Իսկ մարդիկ՝ ոմանք հաճոյանում էին նրան, ուրիշները խուսափում էին, երրորդները թաքուն նախանձում էին, բայց բոլորն էլ վախենում էին: Ծեր հեքիմը ոչ մի բանի կարիք չուներ, միայն թե մարդկանց մեջ ապրում էր, ոնց որ անտառում. ինչ ընկեր, հարազատ, հարևան, ինչ բարեկամություն, սեր:

Բայց որոշ ժամանակից ի վեր ծերունին նկատեց, որ նույն գյուղից մի երիտասարդ հետևում է իրեն, սակայն մոտենալ չի համարձակվում:

– Ինչ ես ուզում ինձանից,– մի անգամ հարցրեց ծեր հեքիմը:

– Ուզում եմ քո մոտ աշակերտ մտնել,– խոստովանեց նա:

– Դո՞ւ, ինձ մո՞տ:

– Չէ որ դու ոչ մեկը չունես,– շտապեց վրա բերել երիտասարդը:– Դու ծեր ես, դու քո կարողությունը պետք է մեկին փոխանցես: Իսկ ես ամեն ինչի պատրաստ եմ, ինչ ասես՝ ամեն ինչ կանեմ: Այ, կտեսնես, միայն թե չվռնդես, այլ սովորեցրու:

– Դե լավ, մնա:

Եվ մնաց երիտասարդը ծեր հեքիմի մոտ: Նայում էր, թե ինչպես է նա խոտերից դեղեր եփում, ինչպես է ձեռքերով հմայանքներ անում, հիշում էր, թե ինչ խոսքեր է շշնջում: Ինքն էլ սկսեց փորձել նույնն անել՝ ոչինչ չէր ստացվում:

Անցավ ժամանակ, երիտասարդը կրկին կպավ ծերունուն.

– Ինչ ես ինձանից թաքցնում: Ինչո՞ւ ինձ մոտ ոչ մի բան չի ստացվում, չնայած ամեն բան այնպես եմ անում եմ ինչպես դու:

– Ամեն բան, բայց ոչ մի բան,– քմծիծաղ տվեց ծերունին:– Դու գլխավորը չունես:

– Իսկ ինչն է գլխավորը:

– Ուժը:

– Իսկ ինչպե՞ս այն ստանամ: Սովորեցրո՛ւ:

– Կարող եմ քեզ սովորեցնել, բայց գլուխ չես բերի: Ես քեզ տնտղեցի՝ դու թույլ ես: Ճիշտն ասած, ես էլ էի թույլ: Գլխավորը հաղթահարելն է... Հաղթահարիր վախդ և թուլությունդ. մի կողմ դիր այն, ինչը հիմարները խիղճ են անվանում, և դու ինձանից էլ ուժեղ կդառնաս:

– Քեզանից էլ ուժեղ: Ասա՛, ինչ պետք է անել:

– Կվախենաս:

– Ոչ մի դեպքում: Իսկ եթե վախենամ էլ, միևնույն է՝ կանեմ: Ասա՛:

– Դե ինչ, ինձ դուր է գալիս քո ինքնավստահությունը: Ասեմ, որ մեր գործում առանց դրա չի լինում: Լսի՛ր: Գնա՛ եկեղեցի...

– Եկեղեցի: Չէ՞ որ ինքդ այնտեղ չես գնում:

– Մի՛ ընդհատիր: Լսի՛ր: Գնա՛ եկեղեցի՝ խոստովանության...

– Խոստովանության: Այ դա քեզանից չէի սպասում լսել:

– Խոստովանության: Իսկ հետո՝ Հաղորդության...

– Դու ինձ ուղարկում ես հաղորդվելո՞ւ:

– Ոչ այնքան: Հաղորդությունը դու չպետք է կուլ տաս: Հենց որ այն ընդունես, անմիջապես հեռացիր, թքիր ափիդ մեջ և արագ անտառ գնա: Այնտեղ՝ բացատի մոտ, ես քեզ կսպասեմ:

– Իսկ հետո՞:

– Հետոն կլինի հետո: Մի՛ շտապիր: Կատարիր ասածս՝ դա կլինի գործի կեսը: Հետո ավելի հեշտ կլինի, գլխավորը՝ վճռական լինելն է:

– Ես կանեմ այն, ինչ ասում ես: Վաղն իսկ:

– Դե ինչ, թող օգնի քեզ ... օգնականը:

– Ինչ օգնական:

– Դու նրան հիմա չես կարող տեսնել, ավելի ուշ կտեսնես: Այն էլ ոչ մեկ օգնականի: Բայց այդ բոլորը հետո: Իսկ հիմա քեզ համար շատ սարսափելի կլինի, բայց հիշիր՝ դու պետք է հաղթահարես վախդ:

– Ես պե՛տք է...– արձագանքեց աշակերտը:– Պե՛տք է:

Անհամբեր սպասելով լույսը բացվելուն՝ սկսնակ հեքիմը գնաց եկեղեցի: Խոստովանեց, սպասեց մինչև դուրս կբերեն Սուրբ Ընծաները: «Աստծո երկյուղով և հավատով մոտեցե՛ք և սրբությամբ հաղորդվեցե՛ք»,– հայտարարեց քահանան՝ բարձրացնելով սկիհը: Եվ հանկարծ կարծես մի սառցե ձեռք սեղմեց նրա սիրտը. երիտասարդը խեղդվում էր մի տրտմեցնող սարսափից: Հեռավոր մանկությունից ասես կենդանի՝ մի պատկեր հառնեց. մայրը իրեն՝ տակավին մանուկ մոտեցնում է սկիհին, և արևի ճառագայթները խրձերով եկեղեցի են թափանցում վերին պատուհաններից, իսկ ինքն ուրախ է և մի քիչ էլ վախենում է, միայն ոչ այնպես, ինչպես հիմա: «Դու պետք է հաղթահարես վախը»,– լսվեց ականջներում ծեր կախարդի ձայնը:

«Ես պե՛տք է»... առկայծում էր մտքում, և կախարդի աշակերտը քայլեց դեպի սկիհը:

Այնուհետև արեց այն, ինչ պատվիրել էր ծերունին. երիտասարդը դուրս եկավ եկեղեցուց, Հաղորդությունը թքեց ափի մեջ և ուղղվեց դեպի անտառ: Որքան մոտենում էր, այնքան ոտքերը չէին հնազանդվում, տրտմությունը ահագնանում էր: Եղանակն էլ փչացավ. սառը քամի բարձրացավ և պատվեց դաշտով մեկ, երկինքը պատվեց ամպերով: Եվ ահա վերջապես անտառի եզրը, ահա և ծեր հեքիմը: Ինչո՞ւ է հրացան վերցրել:

– Ես ամեն բան կատարեցի: Ահա Հաղորդությունը:

– Քիչ բան է մնացել: Դի՛ր, ինչ բերել ես, ճյուղի վրա... Այսպես, դա թիրախն է: Տասը քայլ ետ գնա ... Հերի՛ք է, կանգնի՛ր: Ահա հրացանը: Պետք է կրակես... Հավատա՛, դիպցնելը դժվար չէ ...

Բարձրացրեց երիտասարդ հեքիմը հրացանը, նայեց թիրախին... Եվ վայր գցեց հրացանը, ընկավ ծնկների վրա և սկսեց արտասվել: Ծառի վրա արյունաքամ էր լինում խաչված Քրիստոսը:

Հասկացավ աշակերտը, թե ում պետք է սպաներ կախարդական ուժ ստանալու համար: Եվ մեկընդմիշտ զղջաց, որ անխոհեմ ցանկություն էր ունեցել ձեռք բերելու մի բան, որի համար պետք էր այդպիսի գին վճարել:

«ՍՐԲՈՒՀԻ»

Վալենտինան նոր աշխատանքի տեղափոխվեց, և անմիջապես էլ սկսեցին լուրեր պտտվել, որ նոր աշխատակցուհին հավատացյալ է: Թեև նա իր հավատն առ Աստված չէր ցուցադրում, բայց չէր էլ թաքցնում: Ինչպես կանանց ոչ-մեծ կոլեկտիվում հաճախ է պատահում, ամեն մի նոր մարդ դառնում է սևեռուն ուշադրության առարկա: Դրանից չխուսափեց նաև Վալյան: Երբ Վալյան չէր մասնակցում սերիալների և հեռուստատեսային նորաձև շոուների քննարկմանը, նրան կատակով ձեռք էին առնում և առանց թաքցնելու ծիծաղում էին, երբ նա հաճախ խոստովանում էր, որ ոչ միայն կոսմետիկա չի գործածում, այլև անգամ՝ չունի, նույնիսկ որևէ տոնական առիթի համար:

– Իսկ ինչո՞վ ես զբաղվում ազատ ժամանակ,– տարակուսում էին կանայք:– Երևի տնտեսություն ունես՝ հավեր, խոզեր, կով,– հեգնում էին նրանք:

– Ինչ եք ասում, ինչ տնտեսություն,– կատակին կատակով պատասխանում էր Վալյան:– Մի շուն ունեմ, այն էլ՝ ծեր: Ես ծույլիկ եմ:

– Իսկ շաբաթ օրը,– հարցապնդում էին կոլեգաները:

– Շաբաթ օրն էլ ծառայության եմ գնում եկեղեցի,– անկեղծորեն պատասխանում էր Վալյան:

– Իսկ կիրակի՞,– չէին հանդարտվում աշխատակիցները:

– Իսկ կիրակի՝ նաև կիրակնօրյա դպրոց:

– Ուրեմն ոչ միայն պարզապես աղոթելու ես գնում, այլև այնտեղ պաշտոն ես զբաղեցնում:

– Ինչ պաշտոն,– չհասկացավ Վալենտինան:

– Թող պաշտոն չլինի՝ դիրք լինի:

– Այդ «դիրքը» կոչվում է հնազանդության աշխատանք,– փորձեց բացատրել Վալենտինան:

– Դե լա՛վ, լա՛վ, համեստություն մի՛ արա:

Այդ խոսակցությունից հետո Վալենտինայի հեղինակությունը աշխատակիցների շրջանում բարձրացավ: Նրան մոտենում էին տարբեր հարցերով. ինչ ծառայություն պատվիրել, եթե ամուսինը հիվանդացել է կամ երեխան վատ է սովորում: Վալյան սիրով պատասխանում էր: Նրա վրա այլևս չէին ծիծաղում, բայց միևնույն է, նա երբեմն աշխատակիցների շրջանում նյարդայնություն էր հարուցում:

– Ինչո՞ւ ես քեզ հակադրում կոլեկտիվին,– կշտամբում էր նրան Լյուդմիլան, տեղկոմի աշխատողը, երբ Վալենտինան հրաժարվեց մասնակցել Մարտի 8-ի տոնակատարությանը:

– Հասկանում ես,– ցանկացավ բացատրել Վալյան,– Մեծ պահքի առաջին շաբաթն է...

– Քո պահքը որքան կուզես՝ կպահես,– ընդհատեց նրան Լյուդմիլան,– մենք հո քեֆ չենք սարքում: Թեյ, տորթ, միրգ. սրտանց կնստենք:

– Ոչ, չեմ կարող,– որքան հնարավոր է մեղմ պատասխանեց Վալենտինան:

– Դե, ինչպես կուզես: Տես, ընկերուհիս, մենակ կմնաս:

«Մենակ չեմ, այլ՝ Քրիստոսի հետ»,– մտածեց Վալյան, բայց միևնույն է՝ սրտին մի բան ծանրացավ: Սակայն նա իզուր էր հուզվում: Հանգստյան օրերից հետո ոչ մեկը ոչինչ չհիշեց էլ, բոլորը զբաղված էին իրենց գործերով: Կյանքը իր սովորական հունով էր ընթանում: Առաջվա նման հարցերով գալիս էին Վալենտինայի մոտ, բայց նա տխրում էր, որ աշխատակիցներից և ոչ մեկը եկեղեցի չգնաց: Նա հաճախ էր փորձում բացատրել, որ Տերը նպատակ է, այլ ոչ թե միջոց, բայց ամեն ինչ զուր էր: Երկրային բարեկեցության համար մարդիկ պատրաստ էին օգտվել ցանկացած միջոցներից:

– Վալյուշա, բարի եղիր, այս գրությունը եկեղեցի տար,– հաճախ խնդրում էին աշխատակիցները:

– Գնանք միասին,– ուրախ արձագանքում էր Վալենտինան:

– Ժամանակ չունեմ, իսկ դու, միևնույն է, գնում ես,– լսում էր նա միևնույն պատասխանը:

Մի անգամ Վալենտինայի աշխատասենյակ մտավ Աննա Իգնատևնան, տարեց մի կին, որ միշտ երեխաների և թոռների հոգսերով էր ապրում, անդադար ինչ-որ տեղ շտապում:

– Վալյուշա,– սկսեց նա՝ դուռը հազիվ իր ետևից փակելով,– լսի՛ր քեզ ինչ կասեմ: Ես ոչ մեկի չեմ սպանել, չեմ թալանել. ես մեղքեր չունեմ:

Վալենտինան անսպասելիությունից տեղից վեր կացավ: Աննան բռնեց նրա ձեռքը և հուզված շարունակեց.

– Ես դժվարին կյանք եմ ապրել, բայց երբեք չեմ գողացել, չեմ սպանել, մատնություն չեմ գրել որևէ մեկի վրա, ուրեմն մեղքեր չունեմ:

Գիտենալով Աննա Իգնատևնայի տաքարյուն բնավորությունը, Վալենտինան զգուշորեն պատասխանեց.

– Մի՞թե ոչ մի անգամ չեք վիրավորվել, չեք մեղադրել մտքում...

– Ինչ կապ ունեն մտքերը,– ընդհատեց Աննա Իգնատևնան:– Այո՛, ես կարող եմ ասել ճշմարտությունը, բայց դա մեղադրանք չէ:

– Հասկանում եք,– սկսեց բացատրել Վալենտինան,– կա մարդկային ճշմարտություն, բայց կա բարձրագույն՝ Աստվածային:

– Վալյուշա, ամբողջ կյանքս ճիշտ եմ ապրում, մեղքեր չունեմ,– ջանալով զսպել իրեն, պոռթկաց Աննա Իգնատևնան:

«Ինչ է ուզում ինձանից»,– սրտնեղելով մտածեց Վալյան և կտրուկ ասաց.

– Նշանակում է՝ դուք սուրբ եք:

– Ո՛չ, ինչ ես ասում,– շփոթված փնթփնթաց Աննա Իգնատևնան:

– Բայց չէ՞ որ մեղքեր չունեք:

– Այո՛,– արդեն ոչ այնքան վստահ հաստատեց նա:

– Ով մեղք չունի, նա սուրբ է,– եզրակացրեց Վալենտինան: Աննա Իգնատևնան տարակուսած թոթվեց ուսերը և լուռ դուրս եկավ:

«Երևի պետք չէր այդքան կտրուկ,– մտածեց Վալենտինան և անմիջապես փորձեց իր համար արդարացում գտնել.– իսկ ինչպե՞ս էր պետք»: Այդպես միչև երեկո ինքն իր հետ պայքարեց. մերթ կշտամբում էր, մերթ արդարացնում, մերթ մտովի խոսում էր Աննա Իգնատևնայի հետ:

«Ամեն դեպքում պետք է ներողություն խնդրել»,– որոշում կայացրեց Վալենտինան:

Հաջորդ օրը նա մտավ Աննա Իգնատևնայի մոտ:

– Դուք ինձ ներեցեք, ես երեկ չկարողացա պատասխանել ձեր հարցին, բայց ահա՛, կարդացե՛ք,– և նրան մեկնեց Իոան Կրեստյանկինի «Խոստովանություն կառուցելու փորձ» գիրքը և ավելացրեց,– Այստեղ ամեն բան հասկանալի է:

– Ժամանակ չունեմ գիրք կարդալու,– սառը պատասխանեց Աննա Իգնատևնան և սեղմեց շուրթերը:

– Դե, ասենք, միգուցե ընդմիջման ժամին,– և Վալյան, գիրքը սեղանին դնելով, դուրս ելավ սենյակից: Անցավ մի քանի օր: Եվ Աննա Իգնատևնան կրկին եկավ նրա մոտ: Նա մոտեցավ Վալենտինայի սեղանին և թափահարեց մանր ձեռագրով գրված մի թուղթ:

– Ինչ անեմ ես սրա հետ,– շշնջաց նա:

– Իսկ ինչ է,– չգիտես ինչու նույնպես շշունջով հարցրեց Վալյան:

– Սրանք մեղքերս են,– ավելի ցածր պատասխանեց կինը և կարմրեց:

– Ինչ մեղքեր,– զարմացավ Վալենտինան:

– Իմ մեղքերը,– պատասխանեց Աննա Իգնատևնան, աչքերը կախելով,– դե, հիշում ես, դու ինձ գիրք էիր բերել:

– Այո, այո – գլխով հաստատեց Վալյան:

– Ինչ անեմ դրանց հետ:

– Ինչպե՞ս թե ինչ: Գնացեք խոստովանության, քահանայի մոտ:

– Վալեչկա, և դու կարծում ես, որ այս ամենը նա կլսի՞,– կասկածանքով հարցրեց Աննա Իգնատևնան և նորից թափահարեց թուղթը:

– Իհարկե, իհարկե կլսի,– համոզում էր Վալենտինան:

– Ծանր է, շատ ծանր,– դանդաղ արտաբերեց Աննա Իգնատևնան, ինչ-որ բան մտորելով ինքն իրեն, և, նայելով Վալյային, ցածր ձայնով ասաց.– Հիմա այս մեղքերով ինչպե՞ս ապրեմ: Էհ, Վալյուշա, դու իմ կյանքը տակնուվրա արեցիր...– և նա ուղղվեց դեպի դուռը: Բայց հանկարծ կանգ առավ, շրջվեց, խնդրեց.– Դու այս մասին ոչ մեկին մի՛ պատմիր, լա՞վ: Իսկ գիրքը ավելի ուշ կվերադարձնեմ. ամուսինս է սկսել կարդալ:

Կոշիկները

Արդեն ութ օր էր, որ Աննան իր սենյակից դուրս չէր եկել: Ընկերուհու հանկարծակի մահը նրան ահավոր անհեթեթություն էր թվում: Երբ մեռնում են ծերերը, դա բացատրելի է: Բայց ահա զոհվել է Սվետլանան, իր հասակակիցը:

– Այդ ինչպե՞ս: Էլ ո՞րն է կյանքի իմաստը, ինչ է մահը: Ինչո՞ւ սովորել, լարվել, ընտանիք կազմել, եթե բոլորը մեռնելու են:

...Աղջիկները վերադառնում էին դիսկոտեկից: Ուշացան էլեկտրագնացքից, կատակելով և ծիծաղելով քայլում էին գնացքի գծերով: Առջևում լույսեր հայտնվեցին: Սուրում էր ճեպընթացը: Աղջիկները ցած վազեցին քարքարոտ թմբով: Այդտեղ Սվետան նկատեց, որ մնացել է մի կոշիկով, մյուսը ոտքից ինչ-որ տեղ էր թռել ռելսերի վրա: Սվետլանան հանեց կոշիկը, որպեսզի չքերծվի և սկսեց վեր մագլցել: Անյան նրան հետ էր պահում. պա՛հ, ինչ մի թանկարժեք բան է: Բայց Սվետլանային կանգնեցնել չհաջողվեց: Բոլորը գոռում էին նրա ետևից: Իսկ նա ոչինչ չէր լսում: Շչա-

կի ականջ ծակող ձայն, աղմուկ, դղրդյուն: Գնացքը սրընթաց անցավ: Եվ քար լռություն: Սոսկալի է:

Թաղմանը եկել էր ամբողջ դասարանը: Սվետլանան պառկած էր ամբողջովին սպիտակ, ինչպես հարսնացու, և այն նույն կոշիկներով: Հիմա դրանք նրան պետք չեն: Մեղավորության զգացումը Աննային չէր լքում: Ծնողները վախենում էին նրա համար՝ չիմանալով ինչպես օգնել: Հերթապահում էին դռների մոտ: Հոգեբան կանչեցին, բայց դուստրը հրաժարվեց շփվել նրա հետ: Դեպրեսիան չէր անցնում: Միակ ընկերուհու կորուստը անդառնալի էր թվում:

Մի անգամ երազում տեսավ զոհվածին: Սվետլանան ձեռքով էր անում և, թվում էր, թե ինչ-որ բան է խնդրում: Աննան սարսափեց: Նա սկսեց լաց լինել և առաջին անգամ ափսոսաց, որ ոչ մի աղոթք չգիտե: Եվ ահա երազում հայտնվեց մի անծանոթ աղջիկ՝ երկնագույն գլխաշորով և նրան ինչ-որ տեղ տարավ: Հոգին անմիջապես խաղաղվեց, և Աննան արթնացավ:

Երազի աղջկա դեմքը ծանոթ թվաց: Այո, այդ նա էր եկել քահանայի հետ հոգեհանգստին: Աննան հիշում էր նրա բարի աչքերը:

Անյան բացեց պահարանը, նայեց բազմաթիվ հագուստներին և սկսեց ընտրել: Ինչ-որ բան դարձյալ կախեց, իսկ մնացածը դրեց ճամփորդական պայուսակը: Հետո հարցրեց մայրիկին՝ կարելի՞ է այդ իրերը տանել եկեղեցի:

Մայրը չառարկեց և նույնիսկ ուրախացավ, որ աղջիկը ուշքի եկավ:

Վերադառնալով աշխատանքից՝ հայրը ոչ մի բանի մասին հարձուփորձ չարեց, պայուսակը դրեց մաքենան, և նրանք մեկնեցին:

Մեքենայի բաց պատուհանից ներս էր լցվում ծաղկած լորենու բույրը: Թեթև զեփյուռը շոյում էր դեմքը: Աննուշկան ըմբոշխնում էր ծառերի, ծաղիկների, կանաչի գեղեցկությունը՝ ամեն ինչ խաղաղավետություն էր ճառագում:

Եկեղեցում լռություն էր: Նրանց թվաց, որ այնտեղ ոչ մեկը չկա: Բայց ահա քայլեր լսվեցին, և նրանք տեսան մի աղջկա: Այն նույն աղջկան, երկնագույն գլխաշորով: Նա Աննային ժպտաց ինչպես հին ծանոթի:

– Հագուստներ կվերցնե՞ք,– հարցրեց Անյան:

– Աստված օգնի ձեզ: Մենք դրանք կբաժանենք կարիքավորներին:

Դադարից հետո Անյան անսպասելիորեն խոստովանեց.

– Այսօր գիշերը երազիս քեզ տեսա... այդ նույն երկնագույն գլխաշորով... և ինձ ինչ-որ տեղ տարար:

Աղջիկը խաչակնքեց: Խաչակնքեց նաև Անյան: Նրանք կրկին լռեցին: Հայրը, նրանց չխանգարելու համար, մի կողմ գնաց:

Աղջիկը շփոթված ասաց.

– Ընդհանրապես երազներին վստահել պետք չէ: Բայց... Գիտես, մենք վաղը քույրերով պետք է Պոլոցկ մեկնենք՝ մենաստանին օգնելու: Ուզո՞ւմ ես գալ մեզ հետ:

– Ուզում եմ,– ասաց Աննան և զգաց, որ իր կյանքը նոր իմաստով է լցվում:

Ես դեռ պե՞տք եմ որևէ մեկին

Գետնանցում: Խոնավ, ցուրտ: Փոքրիկ, չորացած, մի պառավ է մոլոր քայլում՝ ոտքերը հազիվհազ շարժելով: Հայացքը վերացած է, դատարկ... ահավոր դատարկ: Աչքերը միայն նրա համար են, որ դեն նետված շիշ գտնի: Այդ ժամանակ հաց կլինի:

Նրա առջևում մի սպիտակ կետ է լողում, նույնքան անդեմ, ինչպես շուրջը ամեն ինչ: Նույնիսկ ձայնը չի հասնում նպատակին...

Մեկը համառորեն քաշում է թևքից:

– Տատի՛կ, սիրելիս, կանգնե՛ք:

Սպիտակ կետը կամաց-կամաց դառնում է մի աղջկա դեմք՝ գթության քրոջ հանդերձներ հագած:

– Վերցրե՛ք, խնդրո՛ւմ եմ, այս փոքրիկ շոկոլադը: Ինձ հյուրասիրեցին, իսկ ինձ պետք չէ: Թեյ կխմեք: Վերցրե՛ք, տատիկ:

Թորշոմած դեմքը լուսավորվում է: Անհամարձակ մեկնում է ձեռքը:

– Ես դեռ ինչ-որ մեկին պե՞տք եմ,– ծնվում է վեհերոտ միտքը: Դանդաղ կենդանանում են աչքերը:

– Պետք էք Աստծուն: Մեզանից յուաքանչյուրը թանկ է Նրան,– գորովանքով ժպտում է դեռահաս դեմքը:

– Աստված քեզ պահի, զավակս:

Ցանկությունների քաղաքը

Ավանդազրույց

Մի տղա, անուրախ մտքերի մեջ ընկած, տոպրակն ուսին քայլում էր անտառի արահետով: Նրա նախնիները ամբողջ կյանքը տվել էին հողին, իսկ այդ տղային՝ իրենց որդուն և թոռանը, այդպիսի աշխատանքը ծանր, միապաղաղ և ձանձրալի էր թվում: Նա թողել էր հայրենի տունը և ճամփա ընկել աշխարհը տեսնելու, նոր բախտ որոնելու՝ իր հետ վերցնելով միայն սիրելի հարմոնը:

Ստեպանը, այդպես էր տղայի անունը, որքան խորն էր մտնում անտառը, այնքան խստաշունչ և անբարեհամբույր էր դառնում շուրջբոլորը: Ծառերի կատարները միահյուսված էին իրար, ճյուղերը, ասես հսկայական կոշտուկապատ ձեռքեր, կառչում էին հագուստից: Գիշերները ինչ-որ մեկը՝ ոչ այն է՝ թռչուն, ոչ այն է՝ անտառային չար ոգի, ախ էր քաշում և խշշացնում էր թևերը: Բայց Ստեպանը չէր նահանջում. անվերջ գնում էր ու գնում, մինչև անտառի վերջում տե-

սավ կեչուն փակցված մի տախտակ, վրան գրված՝ «Ցանկությունների քաղաք»։

«Ինչ է սա։ Ինչ որ մեկի կատա՞կն է»,– մտածեց Ստեպանը և շարունակեց քայլել։ Ահա և քաղաքը։ Ստեպանը գնում էր և զարմանում. ոչ մեկն իր ճանապարհին չպատահեց, ո՛չ աղմուկ է լսվում, ո՛չ խոսացություն, ո՛չ երեխաների ծիծաղ։ Համարյա միանման բնակելի տներ, մեկընդմեջ էլ կիսավեր շենքեր։ Ամենուր աղբերի, աղյուսների, հին կահույքի, մանկական խաղալիքների կույտեր են։

Ստեպանը դուրս եկավ հրապարակ, որի կենտրոնում վեր էր խոյանում մի սյուն, որից զանգ էր կախված։ Նա ցանկացավ արթնացնել այդ քնած քաղաքը։ Զգեց պարանը. հնչեց խլացուցիչ մի զնգոց։ Եվ հենց նույն պահին տներից երևացին ծեր տղամարդիկ և կանայք՝ տխուր դեմքերով։ Նրանք օղակի մեջ առան ճամփորդին։ Նրանց քննախույզ հայացքի ներքո սկսեց նեղվել։

– Ո՞վ ես դու։ Ինչո՞ւ ես եկել մեր քաղաքը,– հարցրեց ավագը։

– Անունս Ստեպան է,– պատասխանեց երիտասարդը։– Ես ուզում եմ ապրել ձեր քաղաքում։ Ես երիտասարդ եմ և ուժեղ և կարող եմ օգտակար լինել ձեզ։

Ծերունիները միմյանց նայեցին, և նորից խոսեց ավագը.

– Քանի որ մեր քաղաքի ճամփան գտար, կարող ես այստեղ մնալ մինչև քո կյանքի վերջին օրերը։ Միայն

իմացիր՝ քո օգնությունը ոչ մեկիս պետք չէ։ Այս քաղաքն իրոք կատարում է այստեղի բնակիչների բոլոր ցանկությունները, եթե միայն դրանք վերաբերում են անշունչ իրերի աշխարհին։ Բավական է ինչ-որ բան ցանկանաս և դու այն կստանաս, միայն թե չես կարող քեզ հետ վերցնել, եթե որոշես թողնել քաղաքը։ Հենց որ հատես նրա սահմանը, ամեն բան անմիջապես կցնդի, ինչպես ծուխ։ Դու նաև երբևէ չես կարող կրկին վերադառնալ,– այս է քաղաքի անքակտելի օրենքը,– ծերունին խորը հոգոց քաշեց։– Եվ վերջինը՝ քո հարազատներից, մտերիմներից կամ ընկերներից ոչ մեկին այստեղ կանչել չես կարող։ Իսկ հիմա որոշիր՝ կմնա՞ս մեզ հետ, թե՞ ոչ։

– Մնում եմ,– վստահ պատասխանեց պատանին։

– Այդ դեպքում սկսիր ուրեմն տնից։ Մտովի նկարագրիր՝ ինչ բնակարան կցանկանայիր ունենալ, և ցանկացածդ կստանաս։

Եվ երիտասարդին ուրիշ ոչ մի բանի մասին հարձուփորձ չանելով՝ ծերունիները հեռացան։

Ստեպանը երկար ժամանակ կանգնած էր՝ ծանր ու թեթև անելով լսածը. «Արդյո՞ք դա հնարավոր է։ Դե ինչ, պետք է փորձել»։ Նա պատկերացրեց տունը և նրա ներքին հարդարանքը, և օդում, ասես մշուշի միջից, երևացին պատվիրված բնակարանի ուրվագծերը։ Դիպչելով գետնին՝ տեսիլքը դարձավ գեղեցիկ տուն՝ պատշգամբով և այգով։

Աչքերին չհավատալով՝ Ստեպանը շոշափում էր տան պատերը, վախենալով, որ ինչպես հայտնվել էր, այդքան արագ էլ կանհետանա: Անվստահ, նա բարձրացավ աստիճաններով և բացեց դուռը: Ներսում ամեն բան գեղեցիկ էր և հարմար: Խոհանոցում համեղ կերակուր էր պատրաստված:

– Ուրեմն իրոք ցանկությունների քաղաք է,– ուրախացավ Ստեպանը և սեղան նստեց:

Կշտանալով՝ տղան վազեց լիճը, որը տեսել էր ճանապարհով անցնելիս: Բայց ափը պատված էր կանաչ ջրիմուռներով, որոնք խանգարում էին մոտենալ ջրին: Նա արդեն ավելի համարձակ ցանկություն հայտնեց, որ լիճը մաքրվի, և այն տեղում, ուր կանգնած էր, ավազոտ լողափ հայտնվի: Այդպես էլ եղավ: Ստեպանը երկար լողում էր երկնագույն, վճիտ ջրում և վայելում տաք ավազը:

– Այ սա է կյանքը,– հրճվեց նա:– Ինչպե՞ս կնախանձեին մեր գյուղացիները:

Առաջին շաբաթներին Ստեպանը վայելում էր անգործ և անհոգ կյանքը, և միայն քաղաքի բնակիչների տխուր դեմքերն էին մտահոգում նրան: Նա սկսեց նրանց հյուր կանչել, թեյախմություն էր կազմակերպում ինքնաեռի շուրջ, հարմոն էր նվագում, որ բերել էր հետը, երգում էր: Ծերունիները մի քանի րոպե աշխուժանում էին, նույնիսկ ժպտում էին, բայց շուտով նրանց աչքերը կրկին խամրում էին և ժպիտներն էլ՝

մարում: Հետո նրանք դադարեցին այցելել Ստեպանի տուն. հարմոնի հնչյուններից խռովվում էին նրանք:

Մնալով մենակ, Ստեպանը սկսեց փնտրել իր համար թեթև և հաճելի զբաղմունքներ:

– Ես քաղաքը կգեղեցկացնեմ,– միտք ծագեց գլխում:– Կդառնամ բարի կախարդ, որի ձեռքի շարժումով կհայտնվեն հոյակերտ ամրոցներ և պալատներ:

Նա ցանկացավ իր մտահղացմանը մասնակից դարձնել նաև ծերերին, բայց նրանք հրաժարվեցին:

– Ինչո՞ւ կառուցել ամրոցներ, որտեղ ոչ մեկը չի ապրելու,– տարակուսում էին նրանք,– Ինչի՞ համար, ո՞ւմ է դա պետք:

Ստեպանն ինքը սկսեց փոխել քաղաքի տեսքը: Նա ցանկացավ, որ քաղաքը մաքրվի աղբից և ավերակներից: Ամայի վայրում խնձորի այգի հայտնվեց: Ծերունիների տների կողքին հայտնվեցին զրուցարաններ, ծառեր և ծաղիկներ: Ծերունիները սկսեցին ավելի հաճախ բակ դուրս գալ, զրուցել հարևանների հետ: Դա ուրախացնում էր պատանուն, բայց նա առաջվա նման չէր կարողանում բացատրել նրանց դեմքերի տխրությունը: Մի անգամ Ստեպանը գտավ պատասխանը. «Իսկ գուցե նրանք տխրում են, որովհետև միայնա՞կ են:– Որտե՞ղ են նրանց երեխաները, ո՞ւր են նրանց թոռները»,– և նա գնաց ավագի մոտ:

– Այո՛,– հառաչեց ավագը:– Մի ժամանակ շատ երեխաներ ունեինք: Մենք նրանց ցանկացանք տեսնել

խելացի, բարի, երջանիկ: Քանի դեռ նրանք փոքր էին, նրանց ետ էինք պահում ամենաթողության գայթակղությունից: Մենք ինքներս էինք նրանց խաղալիքներ և գրքեր նվիրում, սովորեցնում էինք կարդալ, աշխատել: Բայց և այնպես երեխաները գլխի ընկան, որ այդ քաղաքում բոլոր ցանկությունները ինքնըստինքյան են կատարվում, և արդեն ոչինչ չցանկացան սովորել: Նրանց նախկին ընկերությունը վերածվեց մրցակցության: Նրանք դարձան անհնազանդ, հպարտ և նախանձոտ, իսկ նրանց արարքները՝ դաժան և չար:

Հասունանալով՝ մեր երեխաները ավելի հեռացան մեզանից: Իրենց դատարկ կյանքը լցնելու համար նրանք վիճում էին և ծեծկռտուք սարքում, իսկ մեր առաջարկած գրքերից խարույկ էին վառում: Մենք ջանում էինք նրանց խրատել, համոզում էինք ընտանիք կազմել, մեզ թոռներ պարգևել՝ նրանք միայն ծիծաղում էին:

– Երեխաներ: Նրանց հետ զբաղվել: Բավական է մեզ սովորեցնեք,– բացականչում էին նրանք:

– Դուք ուզում եք մեզ լքել, միայնությանն մատնել,– աղերսում էինք մենք՝ դիմելով նրանց խղճին:

– Ինչի՞ մասին եք խոսում: Մենք ձեզ չենք խնդրել մեզ ծնել,– պատասխանում էին նրանք:

Նրանց հոգնեցրել էին մեր խրատները, և նրանք հեռացան: Հիմա մենք միայնակ ապրում ենք մեր վերջին օրերը:

Ծերունու պատմությունը ցնցեց Ստեպանին: Նա սկսեց խորհել իր ապագայի մասին:

...Օրերն անցնում էին, ինչպես երկվորյակներ՝ նման մեկմեկու: Ստեպանը սկսեց թախծել՝ ինքն էլ չիմանալով, թե ուրիշ ինչ ցանկանա: Պատանին ավելի ու ավելի հաճախ էր պառկում բազմոցին՝ տրվելով անուրախ մտորումներին:

Նա լքել էր իր գյուղը, ծեր ծնողներին, ընկերներին, հարսնացուին: Բոլորը սիրում էին նրան, իսկ ինքն անհոգ կյանք ցանկացավ:

Այո՛, հողի աշխատանքը ծանր է, բայց մի՞թե երջանիկ օրեր չեն եղել: Եվ աշխատանքը շատ հաճախ նույնիսկ ուրախալի էր: Նա հիշեց, թե որքան համերաշխ էին դուրս գալիս հնձի. տղաները սպիտակ շապիկներով, իսկ աղջիկները՝ գույնզգույն սարաֆաններով, և նրանց մեջ ամենագեղեցիկը՝ իր հարսնացուն:

Իսկ երեկոներին խաղաղ երգերը հարմոնի տակ և աղջիկներին ուղեկցելը մինչև դռնակ... Ինչ ուրախ էին քեֆ անում հարսանիքներին, ինչքա՜ն էին ուրախանում ամեն մի փոքրիկի աշխարհ գալուն:

Ստեպանը վեր կացավ, վերցրեց իր տոպրակը, պատից իջեցրեց հարմոնը և դուրս եկավ գեղեցիկ տնից, որպեսզի այլևս երբեք այնտեղ չվերադառնա: Վերջին անգամ նա ձգեց զանգի պարանը և, հրաժեշտ տալով բոլորին, քայլեց դեպի իր հայրենի գյուղը:

«ԵԿԵ՛Ք ԻՆՁ ՄՈՏ...»*

Երբ Իգորը կողոպտում էր հերթական բնակարանը, անգամ չէր էլ փորձում հետքերը թաքցնել: Նրան տիրել էր գողական անսանձ խելառությունը: Նա արդեն հասցրել էր երկու անգամ բանտում լինել: Վերջին անգամ ազատվել էր մեկ տարի առաջ: Կինը հնազանդ տանում էր այդ ամենը: Իսկ հիմա, փոքրիկ որդին ձեռքին, մտածում էր նա, ուր պիտի գնա:

Երիտասարդ հայրը շատ բուռն էր նշել առաջնեկի ծնունդը, հետո չէր էլ հիշում, թե ո՞վ է կնոջը ծննդատնից տուն բերել և որտեղի՞ց է կնոջ աչքի տակի կապտուկը: Ներում խնդրելը նրա ոճով չէր. կինը նրա համար է, որ համբերի: Բայց ընտանիքի կարիքները պետք է ապահովեր. աշխատել չէր ցանկանում, և նա էլի հնին դարձավ: Այդ «բարօրությունը» երկար չտևեց՝ մեկ շաբաթից նրան բռնեցին:

Բանտ ընկնելով՝ Իգորը ո՛չ տրտնջում էր, ո՛չ էլ վախենում: Նրան չանհանգստացրեց այն, որ կինը սովորականի նման դատարան չեկավ: «Սաշայով է զբաղված, երեխային ո՞ւմ մոտ թողնի»,– մտածեց նա: Բայց գաղութում անցավ կես տարի, իսկ Ժենյան այդպես էլ տեսակցության դիմում չտվեց: Նամակները, չգիտես ինչու, անպատասխան էին մնում:

Բայց և այնպես, մի անգամ առավոտյան նամակ բերեցին: Նայելով ձեռագրին՝ Իգորը քմծիծաղեց. «Առանց ինձ՝ գեղեցիկիս, չկարողացավ ապրել»:

Որքան կարդում էր, այնքան նրա դեմքից քմծիծաղն անհետանում էր:

«Ես այլևս այսպես չեմ կարող ապրել: Սաշայի ինչին է պետք գող հայրը: Ես ինչ եմ տեսել քեզ հետ ապրելով: Ջարդված ամաններ: Գինարբուքներ: Ինչո՞ւ էի տանում քո վիրավորանքներն ու ծեծը: Ինքս էլ չեմ կարողանում հասկանալ: Գրում եմ միայն նրա համար, որպեսզի հայտնեմ՝ ես բաժանվել եմ քեզանից և մեկնում եմ ուրիշ քաղաք: Ի դեպ, իմ և երեխայի ազգանունը փոխել եմ, այնպես որ մի՛ փնտրիր մեզ, միևնույն է՝ չես գտնի»:

Նախկին ամուսինը կատաղությամբ բռունցքով խփեց պատին:

Եվս մեկ տարի փորձում էր խրոխտ երևալ: Ստորացնում էր խուցակիցներին, վեճի էր բռնվում ղեկավարության հետ:

Հանկարծ առողջությունը տեղի տվեց: Ջոր հազը ավելի ու ավելի էր տանջում նրան, այտերին անառողջ վարդագույն հայտնվեց: Մի անգամ, աշխատան-

* Մատթ. 11, 28:

քի ժամանակ, այնքան ուժեղ բռնեց նրա հազը, որ Իգորը, երկտակվելով, չհանգստացավ, մինչև արյուն չթքեց: Նրան բուժման տարան:

Նա իմացավ, որ հիվանդ է տուբերկուլյոզով և իրեն հազիվ մի տարվա կյանք է մնացել:

Իգորին պառկեցրին առանձին պալատում: Ճաղապատ պատուհանից վախվորած սենյակ էր թափանցում գարունը: Կանաչ ճյուղը քնքշորեն ճոճվում էր քամուց, ասես ծաղրում էր նրան. «Ապրե՛լ, ապրե՛լ»: Ինչպե՞ս էր ուզում ապրել: Զգիտես ինչու, անցյալում նա այդ մասին երբեք չէր մտածում: Իսկ հիմա, երբ այնքան քիչ է մնացել, երեսուներկուամյա տղամարդու համար չափազանց քիչ, նրան տոչորում էր ապրելու ծարավը: Նա կծոտում էր շուրթերը, գոռում էր, մինչև որ հազը չէր ուժասպառում նրան:

Իգորը տոպրակից հանեց կնոջ վերջին նամակը: Նա հիշեց բակի ծաղիկները ջրող վտիտ, շիկահեր աղջկան: Հիշեց, թե ինչպես նա շփոթվեց իր հաճոյախոսությունից, ինչպես անհամարձակ ասաց. «Անունս Ժենյա է»...

Եվ այստեղ նրա հայացքն ընկավ հետևյալ տողերին. «Ես այնքան էի սպասում քեզ: Կարծում էի՝ կփոխվես: Ես քեզ սիրում էի ամբողջ հոգով: Բայց դու ցեխի մեջ տրորեցիր այդ սերը: Դու ինձ ստիպեցիր վախենալ քեզանից: Վախենալ նրանից, ում սիրում էի»:

Եվ նա կարծես իրականում, տեսավ նրա մեծ, վախեցած աչքերը, ցավից աղճատված նրա դեմքը... Իգորի ձեռքից նամակն ընկավ, և նա լաց եղավ: Երևի առաջին անգամ էր այդպես հեկեկում՝ ցնցվելով ամբողջ մարմնով:

Մի անգամ պատահաբար ձեռքն ընկավ «Եկեղեցական խոսք» թերթը: Պարապությունից՝ թերթը կարդալով սկզբից մինչև վերջ, Իգորը որոշեց նամակ գրել խմբագրություն՝ գուցե ինչ-որ մեկը համաձայնվի նամակագրություն հաստատել իր հետ:

Երկար սպասեց: Նրա անունով պատասխան եկավ՝ այնպիսի ջերմությամբ և կարեկցանքով լեցուն, որ փոթորկեց ամբողջ հոգին: Հուսահատ մեռնող Իգորը սկսեց կյանք վերադառնալ: Դա այն անհոգ կյանքը չէր, որը համարում էր իսկականը, այլ նորն էր, անհայտը՝ իր սրտի խորքինը: Քույր Ելենային գրած հերթական նամակում նա խոստովանեց, որ արդեն պարան էր պատրաստել՝ ինքնասպան լինելու համար, և այդ սարսափելի ճակատագրից փրկեցին միայն նրա խոսքերը:

Երբ բանտարկյալների մոտ սկսեց քահանա գալ, Իգորը, խոստովանության գնացողների մեջ առաջիններից էր: Նա երկար խոսեց ... Նրա ամբողջ կյանքը հառնում էր ծեր, ալեհեր քահանայի աչքերի առջև: Բայց խոստովանողը վստահ գիտեր, որ այդ ուշադիր աչքերից իրեն են նայում մեկ ուրիշ աչքեր՝ Քրիստոսի

աչքերը, Ում մասին ինքը կարդաց իրեն ուղարկված Կտակարանում: Նա գիտեր նաև, որ ցավն ու հուսահատությունը հեռացան, առջևում իրեն սպասում է ոչ թե մահը կամէ և խավարը, այլ Նրա ձեռքը, Ով ասաց.

«Եկե՛ք ինձ մոտ բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես կհանգստացնեմ ձեզ...»:

Եվ նա եկավ...

Սահմանագծից այն կողմ

Պատահել են արդյոք ձեզ հետ իրադարձություններ, որոնց նշանակություն չեք տվել, բայց հիշվել են հանգամանքների տարօրինակ բերումով: Այդ պահին ապրած մտքերը և զգացմունքները, հավանաբար, վերաբերում էին ձեր հոգու ամենագաղտնի և վեհ զգացմունքներին:

Մի անգամ միայնակ ճամփորդում էի Սուրբ Երկրում, չունենալով ո՛չ որոշակի նպատակներ, չիմանալով ո՛չ ճանապարհ ու արահետ, սրբատեղիները գտնելով ի վերուստ տրված մտքի պայծառացմամբ: Այդ արժանահիշատակ օրը քայլերս ուղղեցի դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձման վայրում գտնվող եկեղեցին:

Պայծառ շողում էր արևը: Կապույտ, անհուն երկնքում մի ամպ անգամ չկար: Սարի բարձունքից, ուր բարձրացա, տեսնում էի լայնարձակ դաշտերը՝ կտրատված ճանապարհի թելիկներով: Ներքևում ամեն բան պարուրված էր նուրբ մշուշով, իսկ վերևում՝ ողողված արևի շողերով:

Իմ ճանապարհն անցնում էր բարձր, համարյա երեքմետրանոց պատով շրջապատված մենաստանի կողքով: Շուրջս ոչ-մեկը չկար: Ճանապարհը չգի-

տեի, այդ պատճառով շուտով կորցրեցի ուղղությունը և մոլորվեցի՝ հայտնվելով երկու բարձր պատերի արանքում, փակուղու մեջ:

Նեղ արահետով ետ վերադառնալիս հանկարծ ճանապարհին տեսա տղամարդկանց երկու մուգ ուրվագծեր: Նրանք վանականներ չէին, և ոչ էլ ուխտավորներ, այլ տեղի բնակիչներ: Կանգնած էին՝ ակնհայտորեն սպասելով ինձ, նայելով ուղիղ ինձ՝ լարված և բավականաչափ սպառնալից: Ետ դառնալու տեղ չկար, ետ քաշվելու՝ նույնպես, այդ պատճառով, մեջս խլացնելով անորոշ տագնապը և վախը, ինձ հավաքեցի և քայլերս ուղղեցի դեպի նրանց կողմը:

Տղամարդիկ ետ քաշվեցին և անցնելու ճանապարհ տվեցին: Մինչև հիմա էլ չգիտեմ, արդյոք վտանգն իրական էր, թե՝ կեղծ: Հնարավոր է, որ ինձ հանդիպած մարդկանց օրն անհաջող էր անցել, կամ ինչ-որ տհաճություններ էին պատահել, իսկ ես իմ կասկածամտությամբ ամեն ինչ հորինում էի:

Բայց նրանցից բավականաչափ հեռանալով՝ ես հանկարծ մտածեցի, որ գուցե խուսափելով այսօր կողոպտված և սպանված լինելու վտանգից, ես ավելի շատ բան կորցրեցի, քան գտա: Ինչքան լավ կլիներ ապրել և մեռնել այստեղ՝ Սուրբ Երկրում, հիասքանչ դաշտերի և լեռների մեջ, որտեղ քայլում էր Փրկիչը: Այդ միտքն այնքան հուզեց և կլանեց ինձ, որ ոչ մի կերպ չէի կարողանում հանգստանալ... Հոգիս կարծես ցնցվեց և թպրտաց... Եվ մտածում էի հավերժության մասին: Այն մասին, թե ինչ է մեզ սպասում մեր երկրային կյանքի սահմանագծից այն կողմ...

Գիշերեցի ինչ-որ մի բլրի գագաթին, քնապարկի մեջ. նայում էի աստղափայլ երկնքին: Բզզում էին ճպուռները: Ես աղոթում էի և երազում անիրականի մասին: Երազում ինձ հայտնվեց մի ծերուկ՝ կռացած, ալեհեր, պարզ աչքերով, ոչխարենու քուրքով և կարկատած վալենկաներով: Նա, մատ թափ տալով՝ ինձ սպառնաց ցածրաձայն և ասաց. «Պահ, էլ ինչ կուզեիր: Արժանի չե՛ս, տղա՛ս, համ էլ տակավին շուտ է: Դեռ ապրի՛ր, համբերի՛ր»:

Առավոտյան արթնացա թռչունների ծլվլոցից: Արևը մշուշի մեջ լողալով՝ ծագում էր աշխարհի վրա: Երազներին չեմ հավատում, ձեզ էլ խորհուրդ չեմ տա: Դատարկ բան է այդ ամենը: Բորբոքված մտքի երևակայություն: Մեր ցերեկային տպավորությունների արտացոլքն է լոկ, ուրիշ ոչինչ:

Բայց իմ ընկալման տարօրինակ քմահաճությամբ, տեսնում եմ, կարծես իրականում, այն ամենը, ինչ տեղի էր ունեցել այն հիշարժան օրը, և երազի այդ ծերունուն: Գուցե, այն պատճառով որ ես զգացի իրականության հպումը յուրաքանչյուր հավատացյալի ամենախորը և գաղտնի հույսի՝ Փրկչի հետ: Հույսի, սպասումների, հավատի հետ, որ այնտեղ, մեր կյանքի սահմանագծից այն կողմ, անճառելի հանդերձյալ կյանքում գուցե կարողանանք տեսնել Աստծո դեմքը:

ՈՒՄ ԵՆ ԱՅԺԵԼՈՒՄ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Լյուբան արդեն տասնչորս տարեկան է, նա սովորում է ութերորդ դասարանում: Լավ է սովորում, կենսախինդ և աշխուժ բնավորություն ունի: Նա նաև նկարում է, զբաղվում է երաժշտությամբ, գիտե բոլոր ժամանակակից դերասաններին, տեղյակ է բոլոր հանրածանոթ հեռուստահաղորդումներին: Լյուբային հարգում են և՛ ընկերները, և՛ ուսուցիչները: Ծնողներն էլ իրենց դստերը գովելուց չեն հոգնում, ինքն էլ իրեն համարում է խելացի և ժամանակակից:

Այսօր Լյուբան անսովոր ուրախության մեջ է: Բանն այն է, որ նա եկեղեցում առաջին անգամ մասնակցել է պատարագին: Նա առաջ էլ գնում էր եկեղեցի, բայց միայն մեծ տոներին: Օրինակ՝ Զատկին՝ օրհնել տալու կուլիչները* և ներկած ձվերը: Ինչպես Ծաղկազարդին, գնելու համար ուռենու ճյուղերի մի փունջ՝ վրան փամփլիկ «փիսիկներ» և զարդարված թղթե հրեշտակներով: Ինչի՞ համար են ուռենու ճյուղերը՝ չգիտեր, չէր էլ հարցնում, պարզապես այդ սովորությունը շատ էր հավանում: Այդ օրերին եկեղեցին մարդաշատ էր լինում, այնպես որ եթե անգամ աղջիկը նկատում էր գեղեցիկ սրբապատկերները և կանթեղների փայլփլուն կրակները, բայց ուշադիր նայել չէր կարողանում: Եվ այդ պատճառով, երբ հարևանուհի Անյան առաջարկեց միասին եկեղեցի գնալ, հարցրեց.

– Իսկ ինչ է, այսօր ինչ-որ տոն է:

– Իհարկե, տոն է: Շատ մեծ տոն՝ Սուրբ Աստվածածնի Ավետումը:

Լյուբան ամաչեց ասել, որ ինքը ոչինչ չգիտե այդ տոնի մասին: Չէ՞ որ Անյան ուսանողուհի է և նրա կողքին Լյուբան ցանկանում է մեծ երևալ: Նա միայն հետաքրքրվեց.

Ուրեմն եկեղեցում շա՞տ մարդ է լինելու, ինչպես Զատկին:

– Ավելի քիչ: Չէ՞ որ այսօր կուլիչներ չեն օրհնելու: Մարդիկ կգան աղոթելու:

Մյ քեզ բան: Պարզվում է, մարդիկ եկեղեցի են գնում պարզապես աղոթելու, այլ ոչ միայն ինչ-որ բան օրհնել տալու... Եվ Լյուբան համաձայնվեց:

Երբ աղջիկները եկեղեցի մտան, պատարագն արդեն սկսվել էր: Մարդ շատ կար, բայց ոչ մեկը չէր հրմշտում, չէր շտապում: Կանգնելով այն մոտ, Լյուբան անհամարձակ շուրջն էր նայում: Նա առաջին անգամն էր այդքան մոտիկից տեսնում այդքան մեծ իկոնոստաս՝ բազում գեղեցիկ սրբապատկերներով:

* Զատկական ընտիր հացը, որը օրհնվում է Ուղղափառ եկեղեցիներում՝ Զատկական պատարագին *(ծնթ. խմբ.)*:

Սպիտակ ծաղիկներով զարդարված սրբապատկեր էր դրված նաև եկեղեցու մեջտեղում՝ հատուկ սեղանի վրա: Մարդիկ մոտենում էին նրան, խաչակնքում էին, խոնարհվում, համբուրում: Հուզմունքով մոտեցավ նաև Լյուբան: Աղջկան թվում էր, որ բոլորն իրեն են նայում: Բայց Աստվածամոր դեմքն այնքան բարի և խաղաղ էր, որ վախն անհետացավ: Լյուբան համբուրեց սրբապատկերը և կանգնեց իր տեղը: Ոչ մեկը նրա վրա չէր նայում. մարդկանց դեմքերը հանգիստ էին և կենտրոնացած: «Նրանք աղոթում են»,– մտածեց Լյուբան: Աղջիկն ամեն բան չէր հիշում, բայց աշխատում էր խաչակնքել և խոնարհվել բոլորի հետ:

Երբ պատարագն ավարտվեց, Լյուբան զարմացավ, նկատելով, թե որքան երկար ժամանակ է անցել: Ինքը բոլորովի չի հոգնել: Հոգում անսովոր թեթևություն կար:

Քարոզի մեջ քահանան պատմեց Ավետման տոնի մասին: Զարմանալի պատմություն էր: Լյուբան շատ ուշադիր լսում էր, թե ինչպես Կույս Մարիամին հայտնվեց Հրեշտակը և ասաց, որ նա պետք է դառնա ամբողջ աշխարհի Փրկչի մայրը...

...Եվ ահա Լյուբան նստած է իր սենյակում և մտածում է այդ պատմության մասին: Փորձում է պատկերացնել մանկամարդ Մարիամին, նույնքան գեղեցիկ, ինչպիսին սրբապատկերի վրա էր, և Հրեշտակին՝ ձյունաճերմակ, շողազարդ հագուստով: Հրեշտակին դժվար է պատկերացնել. գլխում անընդհատ ծիծաղելի հարցեր են ծագում. կոշիկներո՞վ է նա, ինչի՞ց են պատրաստված հրեշտակների թևերը, քայլո՞ւմ են արդյոք, թե՞ միայն թռչում են և այլ անհեթեթություններ: «Այ, եթե իսկական հրեշտակ տեսնեի,– հանկարծ մտածեց Լյուբան:– Իսկ ինչ կա որ, հանկարծ ու հայտնվեր»:

Միտքը հետաքրքիր թվաց, և աղջիկը շարունակեց երազել: Հետաքրքիր է՝ ինչ կասեր իրեն՝ Լյուբային: Իսկ ինչ կպատասխաներ ինքը: Գլխում անհավանական ցնորքներ էին ծագում ...

Լյուբան ասես ուշքի եկավ: Նայեց շուրջը: Նրա սենյակը նույնն էր, ինչպես միշտ: Պատերի պաստառներից նայում էին հայտնի երգիչների դեմքեր: Պատուհանի մոտ՝ սեղանի վրա, տեղ էր գտել կոսմետիկայի հավաքածուն: Լյուբան մի տեսակ անհարմար զգաց: «Այստեղ պայմաններն այնքան էլ Հրեշտակի համար չեն»:– մտածեց նա: Եվ նա պատկերացրեց մի լուսավոր սենյակ, որտեղ, հավանաբար, ապրում էր Մարիամը: Այնտեղ ոչ մի ավելորդ բան չկար, միայն համեստ անկողին և սեղան: Իսկ դրա վրա՝ ձեռագործը և Սուրբ Գիրքը:

Այդ մտածելով, Լյուբան նայեց գրադարակին: Ամեն ինչ այնտեղ կար՝ դետեկտիվ գրքեր, մի քանի վեպ՝ սիրո մասին: «Ինչ դատարկ գրքեր եմ կարդում,– մտածեց նա:– Հրեշտակին հաստատ դուր չէին գա»: Ամեն բան, որ առաջ այնքան բնական էր թվում, այժմ

ճնշում էր: «Էլ ինչ Հրեշտակ: Երազանքների գիրկն ընկավ, հիմարի մեկը»:

Նա մեքենայորեն սկսեց սեղանից հավաքել և ակղի մեջ լցնել քսուքները և օծանելիքի սրվակները, որոնցով մինչև վերջերս այնքան ուրախանում էր: Պատից իջեցրեց ամենագունեղ նկարը, մնացածները որոշեց առայժմ թողնել... Հիշեց տատիկի նվիրած փոքրիկ սրբապատկերը. այն գտավ գրքերի արանքից, դրեց դարակի վրա:

Հանկարծ Լյուբան մտածեց, որ հրեշտակները կարդում են ոչ միայն գրքեր, այլև մարդկանց մտքերը: Նա ջանաց հիշել, թե վերջին ժամանակներս ինչ մտքեր են անցել գլխով: Վերհիշում էր միայն մանրուքներ: Ահա ինքը երազում է, թե ինչպես դպրոց չգնա: Որոշում է՝նոր կոստյումի հետ ինչ վերնաշապիկ գնի: Նեղանում է ընկերուհուց՝ ամեն հիմար բանից: «Միթե ես ոչ մի լուրջ բանի մասին չեմ մտածում»:- զարմացավ աղջիկը:

«Չէ, հրեշտակի մասին երազել դեռ չարժե: Եվ ոչ այն պատճառով, որ այստեղ նրան դուր չի գա: Այլ պարզապես նրա համար, որ ասելիք չունեմ»,- որոշեց Լյուբան: Եվ առանց իր այդ հրաշալի հայտնության էլ արդեն գիտեր՝ կյանքում ամեն ինչ չէ, որ այնպես ճիշտ է, ինչպես թվում էր մինչև վերջերս:

Հոգեգալստյան օրը

«Այնպիսի տեղատարափ էր, որ ջրի հոսանքները քշում էին կամուրջներ, տներ, ցախանոցներ, հողի բերքառատ շերտը: Շրջանը մնաց առանց բերքի: Խուճապից հարյուրից ավելի մարդ զոհվեց:

Դա պատահեց 1949 թվականին Պսկովի մոտ՝ Պուշկինյան Սարերում: Անհավատ իշխանությունները, օգտվելով Պուշկինի 150-ամյակի առիթից, ցանկանում էին Հոգեգալստյան օրը մեծ զվարճահանդես կազմակերպել: Ինքը՝ Ալեքսանդր Սերգեևիչն էլ ուրախ չէր լինի, որ իրեն մեծարում են Եկեղեցու ծննդյան օրը*: Բայց հանդեսն այդպես էլ տեղի չունեցավ տարերքի՝ մինչ այդ չտեսնված մոլեգնության պատճառով: Սուրբ տոնն անարգելու համար պատժվեցին և՛ կազմակերպիչները, և՛ մասնակիցները: "Աստված անարգված չի լինում"**» - վերջացրեց իր պատմությունը ալեհեր վանականը:

Ուխտավորները հրաժեշտ տվեցին սուրբ մենաստանին և իրենց տեղերը գրավեցին ավտոբուսում:

* Քրիստոնեական բոլոր եկեղեցիներում Հոգեգալստյան օրը համարվում է Եկեղեցու հիմնադրման՝ ծննդյան օր *(ծնթ. խմբ.)*:

** Գաղ. 6, 7

Նրանք թողնում էին Պսկովո-Պեչերսկայա մենաստանը և վերադառնում էին տուն՝ Բելառուս:

Զինաիդան, դիտելով պատուհանից երևացող տեսարանները և վերհիշելով վանականի պատմածը, մտածում էր Հոգեգալստյան տոնի վեհության և սերունդներին միմյանց կապող աներևույթ փրկարար թելի մասին: Նա փակեց աչքերը և խորասուզվեց հիշողությունների մեջ:

...Արևի շողքն ընկավ բարձի վրա: Զինուշկան բացեց աչքերը և զարմացավ: Ամբողջ տունը զարդարված էր գույնզգույն ծաղիկներով, խնկեղեգի կանաչ ցողուններով և լորենու տերևներով: Ինչ-որ մի անսովոր բանի սպասումով նա դուրս սահեց անկողնուց և բակ վազեց:

Առավոտը նրան դիմավորեց հաճելի սառնությամբ: Հնձած խոտի թարմ բույրը պտտեցրեց գլուխը:

Մայրը նոր կթած կաթի դույլը դրեց խոտին և խաչակնքեց դստերը:

– Շնորհավորում եմ քեզ Հոգեգալստյան տոնի առթիվ, Զինուլյա:

– Այսօր տո՞ն է,– ուրախ թռչկոտեց աղջիկը:– Ուրեմն, մենք հայրիկի և Ստեպան քեռու հետ կգնանք զբոսանքի: Նա իր Վասյային էլ կվերցնի,– ուրախ ճուվողում էր նա:

Մայրիկը ոչինչ չպատասխանեց, բայց նրա աչքերը տխրեցին:

Դռնակը ճռռաց, և բակում հայտնվեց Ստեպանի դյուցազնական մարմինը: Քեռին բարեսրտորեն ժպտում էր:

– Բարի լույս, Լուկերիա: Ինչ ես վերնաշապիկով կանգնել, դեռ պատրաստ չե՞ս:

Կինը խիստ հայացքով նայեց եղբորը, իսկ աղջկան պատվիրեց.

– Գնա՛, Զինա՛, քեզ կարգի՛ բեր: Մազերդ թափած կանգնել ես: Տունն էլ կարգի բեր:

– Աղջիկը մտավ նախասենյակ՝ դուռը դիտմամբ բաց թողնելով. հասկացավ՝ իր մասին են խոսելու:

Քեռի Ստեպանը՝ մի բարեհոգի, ուրախ մարդ, փորձ արեց փափկեցնել մայրիկի խիստ սիրտը:

– Հանգիստ թող աղջկան: Արդեն յոթ տարեկան է: Բավական է փեշդ բռնած ման գա: Ոչ մի ուրախ հանդեսի չի եղել: Զէ որ տոն է՝ խոտհունձն է սկսվել: Մոտակա բոլոր գյուղերից հավաքվելու են անտառի պուրակում: Շրջանից արտիստներ են գալու: Գյուղխորհուրդը մեզ համար է ջանում:

– Այն էլ ինչպես է ջանում, վերևից ստացված հրահանգով,– կտրուկ ընդհատեց նրան քույրը:– Զատկին՝ ցանքի սկիզբը, Աստվածածնի Վերափոխմանը՝ հնձի սկիզբը, Խաչվերացին՝ հնձի ավարտը: Բա՛ց աչքերդ, Ստեպան: Դա բոլորովին էլ խոտհնձի տոնը չէ, այլ սատանայի և նրա գործակալների հաղթանակը: Նրանք ամեն ջանք թափում են, որ մոռանանք Աստծուն: Եկե-

ղեցիները քանդել են, հիմա էլ ուզում են սուրբ տոներից մեզ զրկել՝ զբոսանքներով են զբաղեցնում. Վասյան քո որդին է, ես իրավունք չունեմ արգելելու, դու ինչ ուզում ես՝ արա, իսկ աղջկաս չպղտորես,– ասաց՝ ասես կտրեց, Լուկերիան։

– Կամքը քոնն է,– հոգոց քաշեց եղբայրը և անհետացավ դարպասի դռնակի ետևում։

Այդ տարօրինակ վեճի ամեն մի խոսքը մխրճվեց մանկական հիշողության մեջ, թեև Զինան միայն մի բան հասկացավ՝ զբոսանք չի տեսնի։

– Մի՛ տխրիր, Զինուլյա։ Գիտե՞ս ինչ տոն է՝ Հոգեգալստյան տօն է,– փորձում էր հանգստացնել մայրիկը՝ գոգնոցով սրբելով նրա աչքերը։– Մեր տուն հյուրեր են գալու։ Մենք էլ երգելու ենք և թեյ ենք խմելու։ Երբ քնած էիր, ես թխվածք եմ պատրաստել, քո սիրած ռոգալիկները, կաղամբով և սունկով կարկանդակներ...

Զինան լուրջ տեսքով հետևություն արեց.

– Նրանք իրենց տոնն ունեն, իսկ մենք՝ մերը։

– Զէ՛ աղջի՛կս, Հոգեգալստյան տոնը մեր ընդհանուր տոնն է՝ եկեղեցու ծննդյան օրը։ Եվ բոլորը պետք է միասին լինեն, ոչ թե պուրակում, այլ եկեղեցում։ Մոր ծննդյան օրը տնից չեն փախչում։

– Բայց մենք գյուղում եկեղեցի չունենք։

– Եկեղեցին քանդված է՝ սրբությունը հոգումդ պահիր։

Մայրիկը նայեց կարմիր անկյան մեծ սրբապատկերին՝ խնամքով զարդարված ձեռագործ սրբիչով ու թարմ ծաղիկներով, և խաչակնքեց։

Զինան գլխով արեց և, քիթը վեր քաշեց, սկսեց կարգի բերել սենյակը։ Բայց քեռի Ստեպանի նկարագրած գյուղական տոնի տեսարանը ոչ մի կերպ գլխից դուրս չէր գալիս։ Նա պատկերացնում էր շրջկենտրոնից եկած և տոնականորեն հագնված արտիստներին, կրպակը՝ տարբեր տեսակի համեղ ուտելիքներով և համընդհանուր ուրախությունը։

Զինան սպասեց մինչև մայրը փողոց դուրս եկավ, և բացեց պահարանը։ Ենթարկվելով տագնապալից, անհասկանալի զգացումին՝ նա շուրջը նայեց։ Սրբապատկերից խիստ նայում էին Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված։

Վախն իր մեջ խլացնելով՝ փոքրիկ աղջիկը տոնական հագուստով վազում էր անտառի կողմը։ Զինան առաջին անգամ խախտեց մոր կամքը, իսկ դա նշանակում էր՝ նաև Աստծո կամքը։ Սպասվող ճանապարհը նրան չէր վախեցնում՝ Զինան անտառը լավ էր ճանաչում։ Ահա արահետը, որով այնքան են դաշտ գնացել։ Ահա մորուտը, որտեղ մայրիկի հետ մորի են հավաքել։ Ահա պատերազմից մնացած խրամատը, որտեղ Վասյայի հետ պահմտոցի էին խաղում, երբ քեռի Ստեպանը սունկի գնալիս նրանց իր հետ էր տանում։

Գնալով փոշոտ ճանապարհով, ցանված դաշտերի երկայնքով՝ Զինան երաժշտություն լսեց: Մոտենալով կեչիների պուրակին՝ նա զարմացած կանգ առավ: Մարդ շատ կար, նույնիսկ ավելի շատ, քան թաղումների ժամանակ, երբ ամբողջ գյուղն էր հավաքվում կամ երբ սկսվում էր հնձի շրջանը: Բացատի կենտրոնում կանգնած էր կողերը իջեցրած մի բեռնատար, որը բեմ էր ծառայում: Սակայն լայն թիկունքների ետևից Զինան ոչինչ չէր կարող տեսնել: Մեքենայից ոչ հեռու՝ հենց խոտի վրա, տեղավորվել էին կանայք և տղամարդիկ: Աղջիկը տեսավ քեռի Ստեպանի աչքի ընկնող կազմվածքը և ուրախ վազեց դեպի նա:

– Օ՜, Զինոչկա, ինչ է, մայրդ մտափոխվե՞ց: Ինչ է քեզ տոն օրը փակի տակ պահում,– ուրախ ասաց քեռին և դավադրաբար աչքով արեց:

Աղջիկը շփոթված կարմրեց, բայց Ստեպանը նրան արդեն ներկայացրեց իր ընկերներին.

– Զարմուհիս է, Լուկերիայի աղջիկը: Կողքիցս չհեռանաս,– ասաց քեռին,– տե՛ս, այստեղ կարելի է կորել:

Բայց այդ պահին մի նոր բաժակաճառ հնչեց «կանաչ ծովերի ղեկապետերի» մասին, և գինովցած Ստեպանը մոռացավ աղջկան: Նա ընկերներին տաք-տաք պատմում էր, թե ինչպես է իր մոտից մի ինչ-որ «կուրբյուրատուր»* ինչ-որ տեղ թռել: Զինան

* Մեքենայի կարբյուրատորի՝ գազարարի, մասին է ակնարկը *(ծնթ. խմբ.)*:

սկսեց ձանձրանալ և որոշեց փնտրել Վասյային՝ իր քեռու տղային:

Ման գալով ուրախացողների խմբերի միջև, նա հասավ կրպակին: Բայց գրպանները դատարկ էին, և աղջկան մնացին միայն հոտերը: Նվագախումբը որոտում էր: Ինչ-որ տեղ անհավասար երգում էին սառնամանիքի և ձիու մասին՝ խլացնելով երգիչներին: Գլուխը դժժում էր աղմուկից, իսկ փորը՝ քաղցից ղողղում: Ոչ մեկի պետքը չէր, թե նա ինչ վիճակում է: Զինան կարոտով հիշեց կարկանդակները և մայրիկին, ում ինքը խաբեց: Նա անհամբեր ուզեց տուն գնալ:

Հանկարծ անսպասելի վրա հասած ամպը ծածկեց արևը: Սարսափելի կայծակը ճեղքեց երկինքը: Ամպրոպը այնպիսի ուժով հարվածեց, որ Զինան գոռաց ու ընկավ գետնին: Վախից դողալով՝ նա կուչ եկավ մեքենայի տակ: Անձրևի խոշոր կաթիլները, հարվածելով մետաղին, անասելի աղմուկ էին հանում: Մարդիկ խուճապի մեջ ծածկ էին փնտրում միմյանց հրելով և գետին գցելով: Մի տղամարդ, հավանաբար իր աղջկան փնտրելիս, բռնեց Զինային և կտրուկ շրջեց դեպի իրեն: Նրա խելակորույս դեմքն այնպես վախեցրեց Զինային, որ նա ինչքան ուժ ուներ՝ նետվեց դեպի տուն: Բայց վազելը դժվար էր, քանի որ ճանապարհը արագորեն ցեխապատվեց: Ոտքերը խրվում էին ցեխի մեջ: Զինոչկան ընկնում էր, վեր էր կենում և նորից վազում:

Անտառում ջուրն արդեն համարյա նրա ծնկներին էր հասնում: Ահավոր եղանակը մշուշել էր աչքերը: Հանկարծ աղջիկը սայթաքեց և գլխով ընկղմվեց ջրի տակ: Ջանալով դուրս գալ՝ նա ջղաձիգ կերպով բերանով օդ էր կլանում, չհասկանալով, որ գտնվում է ջրով լի խրամատում:

Մայրը, նկատելով Զինայի անհետացումը, գնաց փնտրելու նրան:

Վատ լուրերը ավելի շուտ են տեղ հասնում, քան լավերը:

– Քո Զինուշկան խրամատում խեղդվել է,– լսեց Լուկերիան և նետվեց դեպի խրամատը, աղերսելով. «Սուրբ Երրորդությո՛ւն, փրկի՛ր»:

... Աղջիկը նստել էր խոտերի վրա և ցրված նայում էր շուրջը՝ ցնցումից դեռևս ուշքի չեկած:

– Փառք Աստծո, կենդանի ես,– հազիվ արտաբերեց Լուկերիան՝ կրծքին սեղմելով դստերը:

...Այդ օրվանից անցել է քառասուն տարի, իսկ Զինաիդան հիշում է 1965 թվականի այդ ամառային օրը՝ կարծես երեկ էր: Հիշում է, թե ինչպես էին մայրիկի հետ ծնկաչոք լալիս Սուրբ Երրորդության սրբապատկերի առաջ: Զինուշկան աղաչում էր Աստծուն իրեն ներել անհնազանդության և չլսելու համար: Մայրիկը շնորհակալություն էր հայտնում դստերը փրկելու և խրատելու համար:

Վալեշկան

Երբ Վալեշկան շատ փոքրիկ էր, նա հաճախ խնդրում էր մորը.

– Մայրիկ, ինչ կլինի՝ ինձ համար քույրիկ կամ եղբայր գնիր, ինչ կլինի՝ գնի՛ր:

Մայրը միայն ծիծաղում էր և դստերը բերում էր հերթական տիկնիկը:

Վալեշկայի փոքրիկ սենյակը լիքն էր տիկնիկներով, թավշյա գազանիկներով, մեքենաներով: Երբ խաղալիքների մի մասը ձանձրացնում էր, անմիջապես հայտնվում էին նորերը: Ծնողները՝ Անդրեյ Սերգեևիչը և Լիդիա Միխայլովնան դրամ չէին խնայում իրենց միակ աղջկան նվեր առնելու համար: Նրանցից ետ չէր մնում նաև Պետյա պապիկը: Միայն Կատյա տատիկն էր, զննելով հերթական գնումը, օրորում գլուխը.

– Երես կտաք աղջկան, կփչացնեք:

Թոռնիկի սենյակը հավաքելիս տատիկը, հոգոց հանելով, ասում էր.

– Այսքան խաղալիքն ինչ ես անում: Կեսը բաժանեիր բակի երեխաներին: Նրանք քեզանից շնորհակալ կլինեն:

Ի պատասխան՝ Վալեչկան փքում էր շուրթերը և մտածում էր. «Տատիկը ծիծաղելի է: Ինչպե՞ս իմը տամ ուրիշներին»:

Երբ նա բակ էր դուրս գալիս նոր խաղալիքը ձեռքին, փոքրիկները շրջապատում էին նրան և խնդրում էին իրենց էլ տալ՝ խաղալու, բայց Վալեչկան կրկնում էր միևնույն նախադասությունը.

– Չե՛մ տա: Հանկարծ կջարդես, թանկ խաղալիք է:

Կատյա տատիկը, ինչպես պապիկը, պատերազմի մասնակից էր, բայց կորցրել էր փաստաթղթերը: Դրանց վերականգնման համար վկաներ էին պետք. իսկ նրանց հիմա որտեղից գտնես: Այնպես որ տատիկի թոշակը քիչ էր:

Գուցե դա էր պատճառը, որոշեց Վալեչկան, որ տատիկն իրեն խաղալիք չէր գնում: Այդ պատճառով նա տատիկին ավելի քիչ էր սիրում, քան Պետյա պապիկին, թեև գտնում էր, որ տատիկը տանը նույնպես պետք է, թե չէ իր համար ո՞վ շիլա կպատրաստի և այգի կտանի: Բացի դրանից, Կատյա տատիկը ամբողջ ընտանիքի համար նախաճաշ, ճաշ, ընթրիք էր պատրաստում և համեղ թխվածքներ թխում:

Մայրիկը չէր աշխատում, հայրիկը չէր թողնում, ասում էր՝ ավելի լավ է՝ զբաղվես աղջկանովդ: Եվ մայրիկը Վալեչկային զարդարում էր ժանեկավոր, գեղեցիկ ժապավենազարդ զգեստով, իր հետ խանութ, սրճարան, վարսավիրանոց տանում: Այդ զբոսանքները դուր էին գալիս դստերը:

Դպրոցում միջակ էր սովորում: Մտերիմ ընկերուհիներ չուներ, թեև փորձում էր ընկերանալ աղջիկների հետ, որոնցից կարելի էր արտագրել տնային առաջադրանքները: Ավարտելով դպրոցը՝ վերապատրաստողների օգնությամբ Վալեչկան ընդունվեց համալսարանի իրավաբանական ֆակուլտետի վճարովի բաժինը:

Այդ ժամանակ դժբախտություն պատահեց՝ մահացավ Պետյա պապիկը: Թաղումից հետո թոռնիկը տատիկին համոզեց սենյակները փոխել. տատիկը գնա Վալեչկայի փոքրիկ սենյակը, իսկ Վալեչկան՝ տատիկի մեծ սենյակը: Ծնողները աղջկա առաջարկին հավանություն տվեցին. «Ինչ էլ չլինի՝ Վալյան հիմա ուսանող է, ընկերուհիները կգան, հետո էլ՝ տղաներ: Նրանք հիմա ոչ միայն աղջկան են նայում, այլև թե ինչ սենյակում է նա ապրում»:

Շուտով Վալեչկան հայտարարեց, որ ամուսնանում է Սլավիկի հետ: Սլավիկը նրանից վեց տարով մեծ էր: Որտեղ էր աշխատում փեսացուն՝ ոչ մեկը չգիտեր, բայց ձեռքին փող լինում էր: Պարզելու ժամանակ չկար, Վալեչկան հղի էր:

Ծնվեց նրա տղան՝ Կոստիկը: Նրա ծննդից համարյա անմիջապես հետո նորապսակները սկսեցին վիճել. նրանցից ոչ մեկը չէր ուզում գիշերը աթնանալ տղայի համար: Ցերեկն էլ Վալեչկան աշխատում էր Կոստիկին թողնել մոր կամ տատիկի վրա, իսկ հանգստյան օրերը՝ նաև Սլավիկի վրա: Նա վրդովվում էր և կտրականապես հրաժարվում էր որդուն դայակություն անել: Վեճերը կռիվ դարձան: Եվ ահա հնչեց սպառնալից «կբաժանվեմը»:

Վալեչկան, սենյակը կորցնելու վախից (Սլավիկը գրանցված էր նրանց տանը և, իհարկե, բնակմակերես կպահանջեր), արագ ելքը գտավ: Նա տատիկին հայտարարեց, որ պետք է շեղվել պապիկի մասին տխուր մտքերից: Դրա համար Կոստիկի մահճակալը պետք է տեղափոխել նրա սենյակ. ինչը և արվեց:

Նորապսակների միջև դարձյալ խաղաղություն և համերաշխություն հաստատվեց:

Կատյա տատիկը սիրեց ծոռանը, նրան էր տալիս իր սիրտը և ուժերը: Կոստիկը նույնպես կապվեց նրան: Անցան տարիներ: Տղան արագ էր մեծանում. նրան նեղում էր տատիկի ներկայությունը սենյակում: Երբ դպրոցական ընկերները գալիս էին նրա մոտ, տատիկը գնում էր խոհանոց:

Վալեչկան գտնում էր, որ տատիկը Կոստիկին խանգարում է պարապել: Բացի դրանից, նրա սենյակի պատերին շատ սրբապատկերներ կային, և Կատյա

տատիկը ոչ միայն ինքն էր աղոթում, այլև Կոստիկին էր սովորեցնում: Եվ մի անգամ, երբ տատիկը տանը չէր, Վալեչկան և Սլավիկը նրա բազմոցը, իրերը և սրբապատկերները քարշ տվեցին խոհանոց:

Երբ տատիկը վերադարձավ, Սլավիկն ասաց.

– Ահա, Կատյա տատ, այստեղ քեզ համար ավելի հանգիստ կլինի և Կոստիկին էլ նեղվածք չի լինի:

Կոստիկը, տեսնելով տատիկի տեղափոխությունը, մռայլ հարցրեց մորը:

– Այս ի՞նչ եք արել, տատիկին խոհանո՞ց:

– Էլ ո՞ւմ,– դժգոհ հարցրեց Վալեչկան:– Միևնույն է, նա ամբողջ օրը խոհանոցում է:

– Իսկ ինչո՞ւ դու չես պատրաստում,– զարմացավ որդին,– կամ Լիդիա տատիկը:

– Մեծերի գործին մի՛ խառնվիր,– որդու վրա գոռաց Վալեչկան և դուրս եկավ սենյակից՝ շրխկացնելով դուռը:

Կոստիկը տեսավ, որ տատիկի համար խոհանոցում ավելի վատ էր, քան առաջ, երբ միասին էին ապրում: Անդրեյ Սերգեևիչը և Սլավիկը վաղ էին վեր կենում, նախաճաշ էին պատրաստում: Նրանք բարձրաձայն քննարկում էին ֆուտբոլային նորությունները, անեկդոտներ էին պատմում՝ տատիկի վրա ուշադրություն չդարձնելով, որը քնած էր ձևանում: Խղճալով տատիկին՝ Կոստիկն սկսեց ավելի հաճախ մտնել նրա մոտ խոհանոց, օգնում էր ճաշ պատրաստել, խանութ էր

վազում, պատմում էր իր դպրոցական գործերի մասին: Իսկ նա Կոստիկին լուսավոր շողիկ էր անվանում:

Մի անգամ, Հաղթանակի Օրը, հանդիսավոր ժողովին հրավիրեցին պատերազմի մասնակիցներին: Եվ տատիկն այնտեղ, ո՞վ հրաշք, հանդիպեց իր նախկին ճակատային հրամանատար Ֆյոդոր Իվանովիչին, որ արդեն գեներալ էր և Վետերանների խորհրդի նախագահը: Ֆյոդոր Իվանովիչը գրկեց և համբուրեց բուժքույր Կատյուշային:

– Ինչքա՜ն մարդ է նա փրկել,– պատմում էր գեներալը,– ինձ էլ է վիրավոր վիճակում դուրս բերել կրակի բերանից:

Եվ այդտեղ Կատյա տատիկը, որ պատերազմում այնքան անվախ էր եղել, արտասվեց և Ֆյոդոր Իվանովիչին պատմեց ամուսնու մահվան և իր անուրախ կյանքի մասին:

– Ոչինչ, կպարզենք ինչն ինչոց է,– հանգստացրեց գեներալը և տոնակատարությունից հետո գնաց նրա տուն:

Երբ գեներալը, ամբողջ կուծքը շքանշաններով և Խորհրդային Միության Հերոսի աստղով ծածկված, տուն մտավ տատիկի հետ, բոլորը իրար խառնվեցին:

– Դե՛, ցո՛ւյց տուր, թե որտեղ ես ապրում: Ուզում եմ տեսնել, թե ինչպես են հոգ տանում քո մասին աղջիկդ ու թոռնիկդ:

Եվ շփոթված Կատյա տատիկը նրան տարավ խոհանոց, որտեղ դրված էր նրա փոքրիկ բազմոցը:

Դիտելով երեք սենյակները, որոնցից երկուսը զբաղեցնում էին դուստրը և թոռնիկն իրենց ամուսիններով, իսկ երրորդում տեղավորված էր ծոռնիկ Կոստիկը, գեներալը զայրացավ.

– Ինչպե՞ս,– որոտում էր նրա ձայնը,– տղային առանձին սենյակ, պատերազմի հերոսուհուն՝ բնակարանի տիրուհուն՝ խոհանոց: Ձեզ ամաչում: Ես ձեր մասին թերթում կգրեմ, դատի կտամ:

Ծնողները փորձում էին արդարանալ, Սլավիկը լռում էր, և միայն Վալեչկան ձայնը բարձրացրեց գեներալի վրա.

– Ո՞վ է ձեզ թույլ տվել խառնվել ուրիշի կյանքին: Մենք ինքներս գլուխ կհանենք: Իսկ դատարանով մեզ մի՛ վախեցրեք. այստեղ բոլորը գրանցված են և բնակմակերեսի իրավունք ունեն:

Տեսնելով, որ խոսքերով այստեղ ոչինչ չես փոխի, Ֆյոդոր Իվանովիչը հեռացավ, խոստանալով անպայման վերադառնալ: Նրանից երկար ժամանակ լուր չկար, և Վալեչկան, մտնելով խոհանոց, ծաղրաբար ասում էր.

– Դե, ո՞ւր է քո գեներալը: Երևում է՝ մոռացել է քո գոյության մասին:

Տատիկը լռում էր:

Երկու ամսից Ֆյոդոր Իվանովիչը, այնուամենայնիվ, երևաց: Նա իր Կատյուշային հանձնեց մեկսենյականոց բնակարանի օրդերը և վերականգնված փաստաթղթերը՝ պատերազմի վետերանի թոշակ ստանալու համար: Ինքն էլ օգնեց նրան տեղափոխվել:

Նոր բնակարանում նրան այցելում էր միայն ծոռը: Նա օգնում էր տնտեսության մեջ, խանութ էր գնում: Հաճախ դպրոցից հետո Կոստիկն անմիջապես տատիկի մոտ էր գնում:

Մի անգամ տատիկին այցելեց Վալեչկան: Նա երկար բողոքում էր անշնորհակալ որդուց, որ համարյա տանը չի լինում, գալիս է միայն գիշերելու: Հարաբերությունները Սլավիկի հետ վատացել են: Տատիկի մեկնումից հետո ճաշերը պատրաստում է Լիդիա Միխայլովնան՝ Վալեչկայի մայրը: Նրա պատրաստածները Սլավիկին դուր չեն գալիս. նա ետ է հրում ափսեն և կռվում է, իսկ հետո սովորություն է դարձրել ճաշեց ռեստորանում: Փողը չի բավականացնում:

Վալեչկան խնդրեց, որպեսզի տատիկը իր վրա ձևակերպի բնակարանը: Նա խոստանում էր հոգ տանել նրա մասին, երբ բոլորովին ծերանա: Սակայն տատիկը մերժեց, քանի որ բնակարանն արդեն կտակել էր Կոստիկին: Նա միշտ օգնել է իրեն, և հիմա էլ, փառք Աստծո, իրեն միայնակ չի թողնում:

Բեկում

Դժվար է հաղորդել, թե ինչ ապրեցի ես այն պահին, երբ ամուսինս, մեր միակ աղջկա՝ Նաստյայի ամուսնությունից հետո հայտարարեց, որ գնում է մեկ ուրիշի հետ ապրելու: Մենք միասին ապրել ենք ոչ ավել, ոչ պակաս՝ քսաներեք տարի: Ես սիրում էի իմ ամուսնուն և կուրորեն հավատում էի նրան՝ չնկատելով մոտեցող աղետի ակնհայտ նախանշանները: Այն ամենը, ինչ զգում էի այն ժամերին և օրերին, երբ նա հավաքում էր իրերը և մենք կիսում էինք (կյանքի դաժան ճշմարտություն) մեր ունեցվածքը, բաժանվում էինք, ինձ հիմա ծանր երազ է թվում:

Ես լալիս էի: Աղաչում էի դա չանել: Խնդրում էի: Տեսարաններ էի սարքում (ավաղ): Սպառնում էի: Ժամանակ էի ձգում: Բայց ամեն ինչ զուր էր: Ամուսինս անդրդվելի էր: Այնտեղ, այս քաշքշոցից այն կողմ, նրան սպասում էր սլացիկ ոտքերով և փարթամ կրծքով մի քսանամյա գեղեցկուհի՝ Էվելինա անունով, շեղադիր, կանաչ աչքերով, սևաթույր, առատ մազերով, ասես մոդայիկ ամսագրի շապիկից իջած լիներ:

Այդ երիտասարդ պչրուհու հետ մրցակցությանը չէի դիմանում. նա շքեղ մեքենա ուներ (հայրիկն էր նվիրել), ափի մեջ տեղավորվող փոքրիկ շնիկ և ժամանակակից երիտասարդ աղջկա պիտույքներ:

Ես քառասուներեք տարեկան էի, փոքրամարմին և գիրուկ, կարճատես, կուրծքս հարթ կատվի նման և ոտքերիս երակները լայնացած, գործազուրկ էի, քանի որ վերջին տասը տարիներին տնային տնտեսությամբ էի զբաղված: Եվ նույնիսկ անունս էր շատ սովորական՝ Տատյանա:

Պաշտոնական ապահարզանից հետո ես կարծես քարացել էի: Ինձ մնաց երեքսենյականոց բնակարանը և ամառանոցը, ինչպես նաև կահույքը և այլ տնային ունեցվածք, որ կուտակել էինք երկար տարիների համատեղ կյանքի ընթացքում: Մեքենան և քաղաքամերձ տունը, որ նախկին ամուսինս ժառանգություն էր ստացել ծնողներից, նա վերցրեց իրեն: Այդպիսով էլ բաժանվեցինք:

Այդ ամիսների միակ մխիթարությունս դուստրս էր՝ Նաստենկան: Նա ամուսնու հետ գալիս էր ինձ մոտ, իր ուրախությամբ և էներգիայով վարակելով ինձ: Նաստյան հորից ժառանգել էր բաձր հասակ, սպորտային սլացիկ կառուցվածք, իսկ ինձանից՝ շիկագանգուր մազեր և կապույտ, կարճատես աչքեր: Բայց հենց որ երիտասարդները գնում էին, ես ճնշվում, լալիս էի, տխրում և տեղս չէի գտնում:

Գիշերները չէի կարողանում քնել: Աչքերիս տակ մուգ շրջանակներ հայտնվեցին: Ես աղմուկից կամ ճչոցից կտրուկ ցնցվում էի: Նյարդայնությունս այն վիճակին հասավ, որից հետո սկսվում է հիվանդությունը: Ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը հանգիստ չունեի: Ներքին անտեսանելի կրակն այրում էր հոգիս: Անտանելի և սոսկալի ցավը տանջում էր ինձ և ստիպում ժամանակառ ժամանակ նողկալի արարքներ գործել: Օրինակ՝ երբ նախկին ամուսինս զանգում էր, նրա հետ չէի կարողանում հանգիստ խոսել, պոռթկում էի, կոպտում, շպրտում խոսափողը: Շատ անգամ պատկերացնում էի սոսկալի վրեժ դավաճան ամուսնուցս. մտովի այրում էի նրա տունը և ջարդում մեքենան: Այդ հիվանդագին երևակայությունները կարծես ինձ մի փոքր մխիթարում էին, բայց հասկանում էի, որ այդ զգացողությունը խաբուսիկ է: Միայն ավելի ու ավելի էր բորբոքում իմ հոգեկան վերքը:

Եվ վաղուց արդեն ինձ հարց չէի տալիս, թե ինչն էր այդ ամենի պատճառը: Պարզապես չէի կարողանում ոչ մի կերպ հանգստանալ: Ջանում էի աղոթել, գնում էի եկեղեցի: Խոստովանում էի և հաղորդություն ստանում, բայց ցավը ինձ չէր թողնում, միայն մի փոքր հանդարտվում էր:

Ծանոթներիս և ընկերուհիներիս խորհուրդները չորս կողմից ինձ վրա էին թափվում՝ ինչպես հայելի արտացոլելով նրանց ներքին աշխարհը: Գնա աշխա-

տի՛ր։ Հանգստացի՛ր ծովում։ Սիրեկան, շուն (կատու, թութակ պահի՛ր...)։ Փոխիր ոճդ։ Գրիր քո տառապանքների մասին։ Բայց այդ բոլոր առաջարկություններն անիմաստ էի համարում, որովհետև որևէ նոր բան չէի ցանկանում, միայն վերադարձնել հինը, իսկ դա անհնար էր։

Իմ ընտանիքը քանդվել էր։ Այն աշխարհը, ուր ապրում էի երջանիկ ու անհոգ, փլուզվեց։ Երբեմն ինձ թվում էր, որ, երևի, այս աշխարհը ես շատ էի սիրում, և այդ պատճառով Տերը ինձնից այն վերցրեց։ Բայց ես ոչ մի կերպ չէի համակերպվում դրա հետ։

Մի անգամ, շաբաթ օրը վաղ առավոտյան իմ բնակարան ներխուժեցին աղջիկս և փեսաս։ Նրանք ինձ արթնացրին և ստիպեցին իրենց հետ գնալ լճափ, անտառի խորքերը, թավուտները։ Իմ առարկություններին նրանք միաձայն պնդում էին. «Գնում ենք և վե՛րջ։ Եվ դու էլ մեզ չես խանգարի»։

Օրը արևոտ էր ու շոգ։ Մենք երեք ժամ թափառում էինք ինչ-որ անտառային ճանապարհներով, մինչև դուրս եկանք մի բարձր զառիթափ, որից բացվում էր սոսիներով և եղևնիներով շրջապատված կապուտակ լճի մի հոյակապ տեսարան։ Նաստյան և Միշան արագ վրան խփեցին, խարույկ վառեցին, մի երթային պարզ կերակուր պատրաստեցին։ Ես հաճույքով նայում էի, թե ինչ ախորժակով էին նրանք կուլ տալիս այդ կերակուրը։ Նույնիսկ մոծակները մեզ շատ չէին անհանգստացնում։

Ես հիշեցի իմ երիտասարդությունը և այն, թե ինչպես նախկին ամուսնուս հետ բնության գիրկն էինք գնում։ Արցունքը հոսեց աչքերիցս, աղջիկս, նկատելով դա, գրկեց ինձ և երգեց տատիկի սովորեցրած երգը։ Նրանում խոսվում էր մարտում ընկած մի երիտասարդ քաջի մասին, թե նրա վրա ինչպես էին ողբում երեք ծիծեռնակներ, որոնք խորհրդանշում էին մորը, քրոջը և կնոջը։ Այդ երգում կինն իր ամուսնուն ողբում էր մի օր միայն՝ մինչև երեկո։ Ընդամենը։

Հետո մենք Նաստյայի հետ սունկ հավաքեցինք, իսկ նրա ամուսինը գնաց ձուկ որսալու։ Մուգ-շագանակագույն թավշյա գլխիկներով սունկերը մեզ էին սպասում եղևնուտում, իսկ կեչիների տակ թաքնված էին կարմրագլխիկները։ Այնքան շատ սունկ կար, ես նույնիսկ զարմացա այդ առատությունից։ Մենք կտրում էինք ամենաթարմերը։ Այդտեղ, հոյաշուք անտառում, ամառային թարմ քամուն Նաստյան ինձ խոստովանեց, որ յոթ ամսից մայր է դառնալու։

Ես ընկա մամռակալած կոճղին և հեկեկացի։ Ուրախությունից։ Ցավից, դեռևս հոգիս կրծող ցավից։ Ես երկար լացեցի։ Նաստյան նստել էր կողքիս և հանգստացնում էր ինձ։ Այդ ամբողջ ժամանակ առաջին անգամ ես մտածեցի՝ ինչ լավ դուստր ունեմ։ Բարի, քնքուշ, զգայուն։ Աննկատելիորեն մեծացավ՝ առանց լուրջ խնդիրների։ Ահա նա մայր է դառնալու, իսկ ես՝ տատիկ։ Ես արցունքների միջից ժպտում էի։

Երեկոյան մենք ընթրեցինք՝ սունկ կարտոֆիլով և համեղ ձկնապուր, որ ամուսնու ղեկավարությամբ պատրաստել էր Նաստյան ինչ-որ յուրահատուկ բաղադրատոմսով: Հետո ես գնացի փչովի նավակով պտտվելու լճում, իսկ երիտասարդները մնացին խարույկի մոտ:

Ջուրը տաք էր, հայելանման հարթ, որի մեջ արտացոլվում էին աստղերը: Ես ափից հեռացա և պառկեցի նավակի հատակին՝նայելով երկնքի մուգ թավշին՝ ծածկված բազում հեռավոր արևներով: Նավակը թեթևակի տատանվում էր, և ես ինձ անկշռության մեջ էի զգում: Թվում էր՝ շուրջս ամենուր՝ և՛ վերևում, և՛ ներքևում, աստղերն են շողում: «Կարծես Տիեզերքի արարման առաջին օրերն են»,- մտածեցի ես: Եվ հանկարծ հասկացա, թե որքան չնչին են իմ տանջանքները Արարչի մեծության և Նրա ստեղծագործության համեմատ:

Այդ անիմանալի պահին, Տիրոջ հրեշտակը երևի ինձ շշնջաց մի նվիրական գաղտնիք, որն անտեսանելի և անլսելի է քաղաքային կյանքի թոհուբոհում: Հոգիս երկինք սլացավ: Ո՛չ դեպի այս շողաշչակ աստղազարդ անհունը, այլ այն անտեսանելի վերին աշխարհը, որը մենք կարող ենք միայն կանխազգալ: «Տե՛ր, օգնի՛ր ինձ, օգնի՛ր...» - շշնջում էի ես: Եվ հանկարծ ինձ թեթևացած և ազատ զգացի: Անցյալը կարծես պոկվում էր ինձանից և հեռանում՝ իր հետ տանելով

չիրականացած հույսերը, ցավագին հիշողությունները, վիշտը, վախերը:

Անտառի զբոսանքից հետո շուտով աշխատանքի տեղավորվեցի: Շուն վերցրեցի՝ փոքրիկ, շեկ, անհայտ ցեղատեսակի, բայց շատ բարի և հասկացող: Ինձ մոտ սկսեց ապրել մի կատու, որ փողոցում իմ ետևից եկավ մինչև մուտքը: Նա իմ ետևից համարձակ մտավ բնակարանս, այդպես էլ մնաց այնտեղ:

Ես վերընթերցեցի իմ գրադարանի ողջ դասական գրականությունը, որ այդքան տարի անօգուտ փոշոտվում էր դարակների մեջ: Ինձ հատկապես ցնցեցին Զոսիմա ծերի խոսքերը Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպից. «Երկրի վրա շատ բան մեզանից ծածկված է, բայց դրա փոխարեն մեզ շնորհված է այլ աշխարհի, երկնային և վերին աշխարհի հետ մեր կենդանի կապի անմեկին, նվիրական զգացողությունը»:

Ես սպասում եմ թոռնիկի կամ թոռնուհու: Եվ աղոթում եմ Տիրոջը երեխայի և դստերս համար:

Կնոջ բախտ

Ապրում էր մի կին։ Անունը՝ Պոլինա։ Քառասուն-հիսուն տարեկան էր։ Փոքրահասակ, մի քիչ լիքը, միշտ կոկիկ և ձգված։ Նրանից սովորաբար դեղերի հոտ էր գալիս, քանի որ Պոլինան տեղի հիվանդանոցում բուժքույր էր աշխատում։

Երիտասարդ տարիներին շատ սիրունատես էր եղել։ Բարեկազմ էր, շագանակագույն աչքերով, փարթամ, սեփ-սև մազերով՝ հյուսված երկու հաստ հյուսերով։ Տարիների հետ նա գիրացել էր, ճերմակել, դեմքին կնճիռներ էին հայտնվել, բայց միևնույն է՝ առանց չափազանցության նրան կարելի էր գեղեցիկ համարել։

Աշխատակիցները հաճախ հարցնում էին. «Պոլյա, իսկ ինչո՞ւ չես ամուսնանում։ Դե, քեզ հետ ցանկացած մեկը կամուսնանա. միայն թե գրավես նրան». դրան Պոլինան տխուր ժպտում էր և ճոճում գլուխը։ Իսկ երբեմն էլ պատասխանում էր. «Արդեն ուշ է։ Երիտասարդ տարիներին հնարավորություն բաց թողեցի, իսկ հիմա ախր հարմար փեսացուներ էլ չկան»։

Նրա ընտանիքը բակի ծեր շունն ու երկու կատուներն էին։ Կատուները պարբերաբար ձագեր էին բերում, որոնց ստիպված տեղավորում էր հարևանների մոտ, երբեմն էլ քաղաք էր տանում՝ շուկայում բաժանելու։

Մի ժամանակ Պոլինան ապրում էր ծնողների հետ, բայց արդեն հինգ տարի էր, որ մայրը և հայրը հանգչում էին մոտակա հին գերեզմանատանը։

Պոլինայի տունն ընդարձակ էր, բայց խարխլված, որը, ինչպես և այգին, անդադար խնամք էր պահանջում։

Այսպես անցնում էին օրերը։ Փոխվում էին տարվա եղանակները։ Ծեր այգում ծաղկում էին խնձորենիները, նրանց ծաղկաթերթիկները թափվում էին գետնին, հետո պտուղներ էին տալիս, դրանք մեծանում էին, հասունանում և ծանր հարվածով ընկնում գետին։ Զմռանը Պոլինան մթերանոցից խոշոր անտոնովկա խնձորներ էր բերում, հոտ էր քաշում՝ վայելելով ուշ աշնան բույրերը, և երազում էր ապագա ամռան մասին։

Երիտասարդ տարիներին նրան մի տղամարդ էր սիրում, բայց նրանց հարաբերությունները հարսանիքի չհասան էլ։ Նրանք բաժանվեցին։ Հետո Պոլինայի մայրը ծանր հիվանդացավ, նրա հետևից էլ՝ հայրը։ Երիտասարդ կինն աշխատում էր, հիվանդ ծնողներին հոգ տանում, տնային տնտեսությունն էր վարում։ Օրերը դառնում էին շաբաթներ, շաբաթները՝ ամիսներ, իսկ ամիսներն էլ՝ տարիներ։ Տղամարդկանց հետ հանդիպելու համար ժամանակ չէր մնում։ Նրանք էլ,

ընդ որում, ազատ հարաբերություններ էին ուզում, բայց՝ ոչ ամուսնություն: Դա Պոլինայի համար անընդունելի էր. և՛ ինքը, և՛ նրա ծնողները հավատացյալ մարդիկ էին:

Մի անգամ, վաղ գարնան առավոտյան ժամին նա արթնացավ իր ծեր շան բարձր և կատաղի հաչոցից: Պոլինան պատուհանից դուս նայեց, բայց ոչ մեկին չտեսավ: Առավոտն ամպամած էր, անձրև էր տեղում: Դուրս գալով սանդղամուտք, նա մի փաթեթ նկատեց: Զգուշավորությամբ այն բացելով՝ Պոլինան նորածնի մի փոքրիկ կնճռոտված, կարմիր դեմք տեսավ:

Պոլինան շփոթվեց: Արագ վերցրեց երեխային, վազելով տուն մտավ, բացեց բարուրը: Նրա հպումից երեխան արթնացավ և լաց եղավ, բացելով մեծ, անատամ բերանը: Տղա էր: Բացի բամբակյա ծածկոցից, որով փաթաթված էր, էլ ոչինչ չկար:

Պոլինան զանգեց ոստիկանություն: Տղայի ծնողներին այդպես էլ չգտան: Պոլինայի տունը գտնվում էր մայրուղուց ոչ հեռու, և ով ասես կարող էր թողած լինել երեխային: Ավելի շուտ, պատճառն այն էր, որ երեխան պռատշրթունք էր:

Պոլինան փոքրիկին որդեգրեց: Ավելի ուշ նրան վիրահատեցին, և ժամանակի հետ էլ վերին շուրթի սպին համարյա աննկատ դարձավ:

Ինչ-որ մեկի կողմից լքված երեխան նրա կյանքը իմաստով լցրեց:

Անցել են շատ ու շատ տարիներ: Լրացել էր Պոլինայի ութսուն տարին: Նա միայն վերջերս վերանորոգված տան պատշգամբում նստել էր բազկաթոռին, իսկ այգուց լսվում էին իր փոքրիկ թոռնիկների ձայները, որոնք գնդակով խաղում էին ծեր խնձորենիների տակ:

Պոլինան հիմա վատ էր տեսնում, բայց միևնույն է՝ ամառային մայրամուտի գեղեցկությունը ուրախացնում էր նրան: Նա ժպտում էր: Աչքերը լցվում էին արցունքով, իսկ գուցե լալիս էր... Ո՞վ գիտե: Մոտ վազեց թոռնիկը՝ ավագը, նրան տվեց մի մեծ, կարմիր խնձոր: «Տա՛ս, սա քեզ»,– ասաց նա և նորից վազեց խաղալու:

Պոլինան բռնել էր մեղր և թարմություն բուրող խնձորը, և ցածր շշնջաց. «Փառք Աստծուն ամեն ինչի համար»:

ՀԱԿԱԴԱՐՁ ԱՊԱՏՈՒՅՑ

Տոչորվում էր միշտ հոգիս ծարավի,
Անբառ խորհրդով մի զմայլելի,
Ինչ-որ տեղ թռչում, ինչ-որ բան տենչում՝
Չէր կարողանում գոհանալ, սակայն,
Այն ամեն ինչով, որ զգացմունքային է.
Բայց սուրբ գիշերը սուրբ մկրտության,
Կատարվեց հրաշքը պայծառացման,
Եվ մոռացած այս կյանքում ամեն բան՝
Լույսի առջև կույսը ջերմ արտասվեց :*

Ինչև տասներկու տարեկան հասակը ինձ դաստիարակում էր աթեիստ տատիկս: Նա խոստովանում էր, որ աթեիզմն էլ հավատ է, բայց հավատ, որ Աստված չկա: «Վերջ ի վերջո,- համաձայնվում էր նա,- մարդիկ պետք է ինչ որ բանի հավատան»: Այդ պատճառով տատիկս հավատում էր սկզբում կոմունիզմի անսասան սկզբունքներին, իսկ հետո՝ վերակառուցմանը: Նրա ազդեցության տակ ես չէի էլ կարող մտածել անգամ, որ գոյություն ունեն անտեսանելի հոգևոր ուժեր:

* Բանաստեղծությունը հեղինակինն է:

Երբ լրացավ իմ տասներկու տարին, ծնողներս ինձ տարան իրենց հետ ապրելու: Հենց այդտեղ էլ ամեն ինչ սկսվեց: Հանկարծ ես զգացի, որ մարդուն անթարթ նայելով՝ կարող եմ նրան ստիպել ետ շրջվել: Այդ ունակությունն աճում էր ոչ թե օրերով, այլ ժամերով, այնպես որ բակի տղաները սկսեցին խնդրել ինձ ցույց տալ, թե դա ինչպես եմ անում: Ես հաճույք էի ստանում նրանց վախեցնելուց:

Բայց որոշ ժամանակ անց ինչ-որ բան ինձ սկսեց մտահոգել: Ինչ-որ չար ուժ էր: Եվ ես որոշեցի այլևս չօգտվել դրանից:

Դրանից հետո սարսափելի բան սկսվեց: Ինչ-որ տեղից չարագուշակ շշնջոց էր լսվում: Այդ ձայնից մազերս փշաքաղվում էին: Շնջոցն ավելի ու ավելի բարձրաձայն էր դառնում, պարուրում էր ամեն կողմից և ինչ-որ բան պահանջում: Նույնիսկ ցերեկն այնպես էի գոռում, որ բոլորը վազելով գալիս էին ինձ հանգստացնելու: Գիշերն ավելի վատ էր: Անկյուններից ուղիղ ինձ վրա էր հարձակվում խավարը: Ես լապտերն ուղղում էի դեպի ներսը, բայց խավարն ագահորեն կլանում էր լույսը և անթափանց էր մնում: Ինչ լապտեր կօգներ այդտեղ: Ես այնպես էի ճչում, որ մինչև հիմա զարմանում եմ, թե ինձ ինչպես հոգեբուժարան չտարան:

Վերջապես մայրիկս վճռեց ինձ պատմել կատարվածի բուն էությունը: Մայրիկիս այդպես էլ չէին

մկրտել: Նրա հարազատ տատիկը կախարդությամբ էր զբաղվում: Նրա մահը սարսափելի էր: Մայրիկս այն ժամանակ չորս տարեկան էր և հիշում էր, որ ջուրը տատիկիս տալիս էին գավաթը բռնիչին կապած: Մեռնողի կողքին ոչ մեկը չէր մնում: Երեխաներին չէին թողնում մտնել նրա սենյակ:

Մ՛ի քեզ բան: Պարզվում է՝ մայրիկիս տատը կախարդ էր եղել և մահացել է առանց ապաշխարելու: Պարզվում է՝ չար ուժեր կան: Ես այդ զգացի ինձ վրա: Ես հասկացա, որ պետք է ընտրել՝ կա՛մ գնալ մեծ տատիս ճանապարհով, կա՛մ գնալ դեպի Լույսը: Տատիկս ասում էր, որ ոչինչ չկա: Բայց եթե մութ ուժ կա, ապա անպայման կա Աստված: Եվ ես ծնողներիս խնդրեցի ինձ մկրտել:

Մեր գյուղի եկեղեցին այրվել էր, այդ պատճառով քահանան ծեսերը կատարում էր տներում: Նշանակված օրը, երբ քահանան պատրաստվում էր մեզ մոտ գալ, նրան հայտնեցին, որ հեռավոր գյուղում մի տատիկ է մեռնում, և նա շտապ մեկնեց այնտեղ: Նա խոստովանություն ընդունեց և մեռնողին հաղորդություն տվեց, և նրան կրկին շտապ կանչեցին՝ հակառակ ուղղությամբ, քառասուն կիլոմետր հեռու: Հարկ եղավ այդպես երեք կամ չորս անգամ գնալ: Հետո նրա մեքենան խափանվեց, և նա չորս ժամ սպասեց ամայի ճանապարհին: Մի խոսքով, քահանան մեր տուն հասավ միայն տասնմեկն անց կեսին և ասաց, որ այսպիսի բան իր ամբողջ կյանքի ընթացքում չի հիշում: Զնայած ուշ ժամին, բայց և այնպես նա որոշեց կատարել խորհուրդը:

Երբ ինձ մկրտում էին, հանդուգն մտքեր էին անցնում գլխովս: Շատ էի ցանկանում քաշել տեր հոր շուրջառը, անզուսպ ուզում էի կչկչալ, իսկ երբ պետք էր ասել. «Հրաժարվում եմ սատանայից և նրա բոլոր գործերից», ինձ թվաց՝ մի մեծ քարաբեկոր իջավ ուսերիս և գետնին սեղմեց ինձ: Լեզուս այնքան դժվարությամբ էր պտտվում, որ կարծես խոսելը մոռացել էի:

Եվ ահա ես խաչ եմ կրում: Բոլոր վախերը ցրվեցին, մաքրվեցին, ինչպես սարդոստայնը: Ծանրությունը հեռացավ, չարագուշակ ձայներն անհետացան:

Մկրտությունից հետո մի մոմ էր մնացել: Երբ բոլորը գնացին քնելու, հնազանդվելով անսպասելի ներքին մղումին, վառեցի այն, ծնկի իջա և սկսեցի խոսել. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սո՛ւրբ թող լինի անունը Քո, թող գա՛ Արքայությունը Քո, թող լինի Քո կամքը...»: Ես ոչինչ չգիտեի Աստծու մասին, բացի նրանից, որ Նա կա: Ոչ մի անգամ աղոթք չէի արել և մանավանդ չէի հասկանում, թե այդ ժամանակ ինչ էի ասում: Բայց իմ ամբողջ մարմինն այնպիսի ուրախությամբ էր լցվում, որ ես նորից ու նորից կրկնում էի այդ խոսքերը՝ մինչև մոմի մարելը: Իսկ առավոտյան գնացի քահանայի մոտ և հարցրեցի, թե ինչ են նշանակում այդ խոսքերը:

Սերգիյ քահանան ինչ-որ տարօրինակ նայեց ինձ և հարցրեց, թե որտեղից գիտեմ այդ ամենը:

– Ոչ մի տեղից,– պատասխանեցի ես,– մկրտությունից հետո իրենք իրենց հայտնվեցին իմ հիշողության մեջ:

– Այո՛, անքննելի են Քո գործերը, Տե՛ր,– խաչակնքեց տեր հայրը:– Քո պահապան հրեշտակն է քեզ սովորեցրել:

Այդպես Տերը ինձ հավատ շնորհեց:

Անցումային տարիք

Նադյուշան արդեն քնում էր, երբ հարևան սենյակից լսվեց Վերայի խոսակցությունը մոր հետ: Խոսում էին բարձր, և ամեն մի բառը լսվում էր:

– Ինչ սիրո մասին ես խոսում, մայրիկ: Մի՞թե չես տեսնում՝ ամեն բան անցավ: Նայիր քեզ. այդ ահավոր հագուստը, որը երրորդ տարին է՝ հագնում ես, անհրևակայելի խոպոպներդ, ծռմռված հողաթափերդ, անվերջ քաշքշուկը խոհանոցում: Ես հասկանում եմ հայրիկին. որքան է այդ ամենը ձանձրացրել նրան: Ես ամեն ինչ գիտեմ, մայրիկ: Պատահաբար լսեցի ձեր խոսակցությունը: Ես հասկացա, որ հայրիկն ուզում է հեռանալ մեզանից: Շուտով մենք լքված երեխաներ կլինենք...

Մայրիկն ինչ-որ բան պատասխանեց Վերային, իսկ հետո լաց եղավ:

Նադյուշան այլևս չդիմացավ: Նա ցատկեց անկողնուց և ոտաբոբիկ, գիշերանոցով, նետվեց դեպի մայրը:

– Մայրիկ, մայրիկ, մի՛ լսիր նրան: Ինչ չարն ես, Վերա: Ինչպե՞ս կարող ես մայրիկին նեղացնել: Մեր մայ-

րիկը ամենալավն է ցանկացած հագուստով և ցանկացած սանրվածքով: Ես քեզ սիրում եմ, մայրիկ,- ասում էր Նադյան արցունքների միջից, փաթաթվելով մորը:- Հայրիկին էլ եմ սիրում:

- Լռի՛ր, անկարգ,- գոռաց Վերան:- Դու ականջ էիր դնում, ականջ էիր դնում:

- Ո՛չ, ո՛չ, ճիշտ չէ: Դու այնպես էիր գոռում, որ ես արթնացա: Այդ դու էիր ականջ դնում մայրիկի և հայրիկի խոսակցությանը: Եվ ամեն ինչ խառնել ես: Չի կարող հայրիկն այդպես վարվել: Նա լավն է: Նա սիրում է մայրիկին և մեզ:

- Ութ տարեկանում ես էլ էի սիրում բոլորին,- նյարդայնացած ասաց Վերան:- Այն ժամանակ ինձ թվում էր, որ իմ ծնողներից լավը, մեր տնից լավը չկա... Բայց հիմա... Հիմա ես սպասում եմ դպրոցն ավարտելուն և կթողնեմ այս ատելի տունը:- Եվ արդեն հանգիստ ավելացրեց.- Ես գնում եմ Նատաշայի մոտ, կգիշերեմ այնտեղ: Հայրիկին մի՛ ասա: Կարծում եմ՝ նա չի էլ նկատի, որ դուստրերից մեկն անհետացել է:

Մայրը, արցունքն աչքերին, Նադյային սեղմեց կրծքին և շշնջաց.

- Գնանք, Նադյուշա, քեզ, պառկեցնեմ - նա համբուրեց դստերը:- Աղոթի՛ր իմ ու հայրիկի համար: Մանկական աղոթքն Աստված կընդունի: Նա ամեն ինչ կկարգավորի:

Նադյան ննջեց և չլսեց ուշ ժամին հոր գալը: Առավոտյան մայրիկն արթնացրեց աղջկան, պատվիրեց, թե նախաճաշին ինչ պատրաստի և գնաց աշխատանքի:

Նադյան մտավ հոր աշխատասենյակը, որտեղ քնում էր նա վերջին ամիսներին, նստեց նրա մոտ բազմոցին և երգեց այն երգը, որով միշտ հայրն արթնացնում էր իրեն...

Դեպի դպրո՛ց, երեխանե՛ր,
Աքաղաղը վաղ է կանչել,
Հագեք արագ շորերը ձեր ,
Արևն արդեն ներս է ընկել...

Հայրը բացեց աչքերը և, տեսնելով Նադյային, ժպտաց:

- Դե ինչ, երիտասարդ տանտիրուհի, մենա՞կ ես: Վերան արդեն գնացել է: Ուտելու ինչ ես տալու հայրիկիդ:

- Ես ուզում եմ խոսել քեզ հետ,- լուրջ ասաց աղջիկը:- Դու էլ չե՞ս սիրում մայրիկին:

Հայրը շփոթվեց և փորձեց խուսափել խոսակցությունից:

- Դու դեռ փոքր ես և չես կարող այդպիսի հարցերը հասկանալ:

- Ես կհասկանամ, հայրիկ: Դու ինձ պատմիր, ես ամեն ինչ կհասկանամ:

– Եվ ընդհանրապես, որտեղից վերցրիր,– տհաճությամբ քրթմնջաց հայրը։

– Վերան ասում է, որ դու այլևս չես սիրում մայրիկին։

– Դե, Վերային միշտ չէ, որ պետք է լսես,– ժպտաց հայրը։– Նա անցումային տարիքում է։ Դա մի բարդ շրջան է, աղջիկս։ Մարդն սկսում է ամեն ինչի մասին կտրուկ և խիստ դատել։ Եվ, ընդհանրապես, մտածում է միայն իր մասին և այդ պատճառով հեշտությամբ նեղացնում է ուրիշներին։ Ավելի հաճախ իրեն շրջապատողներին՝ հարազատներին... Նույնիսկ իր տունը դուր չի գալիս իրեն, ուզում է այն լքել...

– Ուրեմն, դու ևս, հայրիկ, Վերայի պես անցումային տարիքում ես,– տխուր հոգոց հանեց աղջիկը։

– Դե ինչ ես ասում, աղջիկս,– ծիծաղեց հայրը։– Իմ անցումային տարիքը վաղուց է անցել։

– Ինչպես է անցել, հայրիկ։ Դու Վերայի պես մտածում ես միայն քո մասին։ Նա ասում էր, որ դու ցանկանում ես հեռանալ մեզանից։ Իսկ դու չգիտես, որ մեր և մայրիկի համար առանց քեզ ծանր կլինի։ Վերան իրավացի է, մենք լքված երեխաներ կլինենք։ Եվ մեր տունն էլ քեզ այլևս դուր չի գալիս։ Ուշ ես գալիս, ոչ մեկի հետ չես խոսում, միանգամից գնում ես աշխատասենյակ։ Եվ քեզ այլևս դուր չեն գալիս մայրիկի հագուստը և խոպոպիկները։

– Հագո՞ւստը, խոպոպիկները,– ժպտաց հայրը,– Դե դրանք չեմ էլ նկատում։

– Ա՛յ, տեսնում ես, նույնիսկ չես նկատում։ Ինչպես մայրիկը քեզ համար է ջանում։ Մի՞թե նրա համար ցավալի չէ։ Վերան էլ գիշերելու գնաց ընկերուհու տանը, իսկ գնալուց առաջ ասաց, որ դու նույնիսկ չես նկատի։ Եվ հետո, հայրիկ, ինչ է նշանակում՝ էլ չսիրել։ Մի՞թե կարելի է մարդուն, ում առաջ սիրում էիր, այլևս չսիրել։ Այ, դու կծերանաս և այնքան գեղեցիկ չես լինի, ինչպես հիմա, և ես այլևս չսիրեմ քեզ։ Ոչ մի դեպքում։ Դե լավ,– հոգոց հանեց աղջիկը։– Մի՛ բարկացիր ինձ վրա, ես իսկապես դեռ հիմար եմ։ Գնամ նախաճաշը պատրաստեմ,– և, թաքցնելով արցունքները, Նադյան վազեց խոհանոց։

Հայրը սկսեց դանդաղ հագնվել։

«Նադյուշան իրավացի է,– մտածեց նա։– Իսկապես, անցումային տարիքում եմ։ Քառասուն տարեկան՝ երիտասարդությունը ետևում է մնացել։ Ցանկանում ես ինչ-որ բան փոխել, նոր կյանք սկսել։ Զորս կողմն այնքան գայթակղություն կա... Աշխատանքի վայրում ինչ սիրալիր հայացքով է ինձ նայում թարգմանչուհին... Իսկ այստեղ Մաշան՝ հին շորով և մշտական խոպոպիկներով, միշտ դժգոհ Վերան։ Միայն մի բոժոժիկ, մի ուրախություն՝ Նադյան։ Ինչպես նրան լքես։ Իսկ Մաշան. մի՞թե քիչ ենք ապրել երկուսով։ Որ-

քան երջանիկ և տխուր օրեր են եղել: Հիմա էլ գրկես՝ աղջնակի պես կբռնկվի»:

Շուտով աղջիկը մատուցարանի վրա բերեց ափսեները՝ գոլորշի արձակող ձվածեղով և մի մեծ բաժակ սուրճ՝ հայրիկին: Ինքն էլ նստեց գրասեղանի մոտ:

Հայրը դեռ նստած էր մտորումների մեջ:

– Բայց ինչո՞ւ ենք աշխատասենյակում ուտում,– հարցրեց նա հանկարծ և, մատուցարանը վերցնելով, գնաց խոհանոց:

– Եվ ընդհանրապես, թողնենք առայժմ այս խոսակցությունը: Արի երեկոյան գնանք մայրիկին դիմավորենք և տուն ուղեկցենք աշխատանքի վայրից: Իսկ երբ վերադառնա Վերան, ընտանեկան խորհուրդ կհավաքենք և կորոշենք՝ ուր գնալ ամռանը: Դու ուզո՞ւմ ես ծով գնալ,– դիմեց նա դստերը:

– Այո՛, այո՛,– ուրախ գոչեց Նադյուշան, փաթաթվելով հորը:– Բոլորս միասին կգնանք: Եվ միշտ միասին կլինենք:

Սիրով փրկվածը

Կոլյան ուրախ, երբեք չվհատվող երիտասարդ էր: Նա ընտելացել էր տոկունությամբ տանել իր դժվարին կյանքի բոլոր անսպասելի բարդությունները, ոչ մեկին և երբեք չբողոքել: Արդեն մի քանի տարի է՝ ապրում էր Մինսկում, ծայրամասի փոքրիկ տնակում՝ աշխատելով մեկ այստեղ, մեկ այնտեղ: 1937 թվականն էր:

Մի անգամ գիշերը շտապով թակեցին նրա պատուհանը: Թակոցը ինչ-որ անորոշ էր. թվում էր՝ կեչու ճյուղն է հարվածում պատուհանին: Բայց ցածրաձայն և համառ թակոցը կրկնվեց: Ետ քաշելով վարագույրը՝ Կոլյան տեսավ քաղխորհրդի կուսակցական մի մեծավորի դստեր՝ Սվետայի գունատ դեմքը:

– Կոլյա, դուռը բա՛ց ներս մտնեմ: Լույսը չվառե՛ս: Ոչ մեկը մեզ չպիտի տեսնի:

Երիտասարդն անմիջապես չպատասխանեց:

– Գիշեր է, ես արդեն քնում եմ, ինչ է պատահել,– նույնպես շշնջալով պատասխանեց նա՝ վախենալով արթնացնել տանտիրուհուն: Նա չէր ուզում գործ ու-

նենալ Սվետայի հոր հետ, համ էլ վախենում էր աղջկա հեղինակության համար:

– Բա՛ց,– համառորեն կրկնում էր նա:

Կոլյան գնաց նախամուտք և բացեց դուռը: Աղջիկը ներս սահեց: Նա ընդհատ– ընդհատ էր շնչում, նրա փարթամ մազերի ամպը քսվեց տղայի այտին:

Նրանք սենյակ մտան: Լուսինը թաքնվեց ամպերի ետևում, լույսը մարեց, և սենյակը ընկղմվեց անթափանց խավարի մեջ:

– Դե՛,– հարցրեց Նիկոլայը:

– Կոլյա, սիրելիս,– աղջկա ձայնը մթության մեջ դողում էր, ինչպես ձգված լար:– Դու պիտի փախչես:

– Ու՞ր, ինչ է պատահել: Ինչ որ մեկին դժբախտությո՞ւն է պատահել:

– Այո՛, քեզ: Վաղը ձեզ տանելու են աշխատելու քաղաքից դուրս:

– Հետո ինչ: Ես էլ կգնամ:

– Ո՛չ, ո՛չ, դու չես հասկանում, այնտեղ չի կարելի մեկնել, վերցրու անձնագիրդ և հեռացի՛ր: Հենց հիմա՛: Արա՛գ:

– Բան չեմ հասկանում:

– Ձեզ տանում են ոչ թե աշխատացնելու, այլ այնտեղ բոլորիդ գնդակահարելու են:

Նա փլվեց երկաթե մահճակալի ծայրին, զսպանակը ճռռաց, աղջիկը ցնցվեց:

– Սվետա,– ճնշված ձայնով արտասանեց Նիկոլայը,– իսկ մնացածները... Դու...

– Արդյո՞ք բոլորին եմ զգուշացրել: Ինչ ես ասում. այնտեղ հարյուրից ավելի են: Ես ցուցակները տեսել եմ հորս աշխատասենյակում:

– Բայց ինչո՞ւ ես: Ինչո՞ւ դու ինձ մոտ եկար:

– Դու դեռ չե՞ս հասկացել,– նրա ձեռքը մթության մեջ շոյեց տղայի մազերը:– Ես քեզ սիրում եմ: Դու միայն ապրի՛ր, խնդրում եմ: Ինձ ոչինչ պետք չէ: Փախի՛ր: Հենց հիմա փախի՛ր ...

Նա երախտագիտությամբ համբուրեց Սվետայի արցունքից աղի այտը:

– Դու պիտի շտապես:– շշնջաց նա շեմին:

Դրսի դուռը ասես զգուշորեն հառաչեց: Լավ փակելով վարագույրը՝ Կոլյան վառեց մոմի մնացորդը և պարկի մեջ գցեց ամենանհրաժեշտ իրերը: Անձնագիրը խցկեց գրպանը:

Երբ մահ գուժող սարսափելի վայրից գյուղամիջյան ամայի ճանապարհով դեպի անհայտություն էր գնում, մտքի մեջ պատառիկներ էին լողում մանկական հիշողություններից: Ահա ինքը, երեք տարեկան, կառչում է մոր փեշերից: Մայրը՝ շիկահեր մի կին, ծանր հյուսքը գլխի շուրջը հավաքած, երկնագույն աչքերով, դեսուդեն է անում տանը կամ սպիտակեղեն է լվանում տաշտակում: Այնքան քիչ է հիշում նրան, չէ՞ որ մայրը մահացավ քսաներեք տարեկանում՝ տիֆից, խաղաղ ու աննկատ հալվեց, ինչպես մոմ:

Ահա և ֆոլվարկը (լեհական կալվածք): Ամուր կառուցված վեց տներ՝ իրար միացած մի մեծ, ըն-

դարձակ սենյակով: Ինչ ուրախալի էր վազվզել ընտանեկան կլոր սեղանի շուրջը, որտեղ խորհրդի էին նստում հայրը և հորեղբայրը: Եվ բարձրահասակ, խստամբեր հորեղբայր Յուստասը՝ խիստ գոչյունով. «Ես ձեզ ցույց կտամ, անկարգնե՛ր»: Ահա հայրը, թեթևակի խմած վերադառնում է հարևանների հարսանիքից, որտեղ ինքն էր «երաժշտությունը»: Նա ինքն էր երաժշտական գործիքներ պատրաստում, ինքն էլ նվագում էր: Բայց հատկապես հարգում էր կլարնետը: Ահա նա՝ Իգնատը, նստել է տան պատի տակի հողե նստարանին, ոտքը ոտքին և կտրիճավարի երգում է...

Եվ ահա այն թափանցիկ, կապույտ երկինքը այն ցավալի օրը, երբ կարմիր կոմիսարները հարձակվեցին Ֆոլվարկի վրա:

Վեց եղբայր միասին էին ապրում: Մեկը մյուսի թիկունքն էր. հիշեց հայր Նիկոլայի և Ֆոմա պապի պատվիրանը՝ հողը չբաժանել, չանջատվել ընտանիքից... Եվ ահա ամեն ինչ թալանված է, քանդված, ջարդված...

Էհ, Ֆոմա պապ: Զօգնեցին քո խորհուրդները, եղբայրները չկարողացան կանգնել ավերիչ ուժի դեմ: Նրանք մնացին անկոտրում, չճանաչեցին անաստված իշխանությունը, սակայն նրանց կակպեցին ու գցեցին սայլի մեջ: Լուռ նստած էին նրանք՝ նայելով անհուն երկնքին... Նրանց սրտերը դողացին միայն այն ժամանակ, երբ նրանց կանանց և երեխաներին քարշ տվեցին մեկ այլ սայլի մեջ: Եվ քշեցին տարբեր ուղ-

ղություններով. կանանց՝ Ղազախստան, ամուսիններին՝ Սոլովկի, որտեղ էլ գնդակահարեցին 1932 թվականին:

Կոլյան հիշում էր, թե ինչպես իրեն հաջողվեց աննկատ ցած թռչել սայլից և դաշտ փախչել, ինչպես տարան դժբախտությունից քարացած խորթ մորը երեք երեխաների հետ... Ինչպես հովիվ էր գյուղում, իրեն աղքատ, որբ գյուղացու տեղ դնելով... Այն ժամանակ նա տասներկու տարեկան էր:

Դաժան ճակատագիրը ահա հիմա էլ է հալածում իրեն. աչքերը նորից նայում էին դեպի անհայտ հեռուները... Իսկ եթե Սվետլանայի սերը չլիներ, կենդանի կմնա՞ր: Երևի գնդակահարված հայրը եղբայրների հետ աղոթում էր իր համար:

Եվ քայլում էր գյուղամիջյան ճանապարհով Կոլյան՝ սիրով փրկված:

Ականատս դաշտը

Գարուն է: 1945 թվական, ապրիլ: Արևելյան Պրուսիա: Առաջավոր գիծ:

Իվանին կանչեցին սպայական բլինդաժ: Սեղանի մոտ, քարտեզների վրա կռացած՝ նստել էր գումարտակի հրամանատարը:

– Պարոն մայոր, շարքային Ռյաբովը ձեր հրամանով ներկայացել է,– զեկուցեց Իվանը:

– Նե՛րս արի: Դու, կարծեմ, կապավո՞ր ես եղել պարտիզանների մոտ,–հարցրեց հրամանատարը:

– Այո, պատահել է,– հաստատեց Իվանը:

– Դու գիտես, որ վաղը հարձակվում ենք: Քիչ առաջ ճակատի գծից վերադարձավ հետախուզական խումբը: Նկատվել են նոր կրակակետեր:

Իվանը հիշեց, որ երկու օր առաջ հարձակման անցած վաշտից, որ գնդակոծման տակ էր ընկել, մի քանի մարդ է միայն մնացել:

– Գումարտակում համարյա բոլորը նորակոչիկներ են, իսկ դու փորձառու մարտիկ ես: Գերմանական կրակակետերի մասին զեկույցն անհրաժեշտ է մեկ ժամվա ընթացքում շտաբ հասցնել, այլապես մեր հարձակումը կտապալվի: Կգնաք կոմերիտկազմակերպչի հետ, նա պետք է հասցնի մասնակցել գնդի ակտիվիստների ժողովին:

– Կոմերիտկազմակերպի՛չ – կանչեց գումարտակի հրամանատարը:

Սեղանին մոտեցավ բոլորովին երիտասարդ մի տղա:

– Զեկույցի համար երկուսդ էլ գլխով պատասխան եք տալու: Եթե այն ժամանակին չհասնի, ռազմական դատարան կգնաք: Վե՛րջ, գնացե՛ք:

– Ճիշտ այդպես,– միաբերան պատասխանեցին զինվորները:

Իվանը քայլում էր լուռ, մտածելով առաջիկա հարձակման մասին: Իսկ կոմերիտկազմակերպիչը անդադար խոսում էր: Նա ժողովում ելույթ պետք է ունենար Արևմտյան Բելոռուսիայից նոր զորակոչված զինվորների շրջանում հակակրոնական քարոզչություն տանելու անհրաժեշտության մասին, և որոշել էր վարժանքներ անել:

– Աստված չկա: Նրան հորինել են տերտերները, որպեսզի կողոպտեն տգետ ժողովրդին,– կրկնում էր անգիր արած խոսքերը կոմերիտկազմակերպչը:

Իվանը չէր ցանկանում լսել: Նա հիշում էր մանկությունը: Մայրը նրան հաճախ էր եկեղեցի տանում: Նա կարծես իրականում տեսավ Զատկի խաչերթը, զատկական կուլիչները, ուրախությունը Հաղորդությունից հետո, Վերայի հետ իր պսակադրության հանդիսությունը:

Մոքերը նրան տուն տարան: Ինչպե՞ս է Վերոչկան, ինչպես են երեխաները: Գարուն է, ահա մոտ է ցանքի ժամանակը, որպեսզի աշնանը քաղցած չմնան...

Մինչ այս, մինչ այն՝ սայլուղին կտրուկ թեքվեց և ճանապարհը կարճացնելու համար մարտիկները գնացին ուղիղ դաշտով: Նրանք իջան մի ոչ-մեծ ձորակ և ընկան մառախուղի մեջ: Իվանի սիրտը նվվաց: Նա սկսեց ուշադիր նայել ոտքերի տակ և հանկարծ անսպասելի կանգ առավ ասես քարացած: Կոմերիտկազմակերպիչը, որ ետևից էր գալիս, անսպասելիությունից ընկավ նրա վրա:

– Այդ ինչ եղավ:

– Այստեղ նայի՛ր:

Իվանը ցույց տվեց առջևը, որտեղ նրանից մեկ մետր հեռու գետնի տակից ցցվել էր ականի պայթուցիչը. քամին մերկացրել էր մոխրագույն մետաղը:

– Գերմանական «գորտ է»,– բացատրեց Իվանը:– Մեջը շրապնել (ռմբակոտորակ) կա: Նրա վրա ոտք դնելիս վեր է թռչում և պայթում օդում:

Զինվորները նայեցին չորս բոլորը և տեսան, որ այդպիսի մետաղական առարկաներ կան և՛ առջևում, և՛ աջում, և՛ ձախում, իսկ սարսափելին այն էր, որ ականներ կային նաև իրենց ետևում: Նրանք հայտնվել էին ականապատված դաշտում:

Կոմերիտկազմակերպիչը վախից նստեց գետնին:

– Ես տեղիցս չեմ շարժվի,– գոռաց նա:

Իվանը ինքն իրեն մտածում էր. «Եթե սպասենք ականազերծողներին՝ ժամանակ կկորցնենք: Տեղեկությունները պետք է ժամանակին շտաբ հասցվեն: Առավոտյան հարձակման անցնողների կյանքը մեզանից է կախված»:

– Վե՛ր կաց,– խիստ ասաց նա:– Ես կգնամ առջևից, իսկ դու, մի քիչ սպասելուց հետո, կգաս իմ հետևից: Եթե մի բան պատահի, տեղեկությունները կհասցնես շտաբ:

Իվանը ծրարը հանձնեց կոմերիտկազմակերպչին:

– Դու չե՞ս վախենում,– հարցրեց պատանին:

– Վախենում եմ,– պատասխանեց Իվանը:– Բայց ինձ համար աղոթում են և՛ մայրս, և՛ կինս, և՛ երեխաներս: Ես էլ կաղոթեմ:

Իվանը լայն շարժումով խաչակնքեց, քայլեց և սկսեց երգել.

– Հավատում եմ մեկ Աստծուն՝ ամենակալ Հորը...

Կոմերիտկազմակերպիչը զարմանքով նայում էր Իվանին: Նա շրջվեց և կրկնեց.

– Վեր կա՛ց: Պետք է գնալ, մի՛ վախեցիր: Մեր ամբողջ կյանքը ականապատ դաշտ է: Միայն հավատա:

Ամեն քայլի հետ նրա ձայնը ավելի ու ավելի հաստատուն էր դառնում.

– Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն ...

Կոմերիտկազմակերպիչը սկզբում հազիվ լսելի, իսկ հետո ամբողջ ձայնով սկսեց նրա հետևից կրկնել

Հավատո Հանգանակը։ Աղոթքի բառերը բարձրանում էին դեպի ամպերը։

Թե ինչքան ժամանակ անց նրանք հայտնվեցին անտառի թավուտում, նրանցից ոչ մեկը չէր կարող ասել։ Կրկին հայտնվելով ճանապարհին, մարտիկները մեկ շնչով շտաբ հասան։

Ապրումներից հետո կոմերիտկազմակերպիչը ժողովին չգնաց, և նրանք միասին Իվանի հետ նույն ճանապարհով պատահած մեքենայով վերադարձան գումարտակի դիրքերը։

Իվանը չցանկացավ հարձակման գիշերը մնալ բլինդաժում։ Նա նստել էր խրամատում, մտածում էր տան, ընտանիքի մասին և աղոթում էր։ Խրամափոսի թեքման տեղից դուրս եկավ կոմերիտկազմակերպիչը և կանգ առավ՝ գլուխը կախելով.

– Ների՛ր ինձ, Իվա՛ն։ Ես չգիտեի, որ դու հավատում ես Աստծուն։

– Աստված կների։ Կարևորը, որ մենք ողջ ենք։ Իսկ ես նույնիսկ անունդ չգիտեմ։ Անունդ ինչ է։

– Պավել։

– Առաջին քրիստոնյաներին հալածողի անունն է։ Աստծու ողորմությամբ՝ նա հետո առաքյալ դարձավ։

– Իվան, ես լսել եմ, որ վտանգի պահին ամեն մի հավատացյալ կարող է մարդ մկրտել։ Օգնի՛ր ինձ։ Ես ուզում եմ քրիստոնյա դառնալ։

Չուղարկված նամակ

Իմ սիրելի Վերոչկա.

Ահա և ես մենակ մնացի, առանց քեզ։ Իհարկե, ես երեխաներ, թոռներ և երկու վաղեմի ծանոթներ ունեմ, դու նրանց լավ ես ճանաչում։ Ճիշտ է, ավելի ու ավելի քիչ ենք համարձակվում գնալ ձկնորսության՝ գերադասելով հավաքվել որևէ մեկի տանը, երբեմն էլ սահմանափակվում ենք հեռախոսային խոսակցություններով։ Բայց դա ոչինչ չի փոխում։ Իմ տունը որբացել է։ Հասկանալ, թե ինչ զգացի քո մահվանից հետո, կարող է միայն նա, ով իր անչափ սիրած կնոջ հետ ապրել է երկար տարիներ և հետո հանկարծ կորցրել նրան։

Դու մահացար անսպասելի, սրտի տագնապից։ Ես նույնիսկ չհասցրեցի քեզ հրաժեշտ տալ։ Քո գնալուց հետո ամեն ինչ փոխվել է։ Սկզբում ես չէի կարողանում հաշտվել դրա հետ։ Մենակությունը ցանկացած տարիքում տհաճ է, բայց հատկապես ծանր է հաղթահարել օր ծերության։ Գուցե հենց այդ պատճառով էլ

իր երկրորդ կեսը կորցրած ծեր մարդը դրանից հետո երկար չի ապրում...

Ինքս իմ հանդեպ խղճահարության պահերը տանջում էին ինձ քո իրերը տեսնելիս, որոնք ամեն րոպե քեզ էին հիշեցնում: Չէ՞ որ մեր տանը համարյա ամեն ինչ քո ձեռքերով է դրված, ամենուրեք ես գտնում եմ քո ներկայության անջնջելի հետքերը:

Գրքերը գրադարակների վրա: Կահույքը, որը միասին ենք գնել, բոլոր այն մանրուքները, որոնցից տասնամյակներով ստեղծվում էր մեր տան հարմարավետությունը: Քո Աստվածաշունչը, քո սրբապատկերները: Վերջին տարիներին դու խաչակնքում էիր և հաճախ եկեղեցի էիր գնում: Դու խնդրում էիր, որ ես էլ խաչակնքեմ, բայց ես այն ժամանակ համառում էի, բարկանում և նույնիսկ դժգոհում՝ գտնելով, որ դա քեզ կտրում էր ինձանից: Ամբողջ կյանքում ապրելով Եկեղեցուց դուրս՝ ես քո զբաղմունքը համարում էի հիմարություն: Ինչ դաժան էի, կույր և եսասեր:

Մի անգամ, քո թաղումից հետո, մի երկար, միայնակ երեկո, որը ես փորձում է կարճացնել ընթերցանությամբ, ինձ հյուր եկավ մեր թոռնուհին՝ Լենոչկան: Միայն վերջերս տոնեցինք նրա տասնութամյակը: Դու այդ օրն այնքան ուրախ էիր, նրա համար մի հին երգ երգեցիր՝ երիտասարդ օրիորդի և նրա փեսացուի մասին... Դու շատ երգեր գիտեիր... Հիշո՞ւմ ես, դու ասում էիր, որ մեր Լենոչկան նման է գզգզված ճնճղուկի, որը ջանում է կյանքի փորձառությամբ իմաստնացած մայր ճնճղուկ երևալ:

Դու շատ ճիշտ էիր բնութագրում մեր թոռնուհուն: Նա իսկական ժամանակակից օրիորդ է, որը ձգտում է նմանվել բոլորին: Սև մազեր, վարսավիրական հնարքներով հարդարված անսովոր սանրվածք, կիպ նստած ջինս, կարճ վերնաշապիկ: Բազմաթիվ ականջօղեր, պորտին՝ օղակ, դաջվածքներ: Փողոցի զավակ: Ջանգվածային մշակույթի արդյունք:

Բայց մենք հո գիտենք, որ այդ ամբողջ զարդարանքի տակ թաքնված է բարի, խոցելի մի հոգի: Մեր թոռնուհին խելացի է: Ընդունվել է, ինչպես երազում էր, անասնաբուժական: Կինոլոգների ակումբում դրամ է վաստակում: Դու հո հիշում ես՝ որքան էր կենդանիներ սիրում. մանկական տարիքից հիվանդ, լքված կենդանիներ էր տուն բերում:

Մենք Լենայի հետ հոտավետ թեյ թխմեցինք թխվածքաբլիթով, որը ես թխել էի քո բաղադրատոմսով: Բայց պարզ էր, որ նա հենց այնպես չէր եկել, որ հոգու վրա ծանրացած մի բան կար: Թառնուհիս պատմեց, որ պատրաստվում է ամուսնանալ: Նրա ընտրյալը, իհարկե, շատ լավ տղա է: Ուղղակի հրաշալի: Ֆուտբոլիստ է: Խաղում է տեղի ինչ-որ ակումբում: Բայց նրա ծնողները դեմ են: Կտրականապես:

– Պապ, ինչո՞ւ են նրանք այդպես անում: Չէ՞ որ մենք սիրում ենք միմյանց:

– Եվ դուք երկար ժամանակ է, որ ծանոթացել եք,– հարցրեցի ես։

– Մի ամիս առաջ։ Դա ինչ նշանակություն ունի։ Ես առանց նրա ապրել չեմ կարող,– և նա լաց եղավ, դեմքը թաղելով բարձի մեջ, որ դու էիր ասեղնագործել՝ կաղին ուտող երկու սկյուռիկներ՝ կաղնու կանաչ տերևների մեջ...

Ես լռում էի։ Լենոչկան դեռ երկար հեծկլտում էր։ Վերջապես նա հանգստացավ։

– Ուզո՞ւմ ես պատմեմ, թե ինչպես ենք տատիկի հետ ամուսնացել,– հարցրի ես։

Թոռնուհիս գլխով արեց, բռունցքներով սրբելով արցունքները, իսկ և իսկ մանուկ տարիքում։

– Ես այն ժամանակ սովորում էի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում։ Երկարահասակ էի, կորամեջք, անբարեձև, ակնոցավոր։ Ապրում էի հանրակացարանում։ Մի անգամ ընթերցասրահում հարևան սեղանի մոտ մի աղջկա նկատեցի՝ ոսկեգույն մազերով։ Նա կենտրոնացած ինչ-որ բան էր գրում մեծ, հաստ տետրում՝ շուրթերը շարժելով և շարունակ աչքերին ընկնող խոպոպը մի կողմ տանելով։ Շաբաթներ շարունակ նրա հետ խոսել անգամ չէի համարձակվում։ Միայն երեք ամիս հետո քաջություն ունեցա ներկայանալ Վերային՝ քո ապագա տատիկին։ Մենք ծանոթացանք, սկսեցինք հանդիպել։ Եվ միայն ծանոթությունից երեք տարի հետո մենք ամուսնացանք։ Ամեն բան այդպես է եղել։

Այն հեռու ժամանակներից ամենահաճելի և վառ հիշողությունը մնացել են՝ հազվադեպ այցելությունները հարսնացուիս ծնողներին, երբ ամբողջ ընտանիքով նստում էինք մեծ սեղանի շուրջը, թեյախմությունները համեղ թխվածքներով, անշտապ զրույցները աշխարհում ամեն ինչի մասին։ Հարմարավետություն, հանգստություն, համեղ թխվածք, Վերայի մայրիկի բարի աչքերը, նրա հայրիկի բարկացկոտ փնթփնթոցը։ Նա սիրում էր դատողություններ անել քաղաքականության մասին։ Ավելի աճախ մենք հավաքվում էինք երեկոները։ Պատուհանից այն կողմ բոցկլտում էր արևամուտը՝ վարագույրները ներկելով նարնջա-վարդագույն երանգով։ Վերայի մազերը բռնկվում էին ոսկեգույն կայծերով, իսկ աչքերում փայլում էին երկու փոքրիկ արեգակներ։

– Երեք տարի։ Դուք երեք տարի հանդիպել եք, հետո նոր ամուսնացել,– զարմացած բացականչեց Լենոչկան։

– Այո՛։ Ահա հենց այս նույն տանը։ Եվ անկեղծորեն կասեմ քեզ, համբույրներից այն կողմ չենք անցել։ Իսկ դուք քո փեսացուի հետ... ինչ է նրա անունը։ Երևի ձեզ մոտ այլ կերպ է։ Դուք բոլորդ հիմա այնպես եք շտապում ինչ-որ տեղ... Կարծես վախենում եք ուշանալ։ Մոլուցք է կարծես...

Լենան քարացավ։ Նրա այտերը կարմրեցին։

– Ճիշտ եմ։

Թոռնուհին գլխով արեց՝ փախցնելով հայացքը։

– Արժե՞ր այդպիսի քայլ անել,– հարցրեցի ես։

Մեր թոռնուհին լռում էր։ Հետո ունքերի տակից ինձ նայեց մի ինչ-որ անսովոր տխուր և միաժամանակ համառ հայացքով։

– Լա՛վ,– ասացի ես նրան։– Դուք հաստա՞տ որոշել եք միասին լինել։ Այդպե՞ս է։ Եվ ամուսնանալո՞ւ եք, այո՞։

– Այո՛,– մարտականորեն պատասխանեց նա։

– Իսկ որտեղ եք ապրելու, և կկարողանա՞ք ապագա ամուսինը ընտանիք պահել։ Դու երկրորդ կուրսում ես։ Քո աշխատավարձը հազիվ բավականացնի ուտելուն և ճանապարհածախսին։ Իսկ նա շա՞տ է վաստակում։

– Այնքան էլ չէ։ Պա՛պ, ես ուզում եմ խնդրել քեզանից՝ կարելի՞ է առայժմ քեզ հետ ապրենք։ Ժամանակավորապես։

– Առա՞յժմ։

– Դե, չգիտեմ... Հասկանում ես... Ես դեռ ոչ մեկին չեմ ասել... Ես երեխա եմ ունենալու։

– Իսկ նա գիտե՞

– Ո՛չ, դեռ չգիտե։

– Գնա՛ և ասա նրան։ Իսկ հետո մի բան կմտածենք։

Ահա այսպիսի խոսակցություն մեր միջև։ Իհարկե, ես շատ էի ափսոսում, որ դու իմ կողքին չես։ Գուցե դու ավելի խելացի և ճիշտ խորհուրդ կտայիր։ Մեր թոռնուհին գնաց։

Մեկ շաբաթից նա իր իրերը տեղափոխեց մեզ մոտ։ Եվ սկսեց ապրել ինձ հետ։ Միայնակ։ Տխուր։ Ճնշված։ Լենոչկան աստիճանաբար ուշքի էր գալիս։ Դու, իհարկե, հասկացար։ Փեսացուն լքեց նրան, հենց որ իմացավ նրա հղիության մասին։ Մեր խեղճ ճնճղուկ։

Հիմա ավելի ուրախ եմ, այնքան էլ միայնակ չեմ զգում։ Լենոչկան ամբողջ ժամանակ ինստիտուտում է և աշխատանքի։ Խեղճի վիճակն ավելի ծանր է, քան իմը։ Առաջին դաժան հիասթափությունը կյանքում։ Բայց քաջ աղջիկ է, կհաղթահարի, ես համոզված եմ։ Չէ՞ որ նա այնքան նման է քեզ։

Ես ավելի ու ավելի հաճախ եմ ձեռքս վերցնում և կարդում քո գրքերը։ Այդ գրքերը գրել են իմաստուն մարդիկ։ Ամեն բան չէ, որ ինձ դուր է գալիս, որոշ բաներ վիճելի են, բայց և այնպես... Շատ բան ինձ հասկանալի է դառնում և՛ իմ կյանքում, և՛ իմ երեխաների ու թոռների կյանքում։

Մեր տունն աշխուժացել է։ Հաճախ մեզ հյուր են գալիս բարեկամներ, ընկերներ։ Նրանք ամեն անգամ ինչ-որ բան են բերում ապագա փոքրիկի համար։ Ես ձեղնահարկից իջեցրի հին, փայտե մահճակալը, որի վրա քնել են մեր երեխաները։ Նոր ներքնակ պատրաստեցի։ Տղային հարմար կլինի։

Մենք արդեն գիտենք՝ տղա է լինելու։ Մեր ծոռը։ Եվ եթե ես ապրեմ մինչև այն ժամանակ, երբ նա կարողանա հասկանալ իմ խոսքերը, ես նրան անպայման կպատմեմ, թե ինչպիսին էր նրա նախատատը, ինչպես

էինք ապրում, սխալվում, ուրախանում, ինչպես էինք իրար սիրում: Եվ նրա հետ ձկնորսության կգնանք:

Ես հասկացա, Վերոչկա, որ մենք այս աշխարհ ենք գալիս, որպեսզի շփվենք միմյանց հետ և այդ շփման մեջ գտնենք դեպի Արարիչը տանող ճանապարհը:

Այսօր ես մկրտվեցի: Քո խոսքերը իզուր չանցան: Ապագայում ուզում եմ դառնալ ծոռանս կնքահայրը: Եթե Տերը ինձ մի քիչ էլ ուժ և ժամանակ տա, ես կփորձեմ նրան սովորեցնել այն ամենը, ինչ հասցրել եմ ինքս իմանալ:

Մի անգամ կինոյում տեսել եմ, թե ինչպես մի փոքրիկ աղջիկ նամակ գրեց իր զոհված հորը և այն դրախտ ուղարկեց, փուչիկին կապած: Փոքրիկը պատասխաններ ստացավ մարդկանցից, ովքեր գտել էին նամակը:

Ես այդ միջոցին չեմ դիմի: Իմ նամակը կդնեմ պարզապես Աստվածամոր սրբապատկերի ետևը: Թող մնա այնտեղ: Ես հավատում եմ, որ կհանդիպենք: Ցտեսություն, Վերոչկա:

Հանդիպում

Ծագող արևի ճառագայթները արթնացրին Մաշային: Աղջիկն անշտապ ճմլկոտվեց, վեր կացավ անկողնուց և մոտեցավ պատուհանին:

– Իսկական արևի լոգանք ընդունելու և լողալու եղանակ է: Ինչպես չեմ ուզում գյուղ գնալ,– ասաց նա ինքն իրեն և ավելացրեց.– Այո, Մաշա, չհաջողվեց խույս տալ:

Մոտենում էր տատիկի՝ Մարիայի ութսունամյակը, և ծնողները զանգահարեցին Սիբիրից, խիստ պատվիրեցին, որ նա ամբողջ ընտանիքի անունից շնորհավորի տատիկին և մի քանի օր էլ ապրի նրա հետ:

Մաշան երկար տարիներ չէր եղել գյուղում: Նա հիշում էր, որ մանկության տարիներին ծնողները նրան մի ամբողջ ամառ թողել էին տատիկի մոտ: Այնտեղ նա խաղում էր իր եղբայրների և քույրերի, գյուղի երեխաների հետ:

Բայց ահա Մաշան հասունացավ, ընդունվեց պատվավոր աշխատանքի, և նա արդեն չէր ցանկանում մեկնել տատիկի մոտ: Նա համարում էր, որ իր նման ժամանակակից օրիորդը ընդհանուր լեզու չի գտնի հասարակ մարդկանց հետ: Եվ հարմարություններն էլ այն չեն, ինչ քաղաքում:

Բայց ելք չկա, պետք է գնալ: Մտնելով շուկա՝ Մաշան գնեց ինչ որ պետք էր և ճանապարհ ընկավ արտասահմանյան մակնիշի իր նոր ավտոմեքենայով:

Անցնելով գյուղով, աղջիկը դժվարությամբ էր ճանաչում ծանոթ վայրերը. լճակը՝ եղեգով ծածկված, տները՝ հին այգիներով: Ահա և եկեղեցին: «Ինչ գեղեցիկ է,–մտածեց Մաշան:– Ոչ պակաս, քան քաղաքում»: Նա նույնիսկ մեքենայի ընթացքը դանդաղեցրեց: «Էխ, Մաշա, Մաշա, մոռացել ես Աստծուն,– անցավ մտքով,– միայն հեռվից ես հիանում եկեղեցիների գեղեցկությամբ, իսկ ինքդ...».

– Ոչինչ, մի օր կմտնեմ,– արդարացնելով իրեն՝ բարձրաձայն արտաբերեց աղջիկը:

Ահա վերջապես գյուղի ծայրը և տատիկի տունը:

– Ողջո՛ւյն տատի՛կ,– բացելով դարպասը և մտնելով բակ՝ ասաց Մաշան:

Տատիկը նստել էր հին նստարանին, խաղողի կախ ընկած ողկույզների տակ:

– Մարյո՛ւշկա, թոռնի՛կս, սիրելի՛ս,– ուրախացավ տատիկը և նրան երկարեց ձեռքերը:

Մաշան շփոթվեց, մտածելով, որ հիմա տատիկն կփաթաթվի իրեն: Տատիկը, կարծես կարդաց նրա մտքերը, շոյեց նրան և ասաց:

– Ինչ մեծացել ես, գեղեցկացել: Իսկ ես արդեն ծեր եմ, ծանրաշարժ:

Մաշան ամաչեց: Նա նստեց նստարանին և անվարժ գրկեց տատիկին:

– Դա տարիքից է, տատիկ: Ոչինչ, իսկ ես քեզ շատ համով բաներ եմ բերել,– և աղջիկը տատիկին մեկնեց քաղաքից տարած նվերների տոպրակը:

Երեկոյան տատիկը խնդրեց թոռնիկին իրեն խանութ տանել՝ ուտելիք գնելու իր երեխաների և թոռների համար, ովքեր պատրաստվում էին գալ հոբելյանին: Տատիկի ոտքերը ցավում էին, և նա կարող էր քայլել միայն ձեռնափայտով կամ որևէ մեկի թևից բռնած:

Մաշային այդ միտքը շփոթեցնում էր: Նա պատկերացրեց, թե ինչպես են իրենք տատիկի հետ քայլում գյուղի փողոցներով՝ սլացիկ օրիորդը և կռացած տատիկը, իսկ գյուղի պառավները քչփչում են իրենց հետևից: Մաշան խղճաց իրեն: Բայց հո տատիկին մենակ չես ուղարկի...

Խանութի ճանապարհին հանդիպողները բարևում էին նրանց, հարցնում էին տատիկի առողջության մասին, շնորհավորում մոտակա հոբելյանի առիթով: Մաշան մի տեսակ վիրավորվում էր, որ ոչ մեկը չի նկատում իր գեղեցկությունը և չի հիանում իրենով:

– Բա՛րև, Մարիա՛,– լսվեցին ձայներ:

– Բարև՛ ձեզ, հարևաննե՛ր,– պատասխանեց տատիկը նստարանին նստած տատիկներին:

– Իսկ այդ ով՞ է քեզ հետ:

– Իվանի աղջիկն է, իմ Կատյայի աղջիկը, իմ թոռնիկը՝ Մարյուշկան:

– Լավ աղջիկ է, գեղեցկուհի է:

– Այդպես է,– պատասխանեց տատիկը և տխուր նայեց Մաշային:

Գնելով ինչ որ պետք էր, նրանք տուն վերադարձան:

Հաջորդ օրը շատ հյուրեր ժամանեցին. տատիկի երեխաները, թոռները, ծոռները: Սեղանը գցեցին այգում, ծեր, ճյուղատարած խնձորենիների տակ: Մարիա տատիկը իսկապես օրվա հերոսուհին էր: Նրան ծաղիկներ էին նվիրում, նվերներ տալիս, բարի խոսքեր էին ասում: Բոլորը սրտանց ուրախանում էին, երգում, պարում: Բայց Մաշան այնքան էլ ուրախ չէր: Ինչ որ բան նրան տխրեցնում էր: «Ինչո՞ւ,– մտածում էր նա,– ինչ է ինձ հետ կատարվում: Բոլորը ուրախանում են, իսկ ե՞ս»: Նա նայեց հյուրերին, և նրա հայացքը հանդիպեց տատիկի հայացքին: «Ինչ է պատահել, ուրախացի՛ր»,– կարծես ասում էր այդ հայացքը: Եվ նա առաջին անգամ տեսավ, թե ինչ գեղեցիկ է տատիկը: Այո՛, այո՛, գեղեցիկ: Թեև նրա դեմքը կնճռոտ էր, բայց աչքերը լուսավորված էին բարությամբ և սիրով:

Հյուրերը ցրվեցին ուշ գիշերը: Մաշան, կարծելով, թե տատիկը քնած է, զգույշ մտավ տուն և հանկարծ սենյակից լսվեց տատիկի մեղմ ձայնը.

– Փա՛ռք քեզ, որ ինձ կյանքի կոչեցիր: Փա՛ռք քեզ, որ ինձ ցույց տվեցիր տիեզերքի գեղեցկությունը: Փա՛ռք քեզ իմ ամեն մի տխուր հոգոցի համար: Փա՛ռք

քեզ, կյանքի ամեն քայլի համար, ուրախության ամեն ակնթարթի համար: Փա՛ռք քեզ Աստված, հավիտյանս:

Աղջիկը հիացմունքից քարացել էր: Բառերը նրան շատ ծանոթ էին թվում: Առաջ որտեղ էր նա լսել այդ խոսքերը: Եվ հանկարծ նա հիշեց. այո, հատկապես այն նույն գիշերը, ավելի քան տասը տարի առաջ, ինքը տատիկի հետ ծնկի էր իջել սրբապատկերների առաջ, և նրանք միասին գոհություն էին հայտնում Տիրոջը, որ Նա իրենց կյանք է պարգևել և հնարավորություն է տվել սիրել և սեր տանել ուրիշներին:

Աղջկա աչքերին արցունքներ երևացին: «Որքա՜ն եմ փոխվել այս տարիների ընթացքում,– տխրությամբ մտածեց Մաշան:– Ինչ է այն Մաշենկայից մնացել, ով չէր ամաչում փաթաթվել տատիկին և աղոթել սրբապատկերի առաջ»:

– Տատի՛կ, ների՛ր ինձ,– մտնելով սենյակ և փարվելով տատիկին, շշնջաց Մաշան արցունքների միջից:– Ների՛ր ինձ:

– Ոչինչ, ոչինչ,– քնքշորեն խոսեց տատիկը և շոյեց թոռնուհու գլուխը:– Ամեն ինչ լավ է: Տերը ողորմած է,– և տատիկը թոռնիկին մատնացույց արեց սրբապատկերների անկյունը:

Մաշան նայեց խաչին, որին խաչված էր Քրիստոս՝ իր համար, տատիկի և բոլոր մարդկանց համար:

Բարի լույս

Հյուրը

Սաշան ցավ էր զգում: Դա ֆիզիկական ցավ չէր. դեղահաբերը, որ բերում էր բուժքույրը մանկական հիվանդանոցից, անում էին իրենց գործը: Իրեն անկողնուն գամած հիվանդությունը այլ կերպ էր իր մասին զգացնել տալիս: Նրան հիմա տանջող ցավը բույն էր դրել ինչ-որ տեղ սրտի շրջանում՝ ստիպելով նրան սեղմվել տարակուսանքից և վերահաս աղետի վախից, որին նա, չնայած իր ոչ-մանկական խիզախությանը, չէր կարող դիմակայել: Նա այդ ցավի մասին չէր կարող պատմել մորը, ամենահարազատ, անսահման թանկագին մարդուն, որովհետև գիտեր՝ նա կարտասվի և չի կարողանա ոչինչ ասել, իսկ ինքը նրա արցունքները չի կարողանում տանել և սկսում է ինքն էլ լաց լինել: Խոսել հիվանդանոցի բուժքրոջ հետ: Երբ նա առաջին անգամ հայտնվեց իրենց տանը, ինքը շատ էր հավատում, որ նա իրեն կօգնի և այդ պատճառով հիմա այլևս չի հավատում նրան:

Նրա հայացքը սահեց սենյակով մեկ և կանգ առավ իններորդ դասարանի դասագրքերի շարքին, որ կոկիկ դասավորել էր մայրը: Ընկերները և ուսուցիչները հիմա արդեն հազվադեպ էին այցելում իրեն, և իր երբեմնի սիրելի գրքերը, ոչ մեկին պետք չգալով, փոշով էին ծածկվում: Մենակությունը սեղմում էր սիրտը:

– Տե՛ր Աստված,– տղայի բերանից ակամա դուրս թռան բառեր, որոնց նշանակության մասին մինչև այդ օրը հազվադեպ էր մտածել,– Տե՛ր, ինչի համար է այս բոլորը:

Եվ այդ պահին ո՞վ, հրաշք,– սենյակը լուսավորվեց հրաշալի լույսով և անուշահոտությամբ: Նա փակեց աչքերը և, նույնիսկ այդպես, փակ աչքերով, տեսավ մի պատանու, որը նստեց իր անկողնու եզրին:

– Ո՞վ ես դու,– հարցրեց տղան և բացեց աչքերը:

– Բանբեր եմ,– պատասխանեց տղան:– Քո պահապան հրեշտակը: Ամեն օր Տիրոջ աչքի առջև ես պատասխանատու եմ քեզ համար. քո արարքների, մտքերի, զգացմունքների համար:

– Տիրոջ աչքի առաջ,– նորից հարցրեց տղան:– Դու նրան տեսնում ես ամեն օ՞ր:

– Այո՛: Դու հիմա կանչեցիր Նրան:

Սաշան գլխով արեց, և նրա սիրտը սեղմվեց կատարվածի ահավորությունից և վեհությունից:

Գողգոթա

...Քաղաքի փողոցներում ոռնում էր քամին, աղջամուղջ էր, և գրգռված մարդկանց ամբոխները հոսում էին դեպի Գողգոթա: Իշխանությունները նրանց համար պատրաստել էին այն ժամանակներում սովորական մի ուրախություն՝ երեք հանցագործների մահապատիժ խաչելությամբ: Ամենամեծ ամբոխը քաղաքից իր հետևից տանում էր երեք մարդկանց՝ հսկայական խաչափայտերը ուսերին: Նրանցից երկուսը կեղտոտ էին, սարսափազդու և շղթայակապ, երրորդին Սաշան չհասցրեց տեսնել, որովհետև նրա ուշադրությունը գրավեց Ճամփորդը, որ նույնպես գնում էր պահակախմբի ուղեկցությամբ, բայց այլներ տանող մյուս երկուսից մի փոքր հեռու: Այն պահից, երբ տղայի հայացքն ընկավ այդ Մարդու վրա, մնացած ամեն բան ասես դադարեց գոյություն ունենալուց:

Սաշայի վրա տպավորություն թողեց ո՛չ նրա ծայրահեղ հյուծվածությունը, որը ստիպում էր Ճամփորդին ամեն պահ կանգ առնել, ո՛չ արնոտ վերքերին կպած և ամեն քայլի հետ ցավ պատճառող հագուստը: Ո՛չ, նրան ցնցեց մի այլ բան՝ մի ինչ-որ ոչ-երկրային վեհություն, ինչ-որ անմարդկային ուժ, որ կար այդ աղաղակող տկարության մեջ: Այդ ժամանակ, մենության և հուսահատության գագաթնակետին, տղային հացի պես հենց այդ ուժն էր պետք: Բայց Սաշային ավելի շատ ցնցեց մի ուրիշ բան: Թվում էր՝ Տառապյալին ուղեկցող մարդկանցից և ոչ մեկը Նրա մեջ չէր տեսնում այն, ինչ փնտրել և այդ Մարդու մեջ գտել էր երեխայի տանջահար հոգին: Ընդհակառակը, Նրա վրա ծիծաղում էին, Նրան հրում էին, ծեծում, Նրա վրա թքում էին, ծաղրում. այն լեզուն, որով խոսում էին այդ մարդիկ, տղային անծանոթ էր, բայց շարժումները բառերից էլ խոսուն էին:

Մինչ այդ ամբոխը քաղաքից դուրս եկավ և տարածվեց մի փոքր հեռու գտնվող ոչ բարձր սարի շուրջը: Տարօրինակ մշուշ էր կանգնած մահապատժի վայրում, օդը ծանր էր և լարված, տղան վատ զգաց, և նրա նվաղած ուժերը պահում էին միայն նրա լռակյաց ուղեկցի՝ աչքերը մինչև գետին խոնարհած ոսկեգանգուր պատանու մերձավորությունը: Արդեն չէր երևում, թե ինչ էր կատարվում սարի վրա, և Սաշայի հայացքը ցրված սահում էր իրեն շրջապատող մարդկանց վրայով: Համարյա բոլորը ուրախ էին և գրգռված. բոլորը պատրաստվում էին տոնին, և սպասվող տեսարանը նրանց համար նախատոնական զվարճանքներից մեկն էր: Այդ խայտաբղետ, բազմադեմ ամբոխի մեջ նա լացակումած աչքերով միայն մի քանի կանանց նկատեց:

Լսվեց հարվածի մի խուլ, ընդհատ ձայն. խաչերի հիմքին լայնակի գերաններն էին ամրացնում: Այնու-

հետև հարվածը կրկնվեց, և նույն պահին խլացավ սուր աղաղակներից և լուտանքներից: Կանայք սուգ ու շիվան բարձրացրեցին. նրանց վրա գոռգոռացին, և լռած ամբոխի վրա դանդաղորեն սկսեցին բարձրանալ երեք խաչեր՝ դրանց վրա խաչված մարդկանցով:

Երեխայի աչքերը մթնեցին, այնտեղ՝ կենտրոնական, ամենաբարձր խաչի վրա, նա տեսավ այն Մարդուն, Ով ընդհանուր ցավի մի քանի րոպեների ընթացքում անսահման մոտիկ մարդ դարձավ: Բայց մթնեց նաև մահապատժի վայրում: Թվում էր՝ արևն իր երեսը շրջեց կատարվածից, և միայն հոգևոր տեսողությամբ կարելի էր տարբերել, թե ինչպես բացվեցին Նահատակի շուրթերը, և Նա մի քանի բառ արտասանեց.

– Ինչ ասաց Նա,– շշնջաց Սաշան՝ այդ Մարդուն օգնելու ցանկության մղումով:

– Նա ասաց. «Տե՛ր, ների՛ր նրանց, չգիտեն՝ ինչ են անում»*, – աչքերը չբարձրացնելով գետնից, դանդաղ արտաբերեց նրա ուղեկիցը:

Սաշայի սիրտը սեղմվեց սարսափելի կանխազգացումից:

– Ո՞վ է այդ Մարդը,– արտաբերեց նա վերջապես:

– Աստծո մարմնացյալ Բանը: Ճշմարտությունը, քո Ճանապարհը և քո Փրկությունը: Թագավորը երկնքի և երկրի:

* Ղուկ. 23, 34:

Պատանին արտասանում էր բառեր, որոնք միայն ուժեղացնում էին կատարվածի ցավը և ոչինչ չէին բացատրում:

– Ես չեմ հասկանում,– ասաց վերջապես տղան:

– Նա Աստված է, որ Մարդ դարձավ, որպեսզի մարդն աստվածանա:

Սաշան չէր հասկանում: Ո՞ր մարդը պետք է աստված դառնա: Ահա այս շքեղ հագնված հռոմեացին, որը կառավարության օրինականացրած ավանդույթով ստացավ զվարճանքի իր չափաբաժինը: Կամ այն աղքատ, ցնցոտիավոր սամարացին՝ կեղտոտ և զզվելի, որ նույնիսկ հիմա, կատարվող դժբախտության առջև կոպեկի համար ծամածռվում է ամբոխի դիմաց: Կամ ինքը՝ Սաշան՝ բզկտված տանջալից հիվանդությունից, ծայրաստիճան հուսահատված:

Թագավո՞ր: Իսկ ո՞ւր են թանկագին քարերով զարդարված ոսկե գահավորակը, աշխարհին անծանոթ կտորներից կարված հագուստները, գայիսոնը և աշխարհագունդը ձեռքին:

Նա Ինքը՝ Տերն է հիմա ընդունում է աշխարհում ամենախայտառակ և տանջալից մահապատիժը՝ աղքատ, վիրավոր, հայհոյված, արհամարված և՛ իշխանություններից, և՛ մարդկանցից, և՛ խաժամուժից:

Սաշան լռում էր և արտասվում, այն ամենը, ինչ որ տեսնում էր իր շուրջը, այնքան հակասում էր այն ամենին, ինչ որ կատարվում է իր հոգում: Այո՛, ո՛չ Նա

«որ երկնքում ես», աղոթքի միջի անիմանալին, որին նա երբեք չէր զգացել և չէր հասկացել, այլ Սա՛ է իր տանջահարված և տառապած, կարեվեր հոգու, իր բզկտված մարմնի Տերը ...

Հանկարծ մի նենգ միտք կայծակի պես շանթահարեց նրան: Նրա աչքերը մի ակնթարթում չորացան, հայացքը դարձավ կոպիտ: Նա հիշեց իր դժբախտության և իր վիրավորանքի մասին:

– Զէ՞ որ Նա Աստված է: Նշանակում է՝ Նա Ինքն է այդ մահը ցանկացել:

– Եվ այո, և՛ ոչ,– պատասխանեց նրա ուղեկիցը, սևեռուն նայելով տղային:– Նայի՛ր:

Գեթսեմանի

...Լուսնի լույսը ողողել էր Գեթսեմանիի պարտեզի բացատներն ու արահետները: Ոչ մեկը չկար և զարմանալի խաղաղություն էր տիրում, ասես բնության մեջ ամեն բան շունչը պահած սպասում էր վերահասին: Այդ գիշերվա լռությունը նման էր այն ահավոր օրվա աղջամուղջին, որն այժմ երեխայի հոգում ապրում էր տանջալից, անասելի ցավով: Լռում էին տերևները և խոտը, լռում էին ծղրիդները, լռում էին չորս տղամարդիկ՝ առանձնացած այգու գողտրիկ անկյունում: Նրանցից մեկը Նա էր, ով քիչ առաջ լալիս էր խաչի մոտ: Այդ մարդը կենդանի էր, նրա վրա բռնության ոչ մի նկատելի հետք չկար, բայց նրա աչքերում խորունկ, անասելի ցավ կար: Թևերն անզոր կախվել էին, կարծես ուսերին մարդկային ուժերից վեր մի բան էր ընկած: Նա մի քանի բառ ասաց իր գլխահակ ուղեկիցներին, հեռացավ և մթության մեջ վայր ընկավ ասես իր բեռան ծանրությունից: Մնացածները լուռ ընկան խոտերի վրա:

Սաշան հարցական հայացքով նայեց իր ուղեկցին:

– «Հոգիս տխուր է մահու չափ. այստեղ մնացե՛ք և ինձ հետ հսկեցե՛ք»*, – այսպես ասաց Նա,– պատասխանեց պատանին նրա հայացքին:

Դա աղոթքի ժամն էր: Ժամերը, րոպեները, թե՞ ակնթարթներն էին թռչում՝ ոչ մեկը չէր կարող ասել: Աղոթողը մե՛րթ ծնկի էր իջնում, մե՛րթ կրկին երեսի վրա ընկնում խոտերին: Նրա մեջ մղվող պայքարը, հավանաբար, մարդկային ուժերից վեր էր, այդ աղոթքի լարվածությունն այնպիսին էր, որ ուղեկցողները չկարողացան տանել Նրա տառապանքների մի չնչին մասն անգամ, քնեցին ծանր, խառնակ քնով... Եվ Նրա քրտինքը նման էր գետնին թափվող արյան կաթիլների:

– Ինչ է, այդ ինչ է կատարվում Նրա հետ,– ուզում էր հարցնել Սաշան, բայց ոչ մի բառ իսկ չկարողացավ արտաբերել:

* Մատթ. 26, 38, Մարկ. 14, 33:

– Նա հիմա, Մարդ լինելով, պատրաստվում է իր վրա վերցնել մարդկային ատելության ամբողջ բեռը, մարդկային մեղքերի ամբողջ ծանրությունը՝ և՛ անցած, և՛ ապագա ժամանակների, որպեսզի կամավոր մարտիրոսական մահով բաց անի մեռելների թագավորության դարպասները և այն սրբագործի Իր Աստվածային ներկայությամբ,– Սաշան այդ խոսքերը լսեց իր սրտում, թեև վստահ էր, որ իր ուղեկիցը լռում էր:

Նրանց ականջին հասնում էին աղոթքի արտահայտությունների պատառիկներ, առանձին խոսքեր, և հատկապես հստակ լսվեց դրանցից մեկը:

– «Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ ուզում, այլ՝ ինչպես Դու»*, – ցածրաձայն կրկնեց ոսկեգանգուր պատանին:

– «Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ ուզում, այլ՝ ինչպես Դու»,– նրա հետևից արտաբերեց տղան և փակեց աչքերը:

– Իսկ ինչ եղավ հետո,– առանց աչքերը բացելու հարցրեց նա:

Հետո եղավ այն, ինչ արդեն տեսար,– պատասխանեց հրեշտակը,– ձերբակալությունը, տանջանքները, խաչելությունը:

* Մատթ. 26, 39, Մարկ. 14, 35, Ղուկ. 22, 42:

– Եվ Նա մեռա՞վ,– սարսափով հարցրեց տղան, զգալով, որ եթե այդ մարդը մահացել է, նշանակում է, Աստված էլ մահացել է, և իրեն ոչ մի ուրիշ Աստված պետք չէ, և նշանակում է՝ Աստված չկա:

– Այո՛: Նա մեռավ մարմնով և իջավ մեռածների թագավորություն: Բայց մահը իշխանություն ունի միայն նրանց վրա, ում քայքայել է մեղքը: Իսկ ով մեղք չունի և լցված է անչափ սիրով, նրա վրա իշխանություն չունի: Այն չկարողացավ իր ձեռքում պահել Նրան: Նա հարություն առավ և վերադարձավ Իր Երկնային Բնակարանը: Նա բացեց ճանապարհը, որով յուրաքանչյուր մարդ կարող է վերադառնալ իր Հոր մոտ, որից հեռացավ, ինչպես անառակ որդին՝ առանց երախտագիտության և ապաշխարության: Շատ-շատերն արդեն անցել են և դեռ անցնում են այդ ուղիով, և արդեն հեռու չէ այն պալատը, որտեղ «ոչ արցունք կա, ոչ հոգոց, այլ կյանք հավիտենական»: Եվ դու գնում ես այդ ճանապարհով, Սաշա:

«Ու՞ր է, մա՛հ, քո խայթոցը: Դժոխք, ո՞ւր է քո հաղթանակը»*, – տղայի ականջներում հնչեցին վերջին զատկական գիշերը եկեղեցու գավթում իր լսած բառերը:

Եվ հանկարծ նա ամեն ինչ հասկացավ: Ուրախությամբ, ցնծագին ուրախությամբ լցվեց նրա սիրտը, և աշխարհում ամենից շատ ցանկացավ այդ ուրախութ-

* Օսեե 13, 14, Ա Կորնթ. 15, 55:

յունը կիսել ամենասիրելի և մոտիկ մարդկանց հետ՝ մայրիկի, քրոջ, մաթեմատիկայի ուսուցչուհու, որն ավելի երկար էր մնում իր մոտ, քան մյուսները...

– Եվ մահ այլևս չկա՞,– հարցրեց նա, որպեսզի վերջնականապես համոզվի իր հայտնագործության մեջ:

– Եվ մահ այլևս չկա: Նրանց համար, ովքեր հավատում են Քրիստոսին և գնում են Նրա խաչի ճանապարհով՝ այլևս մահ չկա,– պատասխանեց պատանին՝ սիրով նայելով իր զրուցակցին:

...Երբ մայրիկը սենյակ մտավ, նրան մի պահ թվաց, որ տղան այնտեղ չէ: Ուշադիր նայելով նրա հիացած, պայծառացած դիմագծերին, նոր միայն հասկացավ, որ նրա հետ ինչ-որ բան է կատարվել: Նա նստեց մահճակալի եզրին, բռնեց նրա ձեռքը, և նրանք երկար լռում էին:

– Մայրի՛կ... Մայրի՛կ, մենք Ավետարան ունենք,– հարցրեց վերջապես տղան...

ԴՈՒ ԻՄ ԱՄՐՈՑՆ ԵՍ

– Ներեցեք, Տատյանա Պետրովնա,– դիմեց իր ուղեկցին Մարինան,– կարելի՞ է իմանալ՝ քանի տարեկան եք:

– Օ՜խ, աղջիկս,– ժպտաց տատիկը, իմ տարիքում, տարիները չես թաքցնի: Ութսունվեցս լրացել է:

– Ինչպե՞ս եք այսքան ճանապարհ կտրել:

– Տերն ամրացնում է: Համարյա երկու հազար վերստ ուժերս բավականացրեցին և, Աստված կտա, կհասնեմ, քրոջս կտեսնեմ: Թեև նա ինձանից կրտսերն է, բայց անկողնային հիվանդ է: Մանկական տարիքում ես էլ եմ շատ տառապել, ընկնավորություն ունեի: Թշնամուս այդպիսի հիվանդություն չեմ կամենա: Սոսկալի ցնցումներ էի ունենում, իսկ աջ ձեռքս թուլացել էր և կախվել էր ինչպես մտրակ: Զարշարվեցի ես տասնվեց տարի շարունակ:*

– Իսկ ինչպե՞ս բուժվեցիք:

– Տերն օգնեց: Նա իմ ամրոցն է: Նա է իմ ուժը:

– Եկեղեցի՞ էիք գնում:

* Հին ռուսական չափ, որ հավասար է 1066,8 մ. *(ծնթ. խմբ.)*:

– Երեսունական թվականներին մեր եկեղեցիները բոլորը քանդեցին: Հայրս ու մայրս աղոթում էին, բայց սրբապատկեր չէին պահում տանը, վախենում էին: Մեծ ընտանիք ունեինք, բացի ինձանից՝ ևս չորս երեխա: Իսկ մորաքույրս շատ աստվածասեր էր, անկյունում սրբապատկերներ էին կախված, և կանթեղն էլ միշտ վառվում էր: Ես նրա մոտ խաճախ էի գնում: Այսպես: Մի անգամ երազում մի հրեշտակ եմ տեսնում, որն ինձ ասում է. «Այստեղ քեզ ոչ մեկը չի օգնի, մեկնի՛ր Կիև»:

Արթնացա, վառարանից ցած թռա ուղիղ մորս մոտ:

– Մայրի՛կ, արագ ինձ օգնի՛ր վերարկուս հագնեմ, վազեմ մորաքրոջս մոտ:

Մայրիկը ձեռքերն իրար զարկեց:

– Նայիր պատուհանից դուրս, դեռ մութ է:

– Մայրիկ, այնպիսի երազ եմ տեսել, պետք է մորաքրոջը պատմեմ:

Տատյանա Պետրովնան մտորում էր, ապա շարունակեց.

– Այնպե՞ս էի ուզում գնալ այնտեղ: Եվ պարզվեց, որ դա իզուր չէր: Ես չգիտեի, որ մորաքրոջս մոտ այդ գիշերը անսովոր հյուր կար՝ մի ծպտյալ միանձնուհի Կիևից: Այն ժամանակ մենաստանները բոլորը փակված էին, իսկ վանականները և միանձնուհիները թաքնվում էին սովորական հագուստի տակ:

Երբ ես մտա մորաքրոջս տուն, այդ կինը, տեսնելով ինձ, ասաց.

– Ահա և ինքը եկավ:

Մորաքույրս և ես տարակուսած իրար նայեցինք. այնուհետև հյուրը բացատրեց.

– Կիևից մի ծեր է ուղարկել ինձ Տամբով՝ հիվանդ աղջկան տանելու: Ես էլ մեկնեցի: Հասա ձեր քաղաքը, իջա գնացքից և քայլեցի, ինքս էլ չիմանալով, թե ուր: Քայլում եմ, իսկ այս տան մոտ ոտքերս իրենք իրենց կանգ առան: Մտա և օթևան խնդրեցի:

Կարծես կրկին վերապրելով հեռավոր անցյալը՝ Տատյանա տատիկը խաչակնքեց և շարունակեց:

– Պատմեցի ես իմ երազը, իսկ միանձնուհին ասում է.

– Դու կգաս ինձ հետ: Գնա՛ ծնողներիդ մոտ, թող փաստաթղթերդ պատրաստեն, և արի երկաթուղային կայարան: Ես քեզ այնտեղ կսպասեմ:

– Եվ դուք ծնողների մոտ գնացի՞ք:

– Ոչ թե գնացի, այլ վազեցի և խնդրեցի հորս ու մորս, որպեսզի ինձ բաց թողնեն: Մայրս դեմ էր և անդադար համոզում էր ինձ.

– Տանեչկա, մենակ ո՞ւր գնաս, այդ կնոջը մենք բոլորովին չենք ճանաչում:

Իսկ հայրս, տեսնելով իմ մշտական տանջանքները, վճռականորեն ասաց.

– Թող գնա՛: Գնանք, աղջիկս, փաստաթղթերդ ձևակերպենք:

Եվ ինքն էլ հետս ինձ կայարան տարավ:

Մենք գնացք նստեցինք և մեկնեցինք Կիև: Կիսավեր մենաստանից ոչ հեռու մի տուն կար, որտեղ ապրում էին առաջին հայացքից սովորական բնակիչներ: Բայց նրանք միանձնուհիներ էին: Նրանց համար խուց էին ծառայում փոքրիկ սենյակները: Նեղ, երկար միջանցքում մի մեծ սեղան կար: Այդ միջանցքը սեղանատունն էր: Այնտեղ էին հավաքվում եկվորները:

Այնտեղ տարան նաև ինձ: Մոտեցրին մի դռան, և իմ ուղեկցուհին բարձրաձայն ասաց.

– Մատուշկա* Ռաֆայիլա: Ես ձեզ հիվանդ աղջիկ եմ բերել Տամբովից:

Դուռը բացվեց, և շեմին երևաց բարձրահասակ, ձիգ մի կին, որը ինձ հայացքով քննեց և ասաց.

– Նա իմ հիվանդը չէ, թող դիմի բժշկի,– և փակեց դուռը:

Ես ծնկի իջա և դառնորեն լաց եղա: «Ինչպե՜ս,– մտածում եմ,– այնքա՞ն հույս ունեի, այսքան ճանապարհ կտրեցի: Ինչի՞ համար է ինձ այս հիվանդությունը: Թե՞ ես ինչ-որ բանում մեղավոր եմ: Թե՞ իմ ծնողները»:

Հանկարծ դուռը կրկին բացվեց և մատուշկա Ռաֆայիլան, հայտնվելով գրտնակը ձեռքին, ասաց.

– Ո՛չ, դու մեղավոր չես, ո՛չ էլ ծնողներդ: Այլ քո վրա պետք է հայտնվի Տիրոջ փառքը: Վե՛ր կաց:

* Մատուշկա - ռուսական միջավայրում այդպես են դիմում մայրապետերին, երևելի կանանց, քահանայի կնոջը՝ երեցկնոջը, միանձնուհիներին և այլն *(ծնթ. խմբ.)*:

Ես վեր թռա, իսկ մատուշկան գրտնակով բզեց մի անգամ կրծքիս տակ, հետո մի քանի անգամ թեթևակի խփեց ձեռքերիս և ինձ տարավ Միխայիլ քահանայի մոտ: Քահանան երկար խոսեց ինձ հետ, այնուհետև խոստովանեցրեց և հաղորդություն տվեց:

Իմ ետևից եկավ այն միանձնուհին, որ բերել էր ինձ, և տարավ սեղանատուն: Ճանապարհին ես մտածում էի. «Տեր Աստված, ինչքան լավ է այստեղ: Ինչ լավ կլիներ՝ ընդմիշտ այստեղ մնայի: Ես ամեն ինչ կտանեի»:

Բոլորն արդեն հավաքվել էին սեղանատանը: Սեղանին դրված էր կտրատված հացով ափսե, կաթ: Աղոթեցին, նստեցին: Ես ձախ ձեռքս մեկնեցի հաց վերցնելու: Մատուշկա Ռաֆայիլան բաժակի մեջ քառորդ մաս շաքարավազ լցրեց, կաթ ավելացրեց և դրեց սեղանի մեջտեղը:

– Սպասի՛ր, սիրելի՛ս,– ինձ դիմելով ասաց նա,– ոչ թե հաց վերցրու, այլ այս բաժակը, այն էլ ոչ թե ձախ ձեռքով, այլ աջով:

– Մատուշկա, ախր չէ որ աջ ձեռքս հիվանդ է, ես բաժակը չեմ կարողանա պահել:

– Քո ձեռքը առողջ է, առողջ,– շարունակում էր պնդել մատուշկան:

Ես ենթարկվեցի. վերցրեցի բաժակով կաթը, և ի զարմանս ինձ, չգցեցի: Խմելով կաթը միևնույն շաքարավազը՝ դրեցի սեղանին: Մատուշկան ինձ էր հետևում:

– Իսկ դու կարծում էիր, Տանյա՛, ամեն ինչի կդի-

մանաս: Մենաստան մտնելը քո բանը չէ, քոնը չէ: Դու դեռ ամուսնանալու ես:

– Տանյա տատիկ, իսկ որտեղից գիտեր մատուշկա Ռաֆայիլան,– չհամբերելով հարցրեց Մարինան:

– Նա արդարի կյանքով էր ապրում, ահա և Տերը նրան այդպիսի շնորհ էր տվել: Ես էլ էի այն ժամանակ զարմանում: Այդ պահից էլ ես ինձ առողջացած զգացի:

– Եվ դուք էլ ոչ մի անգամ չհիվանդացաք:

– Այն սոսկալի հիվանդությունը հեռացավ ընդմիշտ: Մրսածություն լինում էր: Ոչ մի լուրջ բան:

– Հետո ինչ եղավ:

– Հետո եկավ հայր Միխայիլը և ասաց, որ ես պետք է տուն մեկնեմ, ինչ-որ փաստաթղթի հետևից:

– Եվ դուք մեկնեցիք:

– Այո՛, ես մեկնեցի, բայց պարզվեց, որ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հավաքվել էին, իսկ հայր սուրբը ինձ տուն ուղարկեց, որպեսզի մարդիկ Աստծուն փառաբանեն: Ինչպես է մեզ մոտ գյուղում: Շունը գյուղի մի ծայրում հաչի, մյուս ծայրում կլսվի: Նոր էի գյուղ մտել, և իմ հրաշալի բուժման մասին լուրը տարածվեց մի ծայրից մյուսը: Միգուցե այդ ժամանակ ինչ որ մեկը դարձի եկավ դեպի Աստված:

Ծանր էր կյանքը, բայց Աստված միշտ ամրացնում էր: Ես ամուսնացա, տղա ծնվեց: Երբ նա մեծացավ և ամուսնացավ, մենք ամուսնուս հետ մեկնեցինք այն-

տեղ, ուր ձմերուկ է աճում: Երևի ցանկացանք կյանքը քաղցրացնել:

Ամուսնուս հետ վատ էինք ապրում: Անհավատ էր նա: Աստծուն ընդհանրապես չէր ընդունում, հայհոյում էր ինձ, ծեծում: Եվ տղաս էլ անհավատ մեծացավ: Հիմա, ճիշտ է, խաչ է կրում:

– Տատյանա Պետրովնա, իսկ հիմա ո՞ւմ հետ եք ապրում,– հետաքրքրվեց Մարինան:

– Մենակ: Տասը տարի է՝ ծերուկը մահացել է: Ես հիմա մշտապես եկեղեցում եմ, երգչախմբում եմ երգում: Իմ բանջարանոցն ունեմ, ամեն ինչ աճեցնում եմ: Ձմերուկներս մեծ են, քաղցր: Արի՛ ինձ մոտ՝ ձմերուկ ուտելու:

Արդեն մթնում էր: Գնացքը դանդաղեցրեց ընթացքը, շուտով կերևա կայարանը: Տանյա տատը սկսեց հավաքվել:

– Ձեզ որևէ մեկը կդիմավորի:

– Ոչ մեկին չեմ հայտնել, որ գալու եմ: Ո՞վ պիտի դիմավորի, եթե մինչև գյուղ չորս կիլոմետր քայլելու ճանապարհ կա:

– Մենակ ինչպես կգնաք:

– Այդպես էլ կգնամ, աղջիկս, երգելով. «Դու իմ ամրոցն ես, Տեր, Դու իմ ուժն ես»:

Մարինայի հոգում դեռ երկար լսվում էին դեպի հեռուները քայլող փոքրիկ, ալեհեր տատիկի խոսքերը...

Նորեկը

Աղմկոտ և անհաշտ յոթի «Բ» դասարանը նորեկի գալու հետ՝ իր և ուսուցիչների համար աննկատ, սկսեց աստիճանաբար փոխվել: Իլարիան շատ փխրուն էր, և թվում էր՝ եթե նրա վրա գոռան, ապա կփշրվի մանր բյուրեղիկների: Եվ նույնիսկ ֆիզիկայի ուսուցիչը, որ նոր նյութը շատ բարձրաձայն էր բացատրում, սկսել էր ավելի ցածրաձայն խոսել: Իսկ երբ մոռանում էր, և ձայնը սկսում էր որոտալ, կանգ էր առնում և նայում էր Իլարիային, կարծես ստուգելով՝ նրա հետ ամեն ինչ կարգին է:

Աղջիկներն ու տղաները ձգվեցին դեպի նորեկը: Թեև բնությամբ առաջնորդ չէր, բայց ինչ-որ անհասկանալի բան ձգում էր բոլորին դեպի նա՝ բացի մեկից՝ Վալերիկից: Վալերիկն ամբողջ դպրոցի ահ ու սարսափն էր, ուսուցիչների գլխացավանքը. Իլարիայի ետևում էր նստում: Մի անգամ հանրահաշվի ստուգողականի ժամանակ Իլարիայի թիկունքում նա շշնջաց.

– Լսի՛ր, թո՛ղ արտագրեմ:

Իլարիան, ոչ մի բառ չասելով, տետրը տեղաշարժեց այնպես, որպեսզի նրան երևար: Վալերիկը գոհ մնաց: Որպես կանոն, նա դպրոց էր գալիս տնայինները չկատարած, իսկ դասից առաջ որևէ մեկից արտագրում էր: Ոչ մեկը նրան չէր մերժում, բոլորը վախենում էին:

– Զտաս՝ ճակատիդ կստանաս,– ասում էր նա:

Մի անգամ Վալերիկն ասաց Իլարիային.

– Տո՛ւր ինձ տետրերդ, մի քիչ աշխատեմ:

Իլարիան ուշադիր նայեց նրան և ցածրաձայն, բայց հաստատակամ ասաց.

– Չէ՛, արտագրելու չեմ տա: Դա ստուգողական չէ: Տանը առաջադրանքը կատարելու բավական ժամանակ կա:

Վալերիկի սիրտը կանգնեց՝ նրան մերժել էին: Դեռ այդպիսի բան չէր եղել:

– Դե տե՛ս՝ հետո չզղջաս:

Սվետան՝ Իլարիայի նստարանի հարևանուհին, մեկնեց իր տետրերը և ասաց.

– Վերցրո՛ւ, արտագրի՛ր, միայն նրան հանգիստ թող:

Վալերիկը ծամածռվեց, բայց տետրերը վերցրեց:

Դասերից հետո աղջիկները միասին դուրս եկան դպրոցից: Վալերիկը ոչ մի տեղ չէր երևում: Սվետան թեթևացած շունչ քաշեց, բայց հազիվ էին հեռացել, երբ անկյունից դուրս եկավ տղաների խումբը Վալերիկի գլխավորությամբ: Աղջիկները այս ու այն կողմ փախան: «Փախնենք» – գոռաց Սվետան Իլարիային,

բայց նա, շփոթվելով, տեղում կանգնած մնաց: Տղաները շրջապատեցին նրանց: Մեկը, Սվետային մի կողմ հրելով, հարցրեց.

– Վալերկա՛, քո «մատնաչափիկին» ինչպե՞ս պատժենք: Նա մի հարվածից ցրիվ կգա:

– Վերցրո՛ւ պայուսակը և մի՛ խոսիր,– ասաց Վալերիկը:

Իլարիայի պայուսակը խլեցին ձեռքից և սկսեցին այն մեկմեկու նետել:

Հետո Վալերիկն ասաց:

– Այսօրվա համար բավական է: Վաղը առավոտյան քո տետրերը պետք է դրված լինեն իմ սեղանին: Ամեն ինչ հասկացա՞ր:

– Ես խղճում եմ քեզ, Վալերի,– ցածրաձայն ասաց Իլարիան:

– Գնա՛ այստեղից: Խղճահարվողիս տես: Տե՛ս հա:

Հաջորդ օրը Սվետան և մյուս աղջիկները սկսեցին համոզել Իլարիային՝ տետրերը տալ Վալերիկին՝ արտագրելու, բայց աղջիկն ասաց.

– Այդպես չի կարելի, մենք նրան նվաստացնում ենք: Նա չի հասկանում՝ ինչ է անում, իսկ մենք նրան խրախուսում ենք:

Բայց Վալերիկը դպրոց չեկավ, նա չհայտնվեց նաև հաջորդ օրը

– Ինչ է պատահել Վալերային,– հարցրեց Իլարիան Սվետային:

Այդպես պատահում է: Ոչ մեկին հայտնի չէ, թե ինչով է նա զբաղված: Քանի անգամ դասղեկը կանչել է նրա մորը դպրոց, բայց նա միշտ ասում է, որ մայրը գործուղման մեջ է:

Իլարիան գիտեր, որ Վալերին ապրում է հարևան շենքում, մի անգամ ինքը տեսել էր նրա մուտք մտնելը: Բակում խաղացող երեխաներից աղջիկն իմացավ բնակարանի համարը: Դուռը բացեց ինքը՝ Վալերան: Նա շատ զարմացավ, երբ տեսավ Իլարիային:

– Ինչո՞ւ ես եկել,– շշնջալով հարցրեց նա:

– Դու հիվանդացե՞լ ես: Ինչ-որ բա՞ն է պատահել: Ինչո՞ւ երկու օր է դպրոց չես գալիս:

– Քեզ ի՞նչ: Գնա՛ այստեղից:

Վալերիկը կանգնած էր դռների մեջ՝ չթողնելով անցնել: Բայց և այնպես նրան հաճելի էր, որ ինչ-որ մեկը նկատել է իր բացակայությունը: Բնակարանի խորքից Իլարիան լսեց կանացի մի թույլ ձայն.

– Վալերա, ո՞վ է եկել: Նե՛րս հրավիրիր:

– Սխալվել են,– պատասխանեց տղան:

– Ո՛չ, ո՛չ, ես ճիշտ եմ եկել,– ասաց Իլարիան:

Վալերիին մնում էր միայն նրան ներս թողնել:

Իլարիան մտավ սենյակ և քարացավ: Պատին կախված էր Աստվածամոր սրբապատկերը, գրադարակին դրված էին փոքր սրբապատկերներ և վառվում էր կանթեղը: Աղջիկը խաչակնքեց և մոտեցավ հիվանդի անկողնին: Կնոջ աչքերը ուրախություն էին

ճառագում: Նա քնքշորեն նայում էր Իլարիային: Որդին, մոր հիվանդության մի քանի ամիսների ընթացքում առաջին անգամ աչքերում փայլ տեսավ:

– Վալերան ամաչում է, որ ես հավատացյալ եմ և որ մեր տանը սրբապատկերներ կան: Նա մտածում է, որ կծաղրեն իրեն, այդ պատճառով էլ ոչ մեկին տուն չի հրավիրում, նույնիսկ իր ընկերներին: Իսկ երբ դու խաչակնքեցիր, ես մտածեցի. «Տերն է քեզ մեզ մոտ ուղարկել»: Անունդ ինչ է:

– Իլարիա:

– Ինչ գեղեցիկ և հազվադեպ անուն է: Դա մի մարտիրոսուհու անուն է: Դու գիտե՞ս, ինչ է նշանակում այդ անունը:

– Այո՛, ինձ մայրիկս ասել է՝ խաղաղ, պարզ:

– Քեզ շատ է սազում: Իսկ Վալերի նշանակում է՝ աշխույժ, ամուր: Այդպես էլ կա: Նա և՛ ինձ է խնամում, և՛ բնակարանն է հավաքած պահում, և՛ ուտելիք է պատրաստում: Մենք ոչ մեկը չունենք: Նույնիսկ չգիտեմ, թե երբ է հասցնում դասերը պատրաստել: Երբ ավելի եմ վատանում, նա դասերն է բաց թողնում: Բայց ստուգողականից «լավ է» ստացել, ինձ ցույց է տվել: Ինչպե՞ս է դպրոցում իրեն պահում:

Վալերին ունքերի տակից նայեց Իլարիային:

– Լավ: Բոլորը նրան լսում են,– ասաց աղջիկը:

Մարիա Իվանովնան, այդպես էր Վալերիի մոր անունը, հոգնած փակեց աչքերը: Կողքի սեղանի վրա՝ մահճակալի կողքին, դրված էր հավի արգանակով կերակուրը: Պարզ էր, որ Իլարիայի գալուց առաջ Վալերին կերակրում էր մորը:

– Մենք ձեզ հիմա կկերակրենք, և եթե դուք դեմ չեք, Վալերայի հետ դաս կսովորենք: Շուտով քառորդի վերջն է, նա չպետք է ետ մնա, ճիշտ է, Վալերա:

– Այո՛,– ցածրաձայն պատասխանեց տղան:

Այդ խոսակցության ժամանակ Վալերիկը սկզբում վախով և հուզմունքով, իսկ հետո երախտագիտությամբ էր նայում Իլարիային:

Աղջիկն օգնեց Վալերիին տնային գործերում, իսկ մայրը, ընդունելով դեղը, քնեց: Հիվանդի դեմքը հանգիստ էր, և հազիվ նկատելի ժպիտ թրթռաց նրա շուրթերին:

Վալերին և Իլարիան գնացին մյուս սենյակը՝ դասերը պարապելու:

Նրանք միասին կատարեցին տնային առաջադրանքները, իսկ հետո երկար խոսում էին: Իլարիան պատմում էր այն մասին, թե ով և ինչպես է արարել աշխարհը և Աստծո սիրո մասին:

– Իսկ որտեղի՞ց գիտես այդ բոլորը,– հարցրեց Վալերին:

– Ես կիրակնօրյա դպրոց եմ գնում:

Երբ Իլարիան գնում էր, Վալերին ասաց.

– Իսկ դու, պարզվում է, կարգին աղջիկ ես: Էլի՛ արի:

Իմ ավագ եղբայրը

Իմ բախտը շատ է բերել՝ ես ավագ եղբայր ունեմ: Ոչ մեկն այդպիսի եղբայր չունի: Մենք ապրում ենք Միշայի հետ մի սենյակում: Նա ինձ հետ դղյակներ և ամրոցներ է կառուցում կոնստրուկտորներով, հեքիաթներ է կարդում, պատմություններ պատմում: Եղբայրս ինձ սովորեցնում է հեծանիվ քշել, սահել չմուշքներով և լողալ: Իսկ ինչքան բարի է և համբերատար. երբեք չի գոռում ինձ վրա, չի վիրավորում:

Այդպես էլ ապրում էի՝ շրջապատված ավագ եղբորս ուշադրությամբ և սիրով: Բայց երբ մի քիչ մեծացա, նկատեցի, որ նա հաճախ է տխրում: «Ինչո՞ւ,- մտածում էի ես:- Գուցե ես եմ ինչ-որ բանով տխրեցնում»:

Ես սկսեցի ուշադրություն դարձնել, թե ինչ է կատարվում տանը և շուտով նկատեցի, որ հայրիկը չի սիրում Միշային: Ինչպե՞ս առաջ չէի նկատել: Երբ հայրիկն անցնում է մեր կողքով, երբ խաղում ենք, նա անպայման խառնում է իմ մազերը, իսկ Միշայի գլխին կտտացնում է: Երբ մենք վերադառնում ենք զբոսանքից, և ես թաց եմ ու թափթփված, նա բարկանում է ոչ թե ինձ վրա, այլ Միշայի և նույնիսկ անկյուն է կանգնեցնում: Իսկ ամենասարսափելին՝ հայրիկը ծեծում է եղբորս գոտիով, ընդ որում աշխատում է, որ մայրիկն ու ես չտեսնենք: Բայց ես հաստատ գիտեմ, որ ծեծում է, ես Միշայի մեջքին տեսել եմ գոտու հետքերը:

Իսկ Միշան: Նա երբեք լաց չի լինում, ամեն ինչ տանում է և մայրիկին էլ, թեկուզ ինձ, չի բողոքում: Ինչո՞ւ է ծեծում հայրիկը: Ինձ պետք է ծեծել: Ես կոպիտ եմ լինում, անհնազանդ, կամակոր՝ հայրիկիս և նույնիսկ մայրիկիս հետ:

Եվ ահա մի անգամ ես պատահաբար լսեցի հորս և մորս խոսակցությունը: Մայրս ձայնի մեջ արցունքներ՝ ասում էր.

- Ֆեդյա՛, ինչո՞ւ ես այդպես վարվում Միշայի հետ: Չէ որ երբ ամուսնանում էինք, դու գիտեիր, որ ես որդի ունեմ: Ինձ նույնիսկ թվաց, որ նրան սիրեցիր: Բայց Պավլիկի ծնունդից հետո -Պավլիկը ես եմ-, դու նրա հանդեպ վերաբերմունքդ փոխել ես: Ինչի՞ համար ես նրան այդքան հաճախ պատժում և նույնիսկ խփում:

- Ես ձանձրացել եմ Պաշկայից անընդհատ լսել՝ «Իմ ավագ եղբայրը, իմ ավագ եղբայրը»,- նմանակեց նա ինձ: Հայրս վեր կացավ, և ես փախա իմ սենյակ:

«Ահա թե ինչ,- մտածեցի ես:- Նշանակում է՝ Միշան նրա հարազատ տղան չէ,-դատողություններ էի անում ես. բայց չէ՞ որ ծնել է մեր մայրիկը: Հո չէր կարող հարազատ մայրը ծնել օտար տղայի: Հեռուստա-

ցույցով ցույց են տվել, թե ինչպես են մարդիկ բոլորովին անծանոթ երեխաներ վերցնում մանկատներից, ում տեսնում են առաջին անգամ: Իսկ այստեղ մայրիկի հարազատ որդին: Միթե հայրիկը չպիտի սիրի նրան: Ուրեմն, մեկ ուրիշ պատճառ կա»: Ես դեռ երկար մտածում էի և վերջապես հասկացա:

Երբ մայրիկը գնաց աշխատանքի, ես անմիջապես գնացի հայրիկի մոտ:

– Ես գիտեմ, ինչու չես սիրում իմ եղբորը,– սկսեցի ես:– Դու նախանձում ես, որ մեր մայրիկի առաջին ամուսինը լավ տղա է ունեցել, խելացի և բարի: Իսկ դու՝ ունեցել ես ինձ՝ այդքան աղմկոտ, չլսող, զզվելի: Այդ պատճառով էլ չարանում ես Միշայի հանդեպ, ծեծում ես նրան: Եվ ընդհանրապես, եթե Միշան չլիներ, դու ինձ չէիր ենթարկի քեզ: Դու նրանից շնորհակալ պիտի լինես, այլ ոչ թե խփես:

Հայրիկը շատ բարկացավ:

– Այ դու անպիտան,– գոռաց նա:– Ինչպե՞ս ես համարձակվում այդպես խոսել հորդ հետ: Հորդ հետ, ով քեզ ոչ մի անգամ մատով իսկ չի դիպել: Իզուր էի ես քեզ խղճում: Հիմա դու կստանաս. և նա, հանելով գոտին, քաշեց ձեռքիցս: Ես փորձում էի ազատվել, բայց նա ամուր պահել էր ինձ:

Միշան հարևան սենյակում էր և ամեն ինչ լսում էր: Երբ հայրս սկսեց ինձ խփել, նա այլևս չդիմացավ:

– Ինչո՞ւ ես խփում Պավլիկին:

Հայրիկը ինձ բաց թողեց, քաշեց Միշային և սկսեց նրան ծեծել՝ ասելով.

– Ստացի՛ր, ստացի՛ր: Դա նրա համար, որ դու Պաշային իմ դեմ ես լարում:

Ես ցատկեցի դեպի նա, փորձելով գոտին խլել հորս ձեռքից: Նա ինձ կատվի ձագի պես ետ շպրտեց և շարունակեց ծեծել Միշային: Ես սկսեցի այնպես գոռալ, որ հարևանները սկսեցին դուռը ջարդել:

– Ինչ ես անում երեխային,– գայրացան նրանք:– Մենք հիմա ոստիկան կկանչենք:

Բարեբախտաբար եկավ մայրիկը: Նա հանգստացրեց հարևաններին, խլեց գոտին հորիցս, իսկ մեզ ուղարկեց մեր սենյակ:

Բայց Միշան դրա փոխարեն փակվեց լողասենյակում: Իմ թակոցին նա չարձագանքեց: Ես շարունակեցի թակել: Երբ նա դուրս եկավ, նրա աչքերը կարմիր էին:

– Ների՛ր ինձ,– մոթմոթացի ես:

– Դու ինձ գայրացրիր, Պավլուշա,– Միշան կատակով կտտացրեց ճակատիս:

Ես չդիմացա ու լաց եղա և ասացի, որ եթե նա այլևս ինձ չսիրի, ես կմեռնեմ:

Ավագ եղբայրս ժպտաց և փաթաթվեց ինձ.

– Ես քեզ սիրում եմ, Պավլուշա և միշտ էլ կսիրեմ քեզ: Բայց ես կցանկանայի, որ դու սովորես քեզ զսպել:

Մենք դեռ երկար խոսում էինք: Միշան ինձ պատմում էր իր հոր մասին: Պարզվում է՝ նա զոհվել է որպես հերոս ընկերներին փրկելիս: Նրա մայրը, Միշայի տատիկը, ուզում էր Միշային տանել իր տուն, բայց մայրիկը չի համաձայնվել: Իսկ հետո ծնվել եմ ես, և հետո ինքն արդեն չէր ցանկանում գնալ, որովհետև սիրում էր ինձ:

Երեկոյան մայրիկը հեռախոսով երկար խոսում էր Միշայի տատիկի հետ, իսկ հետո հայտարարեց, որ Միշան կմեկնի նրա մոտ ամառանոց երեք շաբաթով, և գուցե մի ամսով: Միշան տխուր էր, բայց չէր առարկում: Ես այդ ժամանակ նորից սկսեցի գոռալ և այնպես բարձր էի գոռում, որ տատիկը, երևի, իմ գոռոցը լսելով, զանգահարեց մայրիկին:

– Լիզենկա, իսկ ինչու,– լսեցի ես ձայնը խոսափողում և անմիջապես դադարեցրի գոռոցս,– երկու երեխաներին էլ չբերես ամառանոց: Երկուսով ավելի ուրախ կլինի, ես էլ մեծ հաճույքով կծանոթանամ քո փոքրիկի հետ:

Հայրիկը, երևում է, ամաչեց մայրիկից, հարևաններից և, գուցե, նաև մեզանից: Նա ձեռքը թափ տվեց և համաձայնվեց: Հաջորդ օրը նա ինքը բոլորիս տարավ տատիկի մոտ ամառանոց:

Տատիկը ալեհեր էր, բայց ոչ ծեր: Նա բարեհամբույր դիմավորեց մեզ և հյուրասիրեց թեյ՝ կարկանդակներով: Թեյի շուրջը խոսակցությունն աշխուժացավ: Տատիկն ասաց, որ ուրախ է մեզ տեսնելու

համար, որ մեր ընտանիքը լավն է և համերաշխ: Նա հատկապես շնորհակալ էր հայրիկից, որ նա կարողացել է մտերմացնել երեխաներին և Միշային հարազատի պես վերաբերվել: Պարզվում է, Միշան այդպես էր նրան գրել: Բայց նա այլ բան չէր էլ սպասում: Չէ՞ որ իր որդին՝ Միշայի հայրը, Պավլիկի հոր լավագույն ընկերն էր:

Տատիկը խնդրեց, որ ամեն տարի ամռանը գանք ամառանոց:

– Ամառանոցը մեծ է,– ասում էր նա,– բոլորս կտեղավորվենք: Գետակը, ձկնորսությունը շատ մոտիկ: Անտառում՝ առատ սունկ:

Հայրիկը անճանաչելի փոխվել էր: Նա ժպտում էր, զվարճալի պատմություններ էր պատմում, շնորհակալություն էր հայտնում հրավերքի համար:

Իսկ մեզ հրաժեշտ տալիս հայրիկը երկուսիս մազերն էլ խառնեց:

Սուրբը վերադարձավ

Տատյանան տանը արտասանում էր երանելի Սերաֆիմին նվիրված օրհներգը*: Նա հաճախ էր իր աղոթքներում դիմում նրան՝ օգնություն ու մխիթարություն խնդրելով, և երանելին արձագանքում էր նրա խնդրանքներին: Ահա հիմա էլ սիրտը մտազբաղ է՝ ինչ նվիրի իր ընկերուհուն՝ Նատալյային անվանակոչության օրվա առիթով**:

Անսպասելի մի միտք ծագեց՝ նվիրել Սերաֆիմ Սարովսկու սրբապատկերը, այն, որի առջև աղոթում էր: Տատյանան փորձում էր ազատվել այդ մտքից, բայց նրան չէր հաջողվում:

* Ռուսերենում՝ акафист - հոգևոր երգեր նվիրված Աստվածամորը, սրբերին, որոնք կատարվում են կանգնած *(ծնթ. խմբ.)*:

** Ուղղափառների ավանդության համաձայն երեխայի անունը տրվում էր ծննդյան 8-րդ օրը՝ մկրտության ժամանակ. որպես կանոն այդ անունը լինում էր տվյալ օրվա հովանավոր սրբի անունը: Այդ օրը համարվում էր անվանակոչության օրը, ռուսերենում՝ день Ангела: Նատալյա անվան օրը սեպտեմբերի 8-ն է (հին տոմարով օգոստոսի 26-ը)՝ նվիրված ս. Ադրիանոսի և նրա կնոջ՝ ս. Նատալյայի (հայերեն՝ Անատոլիա) հիշատակին: Հայոց վարքերում նույնպես օգոստոսի 26-ը ս. Ադրիանոսի և նրա կնոջ՝ ս. Անատոլիայի հիշատակի օրն է *(ծնթ. խմբ.)*:

«Նվիրեմ, թե՞ ինձ թողնեմ»,- մտատանջվում էր նա:

«Նվիրի՛ր,- ասես շշնջում էր մեկը նրա ականջին,- Նատաշան երիտասարդ է, կաղոթի ս. Սերաֆիմին և Աստված կտա, անձնական կյանքն էլ կկարգավորվի»:

«Ախր ես էլ եմ սիրում աղոթել այս սրբապատկերի առաջ,- համոզիչ փաստարկներ եր գտնում Տատյանան:- Այս սրբապատկերից երևի ինքն էլ ունի»:

Նա տատնվում էր: Դա նույնիսկ ամուսինը նկատեց:

- Քեզ ինչ-որ բա՞ն է անհանգստացնում, Տանյա: Ինչ է պատահել:

- Ոչինչ: Փառք Աստծու,- պատասխանեց նա: Բայց մտածեց. «Ամուսնուս հո չեմ պատմելու իմ տարակուսանքները: Կծիծաղի»:

Երեկոյան կանոնը կարդալիս Տանյան մերթընդմերթ նայում էր ս. Սերաֆիմի սրբապատկերին, և նրան թվում էր, որ նա կշտամբանքով է իրեն նայում: Գիշերը վատ քնեց և արթնացավ գլխացավով:*

«Ինչի՞ համար եմ ես տանջվում,- գրգռված մտածեց Տատյանան:- Ինչ բան է սա»:

«Ագահությո՛ւն»,- հնչեց ներսից մի ձայն:

- Ագահություն...,- խուլ կրկնեց նա և չգիտես ինչու՝ սկսեց շոգել:

Սեպտեմբերի ութին՝ անվանակոչության օրվա կապակցությամբ շնորհավորում էին Նատալյային,

* Աղոթքների շարք, որ ուղղափառները ասում են քնելուց առաջ տանը՝ որևէ սրբապատկերի առաջ:

նրա համար երգեցին «Բազում տարիներ» երգը: Երբ անվանակոչիկը նվերների մեջ տեսավ Սերաֆիմ Սարովսկու սրբապատկերը, Նատաշան անմիջապես ձեռքը վերցրեց:

– Ինչ գեղեցիկ է: Այնքա՜ն էի ուզում ունենալ այս երանելի սրբի պատկերը,– Եվ կռանալով դեպի ընկերուհին՝ հարցրեց.– Խոստովանի՛ր, քեզ համար ծանր է նրանից բաժանվելը:

– Ծանր էր,– հոգոց հանեց Տատյանան,– բայց ես հաղթահարեցի ինձ:

Հաջորդ օրը Տանյան հենց որ աշխատանքի հասավ, նրան դիմավորեց ընկերուհին՝ Վալենտինան, ասելով.

– Դե, ընկերուհիս, դու ինձ երեկ խայտառակեցիր:

– Ե՞ս: Խայտառակեցի՞ – զարմացավ Տատյանան, ջանալով վերականգնել անցած օրվա դեպքերը:

– Այո՛, դո՛ւ,– ժպտաց Վալենտինան և Տանյային մի փաթեթ մեկնեց:– Սա քեզ՝ ծննդյան օրվա առթիվ:

– Իմ ծննդյան օրվա՞,– զարմացավ Տատյանան:– Բայց չէ՞ որ այն շատ վաղուց է անցել: Դու ինչ է, մոռացել ես:

– Ո՛չ, չեմ մոռացել, ես այն շատ լավ եմ հիշում: Այս նվերը,– Վալյան ցույց տվեց չբացված մի մեծ փաթեթ,– ես այն ընտրել եմ հենց քո աշխարհ գալու օրվա առթիվ: Բերեցի տուն, մի լավ նայեցի և... չկարողացա նրանից բաժանվել: Խանութ գնացի և քեզ մի բաժակ գնեցի, իսկ այս սրբապատկերը,– Վալենտինան փաթեթից հանեց նվերը,– թողեցի ինձ: Իսկ երեկ, երբ դու

խոստովանեցիր, թե դժվարությամբ ես բաժանվել քո նվեր բերած սրբապատկերից, ես ամաչեցի: Ների՛ր ինձ:

Տատյանան խաչակնքեց, համբուրեց սրբապատկերը, հետո գրկեց Վալենտինային:

Այդ պահին եկավ Նատաշան:

– Ինչ որ բա՞ն է պատահել,– ողջույնի փոխարեն հարցրեց նա:

– Պատահել է,– պատասխանեց Տատյանան:– Հրաշք է կատարվել. ս. Սերաֆիմն ինձ մոտ է վերադարձել:

Նոր կյանք, կամ որդեծնություն

1

Զոյա Դմիտրիևնան նստած էր բազմոցին, գլուխը ձեռքերի մեջ առած և ճոճվում էր հատակի մեծ ժամացույցին համընթաց. թիկ՝ մի կողմ, թակ՝ մյուս կողմ, թիկ՝ մի կողմ, թակ՝ մյուս կողմ: Հայացքը բացակա էր: Շրջապատող աշխարհը աստիճանաբար հալչում էր, կորցնում էր իր իրողենությունը և փոխվում, դառնում էր այն ներքին աշխարհը, ուր առօրյա կյանքում նայելու ժամանակ չի լինում:

Նրա աչքերի առջև հառնող պատկերը ուրախալի չէր: Քառասունչորս տարեկան, դա այն տարիքը չէ երրորդ երեխան ունենալու համար: Բայց ժամանակը բաց էր թողնվել, և հիմա ոչ մի բժիշկ վիրահատություն հանձն չի առնի:

Հաշվապահության կանանց կոլեկտիվը, որտեղ նա աշխատում էր, արդեն սկսել էր կատակներ անել փորի կլորության շուրջ. այն ասես բոլորի աչքին էր զարնում:

Անասելի ամոթ էր՝ քունքերը սպիտակել էին, աչքերի տակ՝ կնճիռներ, պատկառելի տեսք, համարյա հասուն երկու աղջիկներ և ահա՝ սա: Աղջիկները տարօրինակ հայացքով նայում էին մորը, իսկ մի անգամ Զոյան նկատեց, թե ինչպես Տատյանան՝ ավագը, նայելով քրոջը և մոր կողմը գլխով անելով, մատը պտտեց քունքի մոտ: Միայն Իվանը չի ցանկանում ոչինչ հասկանալ: Այնքան երջանիկ է ման գալիս, որ կարելի է կարծել՝ առաջին անգամ է հայր դառում:

Նա մի պարզ մարդ է: Ամբողջ կյանքը գործարանում խառատ է աշխատել: Ամբողջ կյանքը նույն կաղապարներն է տաշում, տաշո՛ւմ, տաշո՛ւմ: Ինչպե՞ս կարելի է այդպես ապրել:

Նրա հետ ամուսնացավ քսանհինգ տարի առաջ: Աղջիկը որքա՜ն վարդագույն հույսեր էր կապում ամուսնու հետ: Հետո ինչ, որ գործարանում է աշխատում: Այ, կամուսնանանք, հեռակա կընդունվի, ինժեներ-նորարար կդառնա և այնպիսի մի բան կհնարի, որ բոլորը կզարմանան:

Բայց տարիներն անցնում էին, երազանքները՝ խամրում, և մի անգամ Զոյան հասկացավ, որ իր բոլոր հույսերից մնացել են միայն մի բուռ ժանգոտ հիասթափություններ: Իվանն առաջվա նման աշխատանքից գալիս էր ժամանակին, օգնում էր տնային գործերում, խաղում էր մեծացող աղջիկների հետ, քնքուշ և սիրալիր էր կնոջ հետ, բայց Զոյայի մեջ ավելի ու

ավելի էր աճում անբավականության զգացումը: Ո՞ր է այն ասպետը, որ ամեն ինչ կդնի իր ոտքերի առաջ:

Իսկ ամուսինը, չնկատելով նրա նյարդայնությունը, շարունակում էր ուրախանալ կյանքով, գրքեր գնել, կարդալ, և նույնիսկ ինչ-որ կերպ հասցրել էր ձեռքի հետ չորս օտար լեզու սովորել: Դա միայն խորացրեց Զոյայի հիասթափությունը. գոնե թարգմանիչ դառնար, փող կաշխատեր: Հարցը փողը չէր: Ով է նա՝ հասարակ բանվոր: Ահա որն է հարցը: Իսկ Իվանը միայն կատակում է, ասում է, որ իր նման խառատ դեռ թող գտնեն:

Իսկ հիմա էլ ժպտում է. «Կծծդաբերես հենց արծաթե հարսանիքի նախօրեին: Հոբելյանական երեխա է»: Իրոք որ հոբելյանական: Նրան ինչ է պետք՝ հա-հա, հի-հի անի:

Հո զոռով չի, Զոյան այդ երեխան չի ուզում: Չի ուզում և վե՛րջ: Նրա ամբողջ ներքինը բողոքում էր, երբ հիշում էր, որ նորից պետք է գիշերները տեղից թռչի, անվերջ հուզվի և զբոսնի երիտասարդ մայրերի այրող հայացքի տակ:

Վերջ ի վերջո Զոյային պատեց անտարբերությունը: Նա ուտում էր մեքենայաբար, բժշկի էր գնում և կատարում բոլոր ոչ-բարդ հանձնարարականները: Սեպտեմբերին ապագա մորը նախածննդյան արձակուրդի ուղարկեցին: Աշխատանքի վայրում ընտելացան նրա «հետաքրքիր» վիճակին և այլևս ուշադրություն չէին դարձնում: Դրա վրա նա աստիճանաբար, թեև ոչ մինչև վերջ, հաշտվեց և արդեն հանգիստ սպասում էր անխուսափելիին:

Փողոցում անձրև էր մաղում: Թափված տերևները ջրափոսերում ճպճպում էին ոտքերի տակ: Զոյան վերադառնում էր պոլիկլինիկայից՝ կապույտ անձրևանոցի մեջ փաթաթված, ցրտից սեղմելով մրսած ուսերը: Դժբախտաբար, հովանոցը թողել էր տանը՝ ութերորդ ամսում այնպիսի ցրվածություն է առաջ եկել: Տնեցիներին դա զվարճացնում էր, իսկ նրան՝ չարացնում: Տրամվայն էլ փչացավ կես-ճանապարհին: Քայլելու համարյա մեկ կանգառ կա, իսկ իր վիճակում դա մի քսան րոպե է, ոչ պակաս: «Տեր, Աստված» – կինը հոգոց հանեց: Անձրևը, կարծես արձագանքելով նրա հոգոցին, դադարեց, թեև մոխրագույն ամպերը ցածր կախված էին տանիքների վրա: Եվ հանկարծ մի բարակ շող ճամփա բացեց իր համար և մի քանի վայրկյան ամեն ինչ լուսավորեց շուրջբոլորը:

Զոյայի հոգում առաջին անգամ ուրախություն արթնացավ, և երեխան, արձագանքելով դրան, անհամարձակ խլրտաց նրա ներսում, ասես կամացուկ թակեց. «Այդ ես եմ, ձեր սրտից ներս թողե՛ք ինձ»: Լցված զարմանալի քնքշանքով՝ նա վերադարձավ տուն և չծնված երեխայի համար առաջին անգամ աղոթեց Նրան, Ով ուրախություն պարգևեց տեսնել արևը անձրևից հետո:

2

Ծննդաբերության ժամանակը մոտենում էր: Այժմ աղջիկներն էլ էին պտտվում ապագա մոր շուրջը:

– Մամ, որտեղ ես դրել հատակի շորը: Գնա պառկի՛ր, ես ինքս կմաքրեմ,– նրա վրա ձեռքը թափ տվեց Տատյանան: Նա արդեն տասնյոթ տարեկան է: Վերջերս ընդունվել է բժշկական ուսումնարան: Սլացիկ, բարակիրան, բարձրահասակ Տանյուշան նման էր հորը: Նույնիսկ հոր հայացքն էր, թեթևակի ծաղրական և չարաճճի:– Գնա՛, գնա՛, ինչ ես կանգնել: Փոքր չեմ, կանեմ:

Զոյան ենթարկվելով՝ ոտքերը քարշ տվեց դեպի բազմոցը:

– Մամո՛ւլիկ, դու այսօր խնձոր կերե՞լ ես,– սենյակ ընկնելով հարցրեց Օլգան՝ կրտսերը:

– Այո՛, կերել եմ: Ամեն ինչ կերել եմ: Իսկ դու դասերդ սովորե՞լ ես,– հարցրեց նա դստերը:

Օլգան աչքերը ոլորեց.

– Սովորել եմ, ես երկու օրվա դասերն էլ եմ արել, մա՛մ, արդեն երկու անգամ հարցրել ես: Ավելի լավ է թող լսեմ, թե ինչպես է խաղում:

Նա ձեռքը դրեց մոր փորին: Մանուկը ներսից թափով խփեց ուղիղ ափի մեջտեղը:

– Վա՛յ,– հիացած ծղրտաց աղջիկը:– Չի՞ ցավում:

– Երբեմն լինում է – ժպտաց Զոյան:

– Ուղղակի չեմ կարողանում պատկերացնել, որ ես էլ եմ այնտեղ նստել,– ինքն իրեն դիտելով ասաց աղջիկը:

– Բայց չէ՞ որ երբ նստած էիր այնտեղ, այդքան մեծ չէիր,– ծիծաղեց մայրը:– Շատ ավելի փոքրիկ:

Օլյան նման էր մորը: Եվ թեև տասներկու տարեկան էր, նրանից բարություն և ընտանեկան ջերմություն էր հորդում:

Հանկարծ Զոյան վատ զգաց: Սկսվեց: Ցավը կամաց, բայց անկասելիորեն աճում էր ալիքի պես, ստիպելով սեղմել ատամները և մատներով կառչել բազմոցի արմնկակալից:

– Մայրիկ, վա՞տ ես զգում:

– Օլենկա՛, կանչի՛ր Տատյանային,– պատասխանեց Զոյան, ջանալով ժպտալ,– երևում է՝ ժամանակն է հավաքվելու:

Աղջիկը քամու պես անհետացավ: Տանյան բերեց նախապես հավաքված պայուսակը և օգնեց մորը հագնվել:

3

Սպիտակ առաստաղ: Սպիտակ արտահագուստներ... Որքա՞ն ժամանակ է անցել: Մի ամբողջ կյանք: Նա ձեռքի մեջ սեղմեց վզի խաչը. «Տե՛ր Աստված, օգնի՛ր ինձ»: Ինչ-որ տեղից դուրս լողաց Իվանի դեմ-

քը: Եվ հանկարծ երեխայի ճիչ: Բարձր, զիլ: Եվ լույս, անասելի վառ լույս:

Սպիտակ առաստաղ: Սպիտակ արտահագուստներ... Նա պատուհանից դուրս նայեց: Քամին պատառոտեց ամպերի տրտում ծածկոցը, հայտնվեց կուրացուցիչ վառ արևը: Արև, լույս, նոր կյանք: Կյանք, ափեափ լի կյանք, դուրս թափվելու պատրաստ, արդեն դուրս թափված՝ այդ անօգնական և կատարյալ մարմնում:

– Տղա ունեք: Ահա, նայեք, դեռ ծնվել չհասցրած՝ արդեն ինձ չանգռեց, տեղը կկապտի,– ծիծաղում է մանկաբարձուհին՝ ձեռքը ցույց տալով:

Պալատն ընդարձակ է, ամբողջ պատով մեկ պատուհան է: Քնել՝ ահա թե աշխարհում ամենից շատ ինչ է պետք: Խորը, հանգիստ քուն...

Զոյան, գլուխը բարձին դեռ չդրած, քնեց: Նա երազում տեսավ ամբողջ դաշտով մեկ փռված աքանչելի, արևի տակ շողշողացող սպիտակ շուշաններ:

ԲԱՐԱԿ ԹԵԼԻԿՆԵՐ

Սաշան հարսանիքի էր պատրաստվում: Տատիկի հետ նա ուլունքներ էր կարում ձյունաճերմակ հագուստի փեշերին: Տատիկն ինչ-որ բան էր պատմում, բայց Սաշան մերթ լսում էր նրան, մերթ խորանում հիշողությունների մեջ:

...Այն հիշարժան օրը, երբ երիտասարդ աղջիկը որոշում կայացրեց փոխել իր կյանքը, երկար քնել չէր կարողանում: Ծնողները պատի ետևում աղմկում էին և վիճում: Իսկ հաջորդ օրը Սաշան պետք է մարզման գնար, հետո՝ դպրոց: Նորից ամբողջ օրը քունը տանելու է...

Ծնողների վեճը շուտով եզրափակիչ փուլ մտավ: Հայրը խփեց մորը, նա բարձր գոռաց: Սաշան փակեց ականջները, աչքերը կկոցեց և գլուխը խրեց բարձի մեջ:

Կես ժամ հետո աղջիկը լսեց, թե հայրը ինչպես էր աղերսաձայն ինչ-որ բան ասում, իսկ մայրը հիստերիկ լալիս էր: Հայրիկը մեկ կամ երկու շաբաթ մեղավոր տեսք կընդունի, մայրիկին ծաղիկներ և նվերներ կբերի: Մայրիկը կպառկի, վալոկորդին և վալերիանի կաթիլներ կխմի, բոլորին կգանգատվի իր դաժան

ճակատագրից, որը կապել է այդպիսի կոպիտ և չար տղամարդու հետ: Ամեն ինչ կլինի առաջվա նման:

Սաշայի ծնողները, ընդհանուր առմամբ, վատ մարդիկ չէին: Հայրը գործարանում աշխատում էր որպես գլխավոր ինժեներ: Սիրում էր որսորդություն և ձկնորսություն: Մայրիկը մասնագիտությամբ ուսուցչուհի էր, աչքի էր ընկնում անհավասարակշիռ և պահանջկոտ բնավորությամբ:

Մայրիկի հենց այդ մեծ պահանջմունքներն էլ հարուցում էին հայրիկի բարկության պոռթկումը, երբ նա, այլևս չտանելով ծաղրանքը և կշտամբանքը, ազատություն էր տալիս ձեռքերին: Մայրիկն ընդհանրապես սովոր չէր որևէ մեկին գովել, հավանություն տալ կամ խրախուսել: Երբ Սաշան դպրոցից գերազանց գնահատականներ էր բերում, մայրիկը նկատում էր, որ դա բավարար չէ բուհ ընդունվելու համար, և որ լրացուցիչ պարապել է պետք: Երբ աղջիկը առաջին տեղը գրավեց լողի մրցումներում, մայրիկը պնդում էր, որ սպորտը ուշադրությունը շեղում է դասերից: Եթե աղջիկը փորձում էր մի բան եփել, մայրիկը, հաճույքով ուտելով պատրաստածը, բազմաթիվ թերություններ էր գտնում ուտելիքի մեջ: Եթե դուստրը լվացք էր անում, մայրն ամեն ինչ նորից էր լվանում:

Մայրիկը, որին ուղղափառ տատիկը մկրտելու էր տարել մանուկ հասակում՝ հավատում էր Արարչի

գոյությանը, բայց այդ հավատը նրա մեջ շատ տարօրինակ կերպով էր արտահայտվում: Նա անընդհատ մի ծայրահեղությունից ընկնում էր մի ուրիշ ծայրահեղության մեջ: Մեկ տարված պատմում էր բողոքական ժողովներին իր այցելությունների մասին, մեկ սկսում էր գնալ կրիշնայականների մոտ, մեկ էլ կտարվեր տեղական կախարդուհով: Գրադարակների վրա Աստվածաշնչի կողքին դրված էին Ղուրանը, Թորան, կրիշնայական հրատարակությունները, օկուլտիստների և էքստրասենսերի գրքերը: Վերջապես մայրիկը հայտարարեց, որ ինքը «հավատում է տիեզերքին», մշուշոտ բացատրելով, որ այդ նույն տիեզերքն էլ ամեն ինչի արարիչն է:

Սաշայի հայրն ինքնամփոփ և քչախոս մարդ էր: Նա յուրովի էր սիրում կնոջն ու դստերը, բայց աղջկան երբեմն թվում էր, որ եթե նա մի ուրիշ կին ունենար, շատ ավելի երջանիկ կլիներ:

Պատի հետևում լռություն տիրեց: Սաշան վառեց լուսամփոփը, պահարանի վրայից վերցրեց նախօրեին հեռավոր մայրաքաղաքից եկած նամակը: Նրան գրում էր նրա տատի մայրը՝ Ելիզավետան, որը միայնակ իր դարն էր ապրում մեծ քաղաքում՝ կայարանի մոտ գտնվող երկսենյականոց բնակարանում:

«Սաշենկա, իմ սիրելի թոռնուհի,– գրում էր նա:– Ձեզանից բացի ամբողջ աշխարհում ոչ–մեկը չի մնացել: Ես արդեն շատ ծեր եմ, հաճախ հիվանդանում

եմ։ Արի՛ ինձ հետ ապրելու։ Չեմ ուզում, որ իմ բույնը ուրիշները քանդեն։ Իմ մահվանից հետո ամեն ինչ կմնա քեզ՝ բնակարանը, ամառանոցը և պապիկի ավտոմեքենան։ Կգա՞ս։ Գրիր կամ զանգահարիր ինձ։ Քո տատիկ՝ Լիզա»։

Նամակը գրված էր հավասար, հստակ ձեռագրով։ Սաշան այն ստացել էր մի շաբաթ առաջ։ Սկզբում նա չէր ցանկանում անգամ մտածել այլ քաղաք՝ մեծ տատիկի մոտ տեղափոխվելու մասին, որին համարյա չէր հիշում։ Ինքն ինչպե՞ս կդիմանա առանց իր դպրոցի, ընկերների, մարզչի։ Սաշան անգամ պատկերացնել չէր կարողանում։

Մի ժամանակ, շատ վաղուց, նրանք ապրում էին տատիկի բնակարանում. Սաշան աղոտ հիշում էր միջանցքի մեծ հայելին՝ կարմիր փայտից դրվագազարդ շրջանակով։ Նաև գնացքների աղմուկը, որ ներս էր խուժում օդանցքից, և պատուհանների հին, շղարշե վարագույրները, որոնցով ինքը սիրում էր փաթաթվել և իրեն արքայադուստր կամ հարսնացու պատկերացնել։

Ծնողները խորհուրդ տվեցին մեկնել։ Մայրիկը դրան մոտեցավ գործնական տեսանկյունից։ Նա ասաց. «Մայրաքաղաքում բնակարան ունենալը հանաք բան չէ»։ Իսկ հայրիկն ասաց. «Լիզա տատիկը ծեր է, միայնակ, նրան պետք է օգնել։ Պետք է գնալ։ Ես կգնայի։ Բայց ինքդ որոշիր»։

Սաշան վեր կացավ, դուրս եկավ միջանցք, միացրեց լույսը, մոտեցավ հեռախոսին և հավաքեց երկար միջքաղաքային համարը։ Տատիկն անմիջապես վերցրեց խոսափողը։ Նրանք բարևեցին միմյանց։

– Ես մեկ ամսից կգամ։ Բոլոր գործերը կկարգավորեմ և կգամ,– հայտնեց նա տատիկին։

– Ես կսպասեմ,– պատասխանեց ծերունական ձայնը։

Մայրաքաղաքը ցնցեց նրան։ Շուրջն այնքան մարդ կար, այնքան մեքենա։ Ահա և նրբանցքը, ահա և տատիկի տունը, ահա և շագանակագույն դերմատինով պատված ծանոթ դուռը։ Շեմին երիտասարդ աղջկան դիմավորեց մաքուր հագնված մի տատիկ՝ համեստ բրդյա հագուստով՝ գեղեցիկ գունավոր գլխաշորը չոր ուսերին։ Նրանք համբուրվեցին։

Մեծ, լուսավոր սենյակում ցածրաձայն թկթկում էր ժամացույցը, ռադիոն խոհանոցում իրենն էր մրմնջում, կարմիր անկյունում, սրբապատկերների առջև, թրթռում էր կանթեղի լույսը։ Ամեն ինչ իր տեղում էր՝ և՛ վարագույրները, և՛ հայելին։

– Ահա՛,– ասաց տատիկը։– Սա քո տունն է։

Սաշան նայեց շուրջը։ Բազմոցի անկյունում նստած էր միականջ նապաստակը՝ նրա հեռավոր մանկության խաղալիքը, իսկ պահարանի վրա նստած էր վաղեմի ծանոթը՝ կապտաչյա գերմանական տիկնիկը՝ խոպոպիկներով, շքեղ հագուստով, ժպիտը վարդա-

գույն դեմքին: Սաշայի աչքերին արցունքներ հայտնվեցին:

– Այո՛,– հաստատեց նա, խորը հառաչելով,– ես տանն եմ:

Այսպես սկսվեց նրա նոր կյանքը: Սաշան ուսումնարան ընդունվեց, շարունակեց լողի մարզումները: Ծնողները, նրանց վեճերը, ամեն ինչ մնաց ինչ-որ տեղ ետևում: Նա հազվադեպ էր նրանց զանգում: Հայտնվեցին նոր հոգսեր, նոր ընկերներ:

Գարնանը տատիկի հետ ներկեցին ամառանոցի տնակը, մարգերը նախապատրաստեցին սածիլելու: Տատիկի մեքենան հնաոճ էր, տարիներ առաջ նորոգել էր պապը: Հենց այդպիսի մեքենա էր վարում Շտիրլիցը «Գարնան տասնյոթ ակնթարթը» ֆիլմում: Սաշային ապշեցրեց, որ տատիկը կարողանում էր այն վարել:

Այդպես, առօրյա հոգսերի, բանուգործի մեջ անցավ մի քանի տարի: Մի անգամ Սաշային զանգահարեց մայրը և հուզմունքից խզվող ձայնով հաղորդեց, որ հայրիկը հիվանդանոցում է, և որ բժիշկներն ասում են՝ հույս չկա:

– Ենթաստամոքսային գեղձն է: Սրացում է,– ասաց մայրը:– Վիրահատել են... Նա շատ վատ է:

Տատիկը, լսելով այդ ահավոր նորությունը, միայն գլուխն օրորեց.

– Շատ ցավալի է... Այդպես չմկրտված էլ կգնա այն աշխարհը: Ափսոս... Բայց լավ մարդ է, շատ լավ:

Սաշան նետվեց կայարան: Տոմս գնեց: Մինչև գնացքի մեկնելը երկու ժամ կար: Ուժ չունենալով տեղում նստել՝ դուրս եկավ քայլելու: Երկաթուղու վրայով անցնող կամրջով ոտքերը նրան ակամա տարան այնտեղ, ուր սլացիկ բարդիների վերևում երևում էին գերեզմանատան եկեղեցու ոսկեզօծ խաչերը:

Եկեղեցում մութ էր և դատարկ: Մարմրում էին մոմերը, կանթեղների բազմագույն կրակները փայլփլում էին մեղմ լույսով: Սաշան աչքերը վեր բարձրացրեց դեպի առաստաղի կամարները, դեպի Փրկիչը՝ շրջապատված Հրեշտակներով: Նրա հոգին կարծես ծանր քարի տակ ճզմված՝ սկսեց թպրտալ: Սաշան սկսեց խոսքեր ասել, որոնք պոռթկում էին. «Տե՛ր, հայրիկիս մեզանից մի՛ տանիր: Նրան մի քիչ էլ կյանք տուր: Գոնե մի քիչ: Թող հայրիկս մի քիչ էլ ապրի»: Սաշան աղոթում էր և զգում, թե ինչպես էր անիմանալի հոգևոր աշխարհից մի անտեսանելի թել ձգվում դեպի իրեն:

Վաղ առավոտյան նա հասավ հարազատ քաղաք: Կայարանից ուղիղ վազեց հիվանդանոց: Վերակենդանացման բաժանմունքի մոտ կանգնած էր մայրը՝ գունատ, գզգզված մազերով: Նրա աչքերն այրվում էին:

– Հրա՛շք: Հրա՛շք,– կրկնում էր մայրիկը:– Նա իրեն ավելի լավ է զգում: Շատ ավելի լավ: Ուղղակի հրաշք

է՝ Նույնիսկ բժիշկն այդպես ասաց։ Ինձ հենց նոր այնտեղից դուրս քշեցին,– մեղավոր ավելացրեց նա։

Սաշան բժշկին խնդրեց մեկ րոպեով տեսնել հորը։ Նա գունատ տեսք ուներ, տանջված, թույլ և անօգնական։ Սաշան վերցրեց նրա ձեռքը, նա բացեց աչքերը և հազիվ լսելի արտաբերեց.

– Աղջի՛կս, աղջի՛կս է եկել։

Հայրիկը դանդաղ էր լավանում։ Նա այլևս չէր կարող աշխատել, հաշմանդամություն ձևակերպեցին։ Նստում էր տանը, իր գործարանի համար ինչ-որ պահեստամասեր էր գծագրում միլիմետրային թղթի վրա։ Երջանիկ և գոհ տեսք ուներ։

Սաշան իր այցելություններից մեկի ժամանակ նրան համոզեց մկրտվել։

– Լավ, համաձայն եմ։ Համաձայն եմ։ Ինչպես կասեք,– պատասխանեց նա։

Հայրիկին մկրտեցին տանը, քանի որ թուլության պատճառով չէր կարող ծիսակարգին դիմանալ եկեղեցում։ Ծնողներն այլևս միմյանց հետ չէին վիճում։ Մայրիկը բոլորովին նոր՝ հոգատար և սիրող կնոջ դերում էր։ Հայրիկն ամբողջությամբ նրա իշխանության տակ էր և նրա օգնության կարիքն ուներ։ Ընտանիքում տիրում էր խաղաղությունը, անդորրը և լիարժեք փոխըմբռնումը։

Շատ ջրեր են հոսել այն ժամանակվանից։ Սաշան շարունակում էր լրջորեն զբաղվել լողով։ Մի անգամ նա արծաթե մեդալ շահեց երկրի առաջնությունում։ Մայրիկն ասաց.

– Արծաթը լավ է, իսկ ոսկին՝ ավելի լավ։

Բայց դուստրը դրան ուշադրություն չդարձրեց։ Նա պատրաստվում էր ամուսնության...

Մայրիկը մարգարտաճերմակ, հրաշալի կտոր ուղարկեց։ Տատիկը թոռնուհու համար զգեստ կարեց։ Երեկոները նրանք նստում էին կողք կողքի, հարսանեկան զգեստը զարդարում ուլունքներով և պսպղացող արհեստական քարերով։ Ուլունքը թելին հագցնելով՝ ծեր կինը խորամանկ ժպիտով նայում էր թոռանը։

– Ինչ ես մտածում, հարսնացու։ Մայրիկդ կգա և մեզ մի լավ կքննադատի։ Եվ զգեստդ, և՛ կոշիկներդ, և՛ քողդ, և՛ կերուխումը...

– Եվ փեսացուին, և՛ նրա բարեկամներին, և՛ մեզ՝ մեղավորներիս...

– Այո՛, նրան չես գոհացնի։

– Իսկ մենք չենք էլ ջանա։ Թող փնթփնթա ինչքան ուզում է։ Չենք նեղանա նրա փնթփնթոցից։

Երկու կանայք՝ ծեր և երիտասարդ, շարունակում էին փայլփլուն ուլունքներ թելել բարակ թելիկներին, դրանցով վարժ ասեղնագործելով թափանցիկ կտորը։ Աստիճանաբար ուրվագծվում էին տերևներից, ծաղիկներից, ոլործուն գծերով հյուսված բարդ նախշազարդերը։

Ակամայից Սաշայի գլխում միտք ծագեց, որ զգեստի սպիտակ կտորը կարելի է համեմատել կյանքի հետ, որը տալիս է Արարիչը յուրաքանչյուր մարդու: Թելած ասեղը՝ մեր ազատ կամքն է: Ուլունքները՝ մեր արարքները: Նրանց օգնությամբ մենք ասեղնագործում ենք մեր կյանքի բարդ նախշը՝ ամեն օր կատարելով մեր ընտրությունը...

Ինչպիսին կլինի այդ նախշը: Ինչպիսին կլինի մեր կյանքը:

Վերցրո՛ւ երեխային

Արիան խոհանոցում կարտոֆիլ էր մաքրում: Թույլ լսվում էր ժամացույցի թկթկոցը, փոքրիկ մահճակալի վրա խաղաղ ֆսֆսացնում էր դժվարությամբ քուն մտած դստրիկը: Մարիայի հոգում անսպասելի մի ձայն լսվեց. «Վերցրո՛ւ երեխային»: Նա ըմբոստացավ այդպիսի ներքին հրամանի դեմ: Սա ինչ գայթակղություն է: Ինչո՞ւ երեխային անհանգստացնեմ: Ամենատաք տեղն էլ այստեղ՝ վառարանի կողքին է:

Մաքրելով կարտոֆիլը՝ այն դրեց եփվելու: Եվ գնաց սենյակ, որտեղ շարունակեց իր կիսատ թողած գործը՝ կիսագուլպա գործելը: Սկսեց ցածրաձայն երգել տատիկի սիրած երգը...

Ցածրիկ սենյակում
Լույս է վառվում աղոտ,
Աղջիկը՝ թել է մանում
Պատուհանի մոտ...

Եվ նորից լսեց, արդեն ավելի համառ, մի ձայն. «Վերցրո՛ւ երեխային»: Մայրը տագնապեց: Բառերը լսվում էին հստակ, պարզ և հրամայաբար: Ամուսինը չէր, ոչ էլ հարևանները, ոչ էլ իր սեփական մտքերն էին: Բառերը ինչ-որ անծանոթի էին պատկանում: «Ինչ է պատահել ինձ, աչքիս է երևում, ինչ է»,- մտածեց նա: Վախի զգացումը անընդհատ ուժգնանում էր և ասես խոյացած ալիք՝ սկսեց խռովել կնոջ հոգին: Եվ հանկարծ այդ բառերը՝ «Վերցրո՛ւ երեխային», ասես կայծակի մի հարված, ծակեցին-անցան նրա ողջ մարմնով: Անչափ վախեցած՝ Մարիան նետվեց դեպի մահճակալը և արագ վերցրեց երեխային: Հենց որ փոքրիկ էակը հայտնվեց նրա ձեռքերում, ծեփի մի մեծ կտոր առաստաղից պոկվեց ընկավ այնտեղ, որտեղ հենց նոր աղջկա գլուխն էր: Մայրը վախից շրջվեց և քարացավ: Մի վայրկյան հապաղեր՝ երեխան կզոհվեր:

Հաջորդ կիրակի առաջին անգամ երեխային տարավ հաղորդվելու: Դրանից հետո մայրը Ելենայի փրկության օրը համարում էր իր իսկական հավատի ձեռքբերման օր:

Արջագանքի՛ր

-Ինչպե՞ս խառնեցիր իմ ծրագրերը: Ինձ գործարար փեսա է պետք, այլ ոչ ամպերում սավառնող գիտնական,- ափսոսանքով ասում էր Պավել Միխայլովիչը:

Իրինան՝ բարգավաճող ֆիրմայի տնօրենի միակ աղջիկը, բոլորի համար անսպասելի ամուսնացավ երիտասարդ պրոֆեսոր Սերգեյ Ալեքսանդրովիչ Բերեսնևի հետ:

- Ոչինչ, հայրի՛կ,- ծիծաղում էր դուստրը:- Ես նրան կփոխեմ իմ ձևով:

Եվ ինչ: Սերգեյի հետ համատեղ կյանքի բոլոր հինգ տարիները Իրինան պայքարում էր իր առաջնության համար, բայց կամաց-կամաց զիջում էր դիրքերը:

Սերգեյը չցանկացավ ապրել աներոջ տուն-պալատում: Նորապսակները տեղավորվեցին նրա համեստ բնակարանում՝ հին կահույքով և բազմաթիվ սրբապատկերներով:

Սերգեյը Իրինայի շրջապատի հետ չէր հարմարվում, չէր մասնակցում աղմկոտ երեկոներին, որ կազմակերպում էր կինը, հրաժարվեց ընդունվել էլիտար ակումբ:

Արտասահմանում և անդրծովյան լողափերում հանգստանալու՝ Իրինայի երազանքները հօդս ցնդեցին: Ճիշտ է, ամուսնուն հրավիրում էին արտասահմանյան համալսարանները, բայց նա, չգիտես ինչու, հրաժարվում էր:

Ավելին, Սերգեյը նրա կյանքն անվանում էր դատարկ և անիմաստ:

– Ախր դու իրավաբան ես,– կշտամբելով ասում էր նա,– բայց դու հորդ մոտ աշխատանքն անգամ վերածում ես հերթական զվարճանքի:

Սերգեյին հատկապես վրդովում էր այն, որ Իրինան երեխա ունենալ չի ցանկանում:

– Թագուհի, ո՞ւր են քո ժառանգները,– սկզբում կատակով, հետո ավելի ու ավելի համառորեն էր կրկնում ամուսինը:– քո կյանքը իմաստով լցնել կարող են միայն երեխաները:

Թոռներ էր ուզում նաև Իրինայի հայրը: Վերջապես նա վճռեց: Եվ, այ քեզ սարսափ, ծնվեցին երկվորյակներ՝ տղա և աղջիկ՝ Պավելը և Սվետլանան: Իրինան հրաժարվեց կերակրել երեխաներին, և գյուղից ստնտու բերեցին:

Իրինան հազվադեպ էր մտնում մանկասենյակ, իսկ Սերգեյը, ընդհակառակը, բոլոր ազատ երեկոները զբաղվում էր փոքրիկներով:

Երբ երեխաներին մկրտում էին, կնքահայր դարձավ աները, կնքամայր՝ Դարյան՝ Պավել Միխայլովիչի հեռավոր ազգականուհին, խորապես հավատացյալ մի կին: Նա տնտեսուհի էր Իրինայի հոր տանը, իսկ հարսանիքից հետո տեղափոխվել էր ապրելու երիտասարդների հետ:

Կիրակի օրերը Սերգեյը և Դարյան երեխաներին եկեղեցի էին տանում հաղորդություն ստանալու, խոստովանում և հաղորդություն էր ստանում նաև Սերգեյը: Երբ երեխաները մեծացան, երբեմն նրանց միանում էր նաև Պավել Միխայլովիչը, ով գիտնական փեսայի ազդեցության տակ սկսեց հետաքրքրվել հոգևոր հարցերով: Նա հաճույքով էր դիտում, թե թոռը ինչպես է ամուր բռնել քրոջ ձեռքը՝ կանգնելով սիրած տեղում՝ Կազանի Աստվածամոր սրբապատկերի առջև:

Երեխաները մեծանում էին: Նրանք զուսպ էին վերաբերվում մորը, բայց հորը դիմավորելու էին գնում վազելով: Դա նյարդայնացնում էր Իրինային: Սերգեյին բարկացնելու համար նա սկսեց նորից երեկույթներ հաճախել և նորից սկսեց գնալ իր ակումբը: Նոր երկրպագուներ հայտնվեցին... Հարաբերություններում ճեղքվածքն աճում էր, և, ի վերջո, Իրինան Սերգեյին առաջարկեց բաժանվել:

Նա սպասում էր, որ ամուսինը բացատրություններ կպահանջի և կհամոզի իրեն, բայց նա միայն խիստ նայեց և ասաց.

– Իսկ երեխաները: Նրանց ինձ տուր:

Եվ այստեղ իր համար ասպասելի՝ Իրինան առաջարկեց բաժանել երեխաներին. ինքը կվերցնի Սվետլանային, իսկ նա՝ Պավելին: Սերգեյի ոչ մի փաստարկ, որ երկվորյակ-երեխաների միջև հատուկ կապ գոյություն ունի և նրանց բաժանելը դաժանություն է, չփոխեց նրա որոշումը: Սվետլանան կմնա ինձ հետ,- ասում էր նա,- և խնդրում եմ երբեք չզանգես մեզ: Եթե դու համաձայն չես, ես երկու երեխաներին էլ կվերցնեմ: Սերգեյը հարկադրված էր համաձայնվել:

Իրինան դստեր հետ վերադարձավ հոր տուն, որը բաժանությունը խելագարություն անվանեց:

Սկզբնական շրջանում աղջիկը կարոտում էր եղբորը: Սակայն մեծ, նոր տուն տեղափոխվելը, մտերմությունը պապիկի հետ, որին նա սիրեց, աստիճանաբար շեղեցին նրան: Բայց որքան Սվետան մեծանում էր, այնքան հաճախ էր երազում և երևակայության մեջ մի տղա էր երևում իր ձեռքը բռնած: Աղջիկը փորձում էր այդ մասին խոսել մոր հետ, բայց նա բարկանում էր և խոսակցությունը փոխում էր այլ նյութի վրա:

Հանկարծակի դժբախտություն պատահեց: Պավել Միխայլովիչի ֆիրման սնանկացավ, և նա մահացավ սրտի տագնապից: Բոլոր դրամական միջոցները ծախսվեցին պարտքերի մարման համար: Իրինային անմիջապես ազատեցին աշխատանքից: Նա իրեն կորցրեց, նույնիսկ զանգահարեց Սերգեյին, բայց իմացավ, որ նա որդու հետ չորս տարով մեկնել է Անգլիա: Իրինան դժվարությամբ ընդունվեց նոր աշխատանքի: Նախկին անհոգ կյանքն ավարտվեց: Փողը չէր բավականացնում: Ստիպված հրաժեշտ տվեց հայրական տանը՝ այն փոխելով երեքսենյականոց բնակարանով: Գիշերները Իրինան երկար ժամանակ չէր կարողանում քնել. անցյալի պատկերները պտտվում էին նրա գիտակցության մեջ: Նա ցանկանում էր իր խելացի, գիտությամբ տարված բարի, տաղանդավոր ամուսնուն փոխել և հարմարեցնել իրեն: Նրա ցանկացած դիտողությունն ընդունում էր որպես ոտնձգություն իր ազատության նկատմամբ: Ինքը երեխա չէր ուզում և բաժանման ժամանակ նույնիսկ անջատեց նրանց: Երբ որդին չորս տարի հետո վերադառնա, իրեն օտար կլինի:

Այդ ժամանակ կարծես ինչ-որ պատ առաջացավ նրա և Սվետայի միջև: Արդեն հասունացած դուստրը համարյա չէր խոսում մոր հետ: Պատճառն այն էր, որ նոր բնակարան տեղափոխվելիս Սվետան պահարանում նկատեց տղայի և աղջկա մի լուսանկար, տակը՝ մակագրված. Պավել և Սվետլանա Բերեսնևներ: Աղջիկը ցնցված էր: Ինքը եղբայր ունի: Որտեղ է նա: Ինչ է տեղի ունեցել:

Մորը չվստահելով՝ Սվետան գնաց կնքամոր մոտ, ցույց տվեց լուսանկարը և խնդրեց ամեն ինչ պատմել: Եվ Դարյան պատմեց...

Կնքամոր հորդորներով Սվետլանան սկսեց եկեղեցի գնալ և երկար աղոթում էր քնից առաջ, հուսալով, որ Աստված կհուշի՝ ինչպես վերադարձնել եղբորը:

Ինստիտուտում իմանալով հոր հասցեն՝ Սվետլանան նամակ ուղարկեց Անգլիա՝ Պավել Բերեսնևի անունով: Իսկ այնտեղ՝ միայն մի քանի բառ. «Պաշա՛, Պաշա՛, պատասխանի՛ր: Ես քո քույրն եմ՝ Սվետլանան»:

Անցնում էին շաբաթներ, ամիսներ, բայց պատասխան չկար: Մի անգամ Սվետլանան արթնացավ ինչ-որ անսովոր բանի սպասելիքով: «Տեր Աստված, Ինչո՞ւ եմ այսքան ուրախ: Գուցե այսօր եղբորիցս նամա՞կ ստանամ»:

Սվետլանան հապշտապ հավաքվեց և գնաց դպրոց: Դասերին դժվար էր կենտրոնանալ, խանգարում էին եղբոր հետ կապված մտքերը: «Որտե՞ղ է նա: Ինչպիսի՞ն է հիմա նա: Գիտե՞ արդյոք նա իմ մասին»,- հարցերը խռնվում էին գլխում՝ նրան շեղելով դասերից: Վերջին դասի ժամանակ ուսմասվարի ուղեկցությամբ դասարան մտավ մի պատանի, բարձրահասակ, թիկնեղ և մի տեսակ հասուն:

- Սա ձեր նոր ընկերն է,- Պավել Բերեսնևը: Նա երեք տարի ապրել է Անգլիայում, իսկ հիմա սովորելու է ձեր դասարանում:

Սվետլանայի այտերը կարմրեցին, արցունքներ հայտնվեցին նրա աչքերում: Կողքին նստած դասընկերը անհանգստացած հարցրեց.

- Ինչ եղավ քեզ:

- Նա իմ եղբայրն է: Հասկանո՞ւմ ես, հարազատ եղբայրս,- շշնջաց աղջիկը:

Նորեկը լարված նայում էր աղջիկների դեմքերին՝ կարծես ինչ-որ մեկին էր փնտրում: Եվ ահա նրա հայացքը հանդիպեց քրոջ հայացքին: Նա թեթևացած շունչ քաշեց, վճռականորեն ուղղվեց դեպի նա և քնքշորեն արտաբերեց.

- Բարև՛, Սվե՛տա, ես քո եղբայրն եմ՝ Պավելը: Վերջապես մենք հանդիպեցինք:

Սվետան ուրախ փաթաթվեց նրան:

Դասերից հետո նրանք երկար խոսում էին, հետո Պավելն ասաց.

- Իսկ հիմա, Սվետա, ես ուզում եմ տեսնել իմ մորը:

Այս պատմությունը բարեհաջող ավարտ ունեցավ: Դժվար է նկարագրել Իրինայի և որդու հանդիպումը: Լալիս էին բոլորը, նույնիսկ Պավելը հազիվ էր զսպում արցունքները:

Մեկ տարի հետո վերադարձավ Սերգեյը: Նրան սիրով դիմավորեցին երեխաները և կինը: Մի ամսից Սերգեյը և Իրինան պսակադրվեցին:

Զարը

Շտապողականությունը բնորոշ է մեր ժամանակներին: Ամեն ինչ՝ վազքով: Ամեն ինչ՝ հապշտապ: Նույնիսկ դադարել են խոսել սեփական երեխաների հետ: Հարցնում ես.

– Տղա՞ս, քաղցա՞ծ ես:

– Ո՛չ, մայրիկ, մանկապարտեզում ընթրել ենք:

– Դե՛ ուրեմն, լավ է:

– Աղջիկս, ինչ կա դպրոցում:

– Նորմալ է...

– Դե լավ է:

Ավելի մեծերն ընտելացել են: Իրենք էլ դժկամությամբ են խոսակցության բռնվում: Իսկ փոքրերը: Ինչ են թաքցնում նրանց տակավին թույլ հոգիները: Ինչ է նրանց փոքրիկ սրտիկների ցավը: Եվ այդպես, մեր երեխաները մանկապարտեզ գնալիս ջանում են տասնհինգ բոպեների ընթացքում լուծել աշխարհի բոլոր մեծ խնդիրները, քանի դեռ մայրիկը իրենց կողքին է...

– Մամուլիկ, մի երեխա բեր: Տղա: Ո՛չ, աղջիկ: Ո՛չ, ինձ՝ տղա, իսկ քույրիկին՝ աղջիկ:

Մայրիկը ծիծաղեց: Որդին ավելի համառեց:

– Դու մեզ երեխա կբերե՞ս:

– Ինչպես Աստված կտա: Տերը տեսնում է, որ ձեր հոգսը գլուխս բերելը դժվար է, դրա համար էլ չի տալիս: Դուք ինձ չեք լսում, չեք օգնում:

– Իսկ մենք երկուսով չենք հասցնում: Պետք է օգնել երեքով, չորսով, հինգով...

– Սպասի՛ր, սպասի՛ր, որտեղից այդքան օգնական վերցնեմ:

– Ունեցի՛ր:

Մանկապարտեզի ճանապարհն անցնում էր մանկատան պատերի կողքով: Մանկատան սաները դպրոց են գնում դաստիարակների ուղեկցությամբ:

– Տեսնո՞ւմ ես, ինչքան շատ երեխա ունի այս մայրիկը,– խրատական նկատում է փոքրիկը:

– Ո՛չ, որդիս: Նա մայրիկը չէ, այլ դաստիարակչուհին: Իսկ երեխաները մանկատնից են:

– Դա այդպիսի մանկապարտեզ է:

– Այնքան էլ չէ, նրանք միայն ցերեկն են մանկապարտեզում լինում, իսկ այստեղ նրանք գիշերում են,– շեղելով խոսակցությունը, պատասխանեց մայրը:

– Իսկ ինչո՞ւ մայրիկներն իրենք չեն տանում իրենց երեխաներին դպրոց:

– Հասկանում ես,– կինը փորձում է կյանքի ճշմարտությունը որքան հնարավոր է փափուկ բացել փոքրիկի առջև,– այս երեխաները ոչ հայր ունեն, ոչ էլ՝ մայր:

– Բացի դրանից, տո՞ւն էլ չունեն:

– Զունեն:

– Որքան եմ խղճում նրանց... Ինչ է՝ նրանց ծնողները մահացել են:

– Ո՛չ բոլորը: Կան երեխաներ, ում ծնողները կենդանի են:

– Բանտո՞ւմ են:

Որդու այդպիսի գիտելիքներից մայրը փշաքաղվում է:

– Բանտում են կամ զրկված են ծնողական իրավունքից:

– Ինչպես վարորդական իրավունքներից: Իսկ ինչի՞ համար:

– Իրենց երեխաների մասին չեն հոգացել, նեղացրել են, չեն կերակրել, չեն հագցրել:

– Եվ հիմա այդ երեխաներն ապրում են այստեղ: Որդին հոգոց հանեց.– Այ, նրանք կմեծանան, կդառնան հայրիկ ու մայրիկ և իրենց համար երեխաներ կունենան: Վատ կամ լավ, բայց կունենան:

Մայրիկը մի պահ չիմացավ ինչ պատասխանի:

– Իսկ ինչո՞ւ ասացիր՝ վատ կամ լավ:

– Դե, ես վատն եմ մեծացել:

– Դո՞ւ, վա՞տը,– մոր շունչը կտրվեց:– Դո՛ւ, դո՛ւ, աշխարհի ամենալավ երեխան՝ համենայն դեպս ինձ համար:

– Միայն թե մի՛ ստիր,– ունքերը կիտելով, խիստ արտաբերեց փոքրիկը: Ես վատն եմ, գիտեմ, որ վատն եմ: Ես կռվում եմ, չեմ լսում քեզ:

– Իհարկե, դու երբեմն ինձ վրդովեցնող բաներ ես անում: Բայց դու լավն ես: Դու բարի ես, սիրում ես կենդանիներին, քրոջդ, մայրիկիդ, հայրիկիդ. օգնում ես մեզ, երբ ուզում ես:

– Ես կռվում եմ, ձեռքս զենք եմ վերցնում,– հակառակվեց տղան:– Ամեն ինչ մոռանում եմ, տնակ վատ եմ կառուցում:

– Սպասիր, ինչպե՞ս հասկանալ:

– Երեկ բոլորը երևակայական ամրոց և տարբեր սարսափելի խրամիլակներ էին պատրաստում, ես էլ նրանց հետ: Հետո էլ մոռանում եմ և այնպես չեմ անում, ինչպես պետք է: Ինձ ասացին՝ տատիկին մի կտոր կարկանդակ տար, իսկ ես վերցրի և մանկապարտեզ տարա...

– Այդ երբ է այդպիսի բան եղել:

– Ես օրինակի համար եմ ասում, որ այնպես չեմ անում, ինչպես պետք է:

Ահա և մանկապարտեզը: Մայրիկը, հուզմունքը հաղթահարելով, դանդաղ կռանում է և փաթաթվում որդուն.

– Տղա՛ս, սիրելի՛ս, իմ լավ տղաս, ես քեզ շատ եմ խնդրում, երբեք չմոռանա՛ս, որ մայրիկը քեզ սիրում է:

– Նույնիսկ երբ բարկանում է և պատժո՞ւմ:

– Այո՛, նույնիսկ երբ բարկանում է և պատժում. աշխարհում բոլորից շատ քեզ եմ սիրում:

– Աստծուց էլ շա՞տ:

– Ո՛չ, Աստծո՛ւն, հետո քեզ: Չէ՞ս մոռանա:

– Լա՛վ,– կարճ, տղամարդու պես պատասխանում է փոքրիկը: Եվ գրկելով մայրիկի վիզը՝ կամաց ավելացնում է,– Իսկ եթե քեզ հետ միասին աղոթենք, Աստված մեզ երեխա կտա՞: Ես ճիշտ եմ ասում, կլսեմ քեզ և կօգնեմ:

Մանկապարտեզում առավոտյան արցունքախառն տեսարաններ են՝ ամենասովորական մի երևույթ: Լալիս են մայրիկները, իրենց սրտից արյուն կաթեցնելով. լալիս են երեխաները՝ ամբողջ օրը գրկվելով մայրական գգվանքից:

Կողքից վազքով անցնող ծնողները կարեկցանքով նայում են որդու և մոր կողմը, ով մոռացել է, թե ուր է շտապում:

ԿԱՏԱԿԵԾ

Վանահայր քահանան իր ծուխ էր վերադառնում: Գործերով մեկնել էր թեմ և ուշացել էր: Նա շտապում էր, որովհետև երեցկնոջը խոստացել էր հասնել ընթրիքին: Չէր ուզում ուշանալ, իմանալով, որ նա կանհանգստանա: Լեոնիդ քահանան գիտեր «Դանդաղ շտապիր» ասացվածքը, այդ պատճառով երբեք արագությունը չէր գերազանցում և կարգը չէր խախտում:

Ճանապարհային ոստիկանության պահակետի մոտով անցնելիս նա արագությունը նվազեցրեց մինչև թույլատրելի սահմանը՝ ժամում հիսուն կիլոմետր, բայց գծավոր փայտիկի տիրական թափահարումով նրան կանգնեցրին:

– Օ՜, տերտեր է,– մանկական ուրախությամբ ժպտալով մեքենային մոտեցավ ավտոտեսուչը:

– Սերժանտ Պետրենկո,– ներկայացավ նա ակնհայտ ուկրաինական առոգանությամբ:

– Բարև ձեզ,– հարգալից բարևեց հոգևորականը:– Պոկրովկա գյուղի Կազանի Աստվածածնի սրբապատկերի տաճարի վանահայր:

– Օ՛յ: Տեսնում եմ, կույր չեմ,– ուրախ շարունակեց ոստիկանը:– Դե՛,– նա երանելի ժպիտը հարցական սառեց դեմքին:

– Ահա վարորդական իրավունքը, տեխանձնագիրը,– մեկնեց տեր հայրը փաստաթղթերը պատուհանից:

– Ինչի՞ են պետք ձեր փաստաթղթերը,– անկեղծորեն զարմացավ ոստիկանը:– Կարծես չգիտեմ, որ տերտերները գողացած մեքենա առանց փաստաթղթի չեն քշում: Ինձ փաստաթուղթ պետք չէ: Վճարել է պետք:

– Ինչի՞ համար,– տեսուչի խղճին դիմեց տեր հայրը, բայց ոստիկանի դեմքից չիջնող ժպիտի օրորի տակ այն խորը քնով քնած էր:

– Ինչպե՞ս թե ինչի համար: Մենք գիշերելո՞ւ ենք այստեղ, թե՞ հետագա ճանապարհի համար կվճարենք: Իսկ մենք, ինչպես անեկդոտում, կարող ենք մորուքը մինչև խորքը փորփրել:

Տեր հայրը դժկամությամբ դրամապանակից հանեց մի մանր թղթադրամ և տվեց ոստիկանին: Նա ուրախ գլխով արեց:

– Իսկ կին ունե՞ս,– չգիտես ինչու հարցրեց տեր հայրը:

– Ունեմ: Գեղեցկուհի կին էլ ունեմ, շքեղ սիրուհի էլ,– բառերը երկարելով ասաց ոստիկանը՝ փորձելով օդում ձեռքերով նկարել սիրուհուն:

– Ասում ես՝ սիրուհի ունես...– մտածկոտ արտասանեց տեր հայրը: Այդտեղ այնպիսի վրդովմունքով լցվեց այդ դրամաշորթի հանդեպ, որ ինքն էլ չիմանալով ինչու՝ լայն շարժումով խաչակնքեց ոստիկանին և հանդիսավոր արտաբերեց.– Սիրուհի չե՛ս ունենա:

Ոստիկանը զարմանքից միայն բերանը բացեց...

Երկու ամիս անց, կիրակի վաղ առավոտյան, երբ տեր հայրը նոր էր պատրաստվում խորան մտնել, ետևից տարօրինակ ձայներ լսվեցին: Ետ շրջվելով՝ հայր Լեոնիդը տեսավ հին ծանոթին: Սերժանտ Պետրենկոն, մոտենալով ընկավ տեր հոր ոտքերը:

– Ների՛ր ինձ, տեր հայր, ների՛ր: Ես չգիտեի, որ հոգևորականները Աստծուց այդպիսի զորություն ունեն: Այսուհետև միշտ եկեղեցի կգնամ, ոչ մեկից առանց անդորրագրի ոչ մի կոպեկ չեմ վերցնի: Դու միայն ինձ ներիր, Աստծուց էլ խնդրիր, որ վերադարձնի կնոջս: Կարծում էի՝ կատակում ես, իսկ նա ինձ երեք օր առաջ բռնեցրեց Կլավայի հետ: Երեխաներին վերցրեց և զոքանչիս տուն գնաց, տուն չի գալիս: Կլավան էլ ինձանից փախավ: Միայն թե կինս, երեխաներս վերադառնան, այլևս երբեք ...

Տեր հայրը հայացքը ոստիկանից տեղափոխեց Փրկչի սրբապատկերին: Տերը խիստ էր նայում, բայց Լեոնիդ քահանային թվաց, որ այդ խստության միջով ժպիտ փայլատակեց...

Սերժանտ Պետրենկոն դարձավ ջերմեռանդ ծխական: Մեկ տարի հետո պսակվեց իր կնոջ հետ և մկրտեց երեխաներին: Այժմ, երբ առիթ էր լինում հոգևորականի մեքենա կանգնեցնել, խոնարհությամբ օրհնություն էր խնդրում, և, պատիվ տալով, բարի ճանապարհ մաղթում...

Նվերը

Յուլյան քայլում էր ծովափով և խորհում էր իր չկայացած ճակատագրի մասին. «Մեկ շաբաթից ծննդյանս օրն է, և նորից ոչ մեկը ծաղիկ չի նվիրի, բացի մայրիկից և ընկերուհիներից: Մի՞թե ես այդպես էլ մենակ կմնամ: Ո՛չ ամուսին, ո՛չ երեխաներ: Ընկերուհիներս բոլորն էլ վաղուց ամուսնացած են, իսկ ես... Քահանան ասում է, որ Տերը լսում է իմ աղոթքները: Բայց տարիներն անցնում են...»

Նստելով նստարանին՝ Յուլյան պայուսակից հանեց փոքրիկ հայելին և նայեց: Իրեն էր նայում մի գեղեցիկ աղջիկ երկար, շիկահեր հյուսքով և մեծ, տխուր աչքերով: Յուլյան փորձեց ժպտալ, բայց հիշեց վերջերս աշխատավայրում իր հասցեին ուղղված մի կատակ. «Լալիս է օրիորդը սենյակում, չեն ուզում նրա հետը ամուսնանալ», և նա նորից տրտմեց:

«Գուցե կտրե՞մ մազերս, կամ էլ կիսաշրջազգեստս կարճացնեմ»,- մտածում էր նա, ջանալով գոնե ինչ-որ կերպ հանգստացնել իրեն:

- Ինչո՞ւ ես տրտմել, գեղեցկուհի օրիորդ,- լսվեց հանկարծ մի ձայն:

Յուլյան գլուխը բարձրացրեց և տեսավ մի երիտասարդի, երեսին՝ գարնան նվիրած փոքրիկ պեպեններ։

– Գուցե չար վիշա՞պն է քեզ նեղացրել։ Թե՞ էլի ինչ-որ մեկը։

Աղջիկն ակամայից ժպտաց և, շփոթվելով, պատասխանեց.

– Ո՛չ։

– Մի՛ տխրիր։

Ամեն մի օրը պարգևն է Աստծու,
Բնավ նման չէ երեկվա օրվան,
Ամեն նոր գրված բանաստեղծություն՝
Անկրկնելի մասն հավերժության,
Ինչպես սպիտակ մշուշն առավոտյան
Անկրկնելի մասն հավերժության։

Ուրախացի՛ր։ Տե՛ս ինչ հրաշալի օր է։

– Իսկ մի՞թե կարելի է ուրախանալ, երբ ամեն ինչ վատ է։

– Իհարկե, նայի՛ր շուրջդ, ինչպիսի՜ գեղեցկություն։

Յուլյան նայեց շորջը և հանկարծ տեսավ անսահման կապույտ երկինքը, փայլող արևը, թեթևակիորեն քամուց օրորվող սլացիկ կեչիները և բազմաթիվ մարդկանց, ովքեր յուրովի երջանիկ էին և ուրախանում էին. ծիծաղում էր փոքրիկը, որին գգվում էր շնիկը, ժպտում էր մանկասայլակով երկվորյակներին

ման ածող ամուսնական զույգը. մեծահասակ մարդիկ ուրախանում էին շուրջբոլորը ցնծացող կյանքով։

Աստիճանաբար ուրախությամբ լցվեց նաև Յուլյայի սիրտը, և նա սկսեց ժպտալ։

«Տեր Աստված, որքան երջանիկ եմ, որ Դու ինձ կյանք ես պարգևել»,– մտածեց աղջիկը և շրջվեց՝ շնորհակալություն հայտնելու երիտասարդին, բայց նա արդեն գնացել էր։

Աննկատ մի շաբաթ անցավ։ Յուլյան կանգնած էր տաճարում, ձեռքերը կրծքին ծալած և պատրաստվում էր Հաղորդություն ստանալ։ Նրա աչքերը շողում էին, շուրթերը կրկնում էին երգչախմբի երգը. «Ճաշակեցեք Քրիստոսի մարմինը, ճաշակեցեք անմահության աղբյուրը»։ Նա զգում էր, որ այդ օրը ինչ-որ բան է կատարվելու։

Աստվածային Պատարագից հետո աղջիկը Փրկչի սրբապատկերին մոտեցավ երախտագիտության ամենանվիրական խոսքերով, որոնք բխում էին նրա սրտից։ Նա արդեն պատրաստվում էր գնալ, երբ հանկարծ նկատեց իրեն մոտեցող ծառայողին։ Որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ ճանաչեց առափնյա փողոցի այն նույն երիտասարդին։ Նա ձեռքը մեկնեց աղջկան, ափի մեջ՝ անուշահոտ նշխար։ Յուլյան զարմացած հարցրեց.

– Սա ինձ։

– Այո՛, քեզ։

– Հենց խորանից։

– Այո՛, խորանից,– ժպտալով պատասխանեց նա։

– Փրկի՛ր, Տե՛ր,– և նա խնամքով վերցրեց նշխարը։

...Ժամանակ անցավ։ Նրանք կանգնած էին խորանի առաջ վառված մոմերը ձեռքերին՝ վկայելով իրենց սերը Աստծու և միմյանց նկատմամբ։ Նա՝ նրբագեղ աղջիկը երկար, շիկահեր հյուսքով, սպիտակ հագուստով։ Նա՝ երիտասարդը՝ փոքրիկ պեպենները դեմքին։

«Ամուսնանում են Աստծու ծառա Իգորը և Աստծու ծառա Յուլյան...»։

Արյան հիշողություն

Այդ կիրակին սկսվեց անուրախ։ Ես սպասում էի ամուսնուս գործուղումից վերադարձին։ Անհանգստանում էի։ Երեխաները, հազիվ արթնացած, արդեն հասցրել էին չարություն անել։ Պապիկը Պավլիկին հերթական անգամ բռնեց հանցանքի վայրում։ Թոռը նորից մտել էր պապիկի պահարանը և խաղում էր դաշույնի հետ, մի բան, որը խստորեն արգելված էր։

Փոքրիկ Անեչկան առավոտից թնկթնկում էր, հրաժարվում էր նախաճաշից. իր հանդեպ ուշադրություն էր պահանջում։

Սկեսուրս սկսեց հերթական անգամ ինձ հանդիմանել, որ երեխաներին սխալ եմ դաստիարակում։ Նա խոսեց երկար, բարձր և շատ համոզիչ։ Եվ ռեժիմը չեմ պահում, և՛ ինչ ասես տալիս եմ ուտելու, և՛ երեկ երեկոյան ինչու եմ Անեչկային թույլ տվել տորթի երկրորդ կտորը ուտել, և՛ երեխաներն անդադար ինչ որ բան են կրծում. մե՛կ բիսվածքաբլիթ, մե՛կ խնձոր, մե՛կ

գաթա, իսկ դրանից միայն ստամոքսն է խանգարվում և ախորժակն է վատանում:

Ես լսում էի համբերությամբ և խոնարհաբար՝ հոգումս խլացնելով նյարդայնության և անբարյացակամության ալիքները: Սկեսուրս ճիշտ էր. ես իսկապես վատ տնտեսուհի եմ: Եվ ոչ այն պատճառով, որ չգիտեմ ուտելիք պատրաստել, տունը հավաքել, լվացք անել, նա այդ ամենը պարզապես ինձանից ավելի լավ է անում:

Վերջապես առավոտվա բոլոր թյուրիմացությունները լուծվեցին: Անեչկան տատիկի օգնությամբ կերավ, իսկ Պավլիկը անկյունից ազատ արձակվեց՝ դաշույնը ձեռք չտալու խոստումով:

Ես երեխաների հետ պատրաստվում էի դուրս գալ:

– Ինչ է, նորից եկեղեցի՞ եք գնալու,– կշտամբանքով գլուխն օրորեց սկեսուրս, երբ հասանք շեմին:

Իսկ սկեսրայրս խրատական ասաց.

– Երեխաների գլուխը մի՛ լցրու այդ տիրացուական բարբաջանքով: Մենք ապրել ենք առանց դրա և վատ չենք ապրել, և նրանք նույնիսկ շատ լավ կապրեն:

Ես ծանր հոգոց հանեցի, և դրսի դուռը փակվեց մեր հետևից: Մենք իջանք աստիճաններով և մուտքից դուրս եկանք ձեռք–ձեռքի բռնած: Դեղնած կեչիների կատարների վերևում շողշողում էին ուղղափառ եկեղեցու խաչերը, և մենք կարճ ճանապարհով ուղղվեցինք այնտեղ: Աշնանային օրը լցված էր թարմությամբ: Մենք քայլում էինք դեպի Աստված...

Պատարագից հետո զբոսնում էինք այգում: Երեխաները խաղում էին ավազի վրա, իսկ ես նստել էի նստարանին և մտածում էի իմ կյանքի մասին:

Ռուսական ծայրամասից հայտնվեցի մայրաքաղաքում՝ գեներալի ընտանիքում: Ինչպես գտնում էին իմ հարազատները, հաջող եմ ամուսնացել: Երբ հյուր էին գալիս մեր տուն, նրանք ասում էին. «Դու յուղ ու մեղրի մեջ ես ապրում: Այդպիսի հարուստ տուն: Այդպիսի լավ սկեսուր, սկեսրայր: Իսկ ամուսինդ ընդհանրապես ոսկի է»:

Այդ ամենը ճիշտ էր: Եվ ամուսնուս մասին, և՛ նրա ծնողների մասին: Լավ մարդիկ են, բարի, առատաձեռն, մեզ բարի կամեցող... Յուրովի:

Նրանք խորհրդային տարիներին աթեիստական դաստիարակություն էին ստացել, կյանքում մեծ հաջողությունների հասել, նրանց ամեն ինչ տրվում էր, թեև դժվարությամբ, բայց ընդհանուր առմամբ՝ առանց մեծ խնդիրների և ցնցումների:

Նրանք Աստծուն հավատալը համարում էին անգրագետ տատիկների բաժինը՝ նրանց ներողամտորեն «թույլ տալով» գնալ եկեղեցի և տոնել իրենց տոները: Սկեսուրս և սկեսրայրս մկրտված չէին, իսկ նշանածս՝ Սաշան, մկրտվեց ամուսնությունից առաջ, քանի որ ես պահանջեցի, որ մենք պսակվենք եկեղեցով: Բայց

Սաշան դա արեց իմ հանդեպ սիրուց, այլ ոչ՝ ներքին համոզմունքից: Նրա հավատը դեպի Աստված շատ անորոշ էր, և երբեմն ես նրա համար շատ էի վախենում: Հենց այդ հոգևոր անորոշության պատճառով է, որ մարդիկ հաճախ հայտնվում են ամեն տեսակի պաշտամունքների և աղանդների մեջ:

Մինչև մեր ծանոթությունը ապագա ամուսինս հետաքրքրվում էր աստվածաբանությամբ և օկուլտիզմով, գնում էր ինչ-որ աղանդի ժողովներին: Կարդալով Աստվածաշունչը՝ նա հայտարարեց, որ «ամեն ինչ հասկացավ», և համարձակ դատողություններ էր անում դեպի Աստված տանող բազում ճանապարհների մասին:

Հնարավոր է, որ դա ավելի վատ էր, քան նրա ծնողների ռազմաշունչ աթեիզմը: Նրանք փորձեցին ազդել իմ հավատի վրա, փորձում էին իրենց թոռներին և ամուսնուս ետ պահել ուղղափառությունից՝ դատողություններ անելով «ժողովրդի համար հաշիշի» և «կրոնական թմբիրի» մասին: Դրան ես պատասխանում էի, որ իմ նախնիները արդեն հազար տարի հավատում են Քրիստոսին և ապրում են ուղղափառության օրենքներով: Եվ ավելացնում էի, որ, դատելով ըստ ընտանեկան ալբոմի լուսանկարների, նրանց նախնիները նույնպես ուղղափառություն են դավանել: Ես նրանց ասում էի, որ ուղղափառությունը մեր արյան մեջ է, դրան ի պատասխան նրանք նեղողամտաբար ժպտում էին:

Այդպես ես փորձում էի պաշտպանվել: Նրանց հետ ծանր էր: Իհարկե, նրանց համար էլ հեշտ չէր ինձ հետ:

Վերադարձանք տուն. ոչ մեկը չկար տանը: Ճաշը սառչում էր գազօջախի վրա, իսկ սեղանին սպիտակին էր տալիս մի գրություն: Սկեսուրս դողացող ձեռքով գրել էր. «Սոնեչկա, դժբախտություն է պատահել: Սաշան վթարի է ենթարկվել: Կտրվել է ղեկի ձգաձողը, մեքենան թռել է ճամփեզրի խրամափոսը և շրջվել է: Նա ուղեղի ծանր ցնցում ունի: Մենք նրա հետ յոթերորդ հիվանդանոցում ենք: Արի՛, եթե կարող ես»:

Կարդալով այդ գրությունը՝ զգացի, որ ոտքերս ծալվում են, իսկ սիրտս սկսեց արագ-արագ խփել: Դժվարությամբ մտքերս հավաքելով՝ երեխաներին տարա հարևանուհուս մոտ, իսկ ինքս գնացի հիվանդանոց:

Ամուսնուս ծնողներն այնտեղ էին: Կողք-կողքի նստած էին անկողնու մոտ: Սաշան պառկած էր առանց որևէ վնասվածքի: Ոչ մի՛ քերծվածք, ոչ մի՛ կապտուկ: Միայն սաստիկ գլխացավը և աչքերի պայթած մազանոթներն էին խոսում նրա հետ պատահածի մասին:

– Ամրագոտին, նրան ամրագոտին է փրկել,– շշնջում էր ինձ սկեսուրս: Իսկ սկեսրայրս բարի ձայնով ինչ-որ բան էր ասում տղային:

Շուտով մեզ խնդրեցին հիվանդասենյակից դուրս գալ: Ծնողներն առաջինը դուրս եկան, ես մի քիչ էլ մնացի նրա հետ, ձեռքը բռնած, ուժ չունենալով պոկվել նրանից: Վերջապես նա քնեց:

Ես վերադառնում էի տուն և առանց ամաչելու լալիս էի: Եվ Աստծուն գոհություն էի հայտնում, որ Նա իմ ամուսնուն փրկել է: Ոտքերս ինձ տարան եկեղեցի: Վառվող մոմերը ցրում էին խավարը: Երգեցողություն էր լսվում: Եվ հանկարծ աղոթողների մեջ տեսա սկեսրոջս և սկեսրայրիս: Նրանք կանգնել էին ասես կորած մեծ երեխաներ՝ չիմանալով ինչ անել... Այնուհետև մոտեցան Նիկողայոս Սքանչելագործի սրբապատկերին և մեծագույն լրջությամբ մոմեր վառեցին: Սկեսուրս անվարժ խաչակնքեց: Երկուսի աչքերում էլ արցունք կար: Շուտով նրանք գնացին՝ այդպես էլ չնկատելով ինձ:

Չեմ կարող ասել, թե պատահածը արմատապես փոխեց նրանց վերաբերմունքը ուղղափառության հանդեպ, բայց և այնպես... Երբ մտածում եմ, թե այն հիշարժան երեկոյան ինչը բերեց նրանց եկեղեցի, ակամայից նորից ու նորից միտքս է գալիս, որ մեր նախնիների հազարամյա դավանությունը՝ ուղղափառությունը, անբացատրելի կերպով մտել է մեր մարմնի և արյան, մեր հոգիների մեջ: Եվ ամենայն չար և օտար բան, որ մեզ խոտորում է այդ դավանությունից, անցողիկ է...

Տերը սպասում է իր մոլորված զավակներին: Նա սպասում է բոլորին՝ աթեիզմի, աղանդների, օկուլտիզմի, թերահավատության ցանցերում խճճվածներին...

Եվ մենք կվերադառնանք: Չէ որ Տերը սպասում է մեզանից յուրաքանչյուրին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Դա այն անսպասելի հարցազրույցներից էր, որոնք լրագրողի հոգում անջնջելի տպավորություն են թողնում:

Հանդիպումը պետք է կայանար մանկական մարզադպրոցում: Քսենյան նշանակված ժամից մի փոքր ավելի վաղ էր եկել: Նախամուտքում ոչ ոք չկար: Օրիորդը բարձրացավ հանդիսատեսների համար նախատեսված պատշգամբը և, հարմար տեղավորվելով՝ լսում էր ջրում շմփացնող երեխաների բացականչությունները և ծիծաղը:

– Բարի օր,– ձայն տվեց մարզահագուստով լողավազանի եզրին կանգնած մարդը:– Այդ դո՞ւք էիք երեկ հեռախոսով խոսում ինձ հետ:

– Դուք Վիկտոր Անդրեևիչն եք:

– Այո՛, ես եմ,– հաստատեց նա՝ ժպտալով,– հիմա կմոտենամ՝ մի տասը րոպեից: Շուտով կվերջացնենք:

– Ոչինչ, ես կսպասեմ:

Հենվելով բազրիքին՝ նա սկսեց հետևել լողացող երեխաներին: Թվում է՝ շատ սովորական մի բան:

Սակայն, երբ երեխաները սկսեցին ջրից դուրս գալ, լրագրողուհին նկատեց, որ երեխաներից մեկը ձեռք չուներ, իսկ մեկ ուրիշը՝ ոտնաթաթ: Ավելի ուշադիր նայելով, նա հասկացավ, որ բոլոր երեխաները հաշմանդամ են:

Մի քանի րոպեից վերև բարձրացավ Վիկտորը: Նա մի երիտասարդ էր՝ սպորտային կազմվածքով, սրտաբաց, հաճելի դեմքով և ծիծաղկոտ, խաժ աչքերով:

– Այո՛, ձերդ մեծություն մամուլը ինձ վաղուց չի պատվել իր ուշադրությամբ,– կատակեց նա և մեկնեց ձեռքը:

Որոշելով, որ զրույցի համար ավելի լավ տեղ չկա, նրանք տեղավորվեցին հենց այդտեղ, պատշգամբում, բազմաթիվ ծաղիկներով և բուսականությամբ շրջապատված:

Լրագրողուհին չտվեց նախապես պատրաստած հարցեր. դրանք արդեն երկրորդական էին դարձել, լողավազանում տեսածը նրան անչափ ցնցել էր: Նա ուրիշ բանից սկսեց.

– Ասեք, Վիկտոր, դուք ինչո՞ւ մեծ սպորտը թողեցիք ձեր փառքի գագաթնակետում և առանց որևէ պատճառի հեռացաք դեպի անհայտություն: Ձեր երկրպագուները մինչև հիմա էլ հիշում և սիրում են ձեզ: Իմանալով, որ այստեղ եք աշխատում, ես մտածեցի՝ անվանի Բատուրովը ոչ մի տեղ էլ չի անհայտացել, նա պարզապես իրեն արժանի հետևորդներ, համաշխար-

հային սպորտի ապագա աստղեր է պատրաստում: Գալիս եմ և ինչ եմ տեսնում՝ դուք հիվանդ երեխաների՞ եք մարզում:

Վիկտորը քննող հայացքով նայեց նրան:

– Ուրեմն երեխաների մասին ոչինչ չգիտեիք և եկել եք իմ մասի՞ն գրելու:

– Դե, այո՛, ձեր մասին:

– Ահա թե ինչ,– ձգեց Վիկտորը:– Ո՛չ, իմ մասին պետք չէ: Ավելի լավ է նրանց մասին գրեք:

– Լավ,– համաձայնեց Քսենյան,– կգրեմ: Իսկ ձեր մասին չե՞ք պատմի,– նրա ձայնում խնդրանքի երանգներ հնչեցին:– Խնդրում եմ, ոչ մամուլի, այլ ինձ համար,– ցածր ավելացրեց նա:

Վիկտորը գլուխը կախեց: Ճնշող լռություն տիրեց:

– Երեք տարի առաջ իմ կյանքում բեկում կատարվեց,– վերջապես առաջինը խզեց լռությունը Վիկտորը:– Այն ժամանակ ես մեծ հույսեր էի խոստանում, արդեն բազմաթիվ մեդալներ ունեի՝ լրջորեն պատրաստվում էի Օլիմպիադային: Թվում էր, թե քսանչորս տարեկանում ամեն ինչ ունեի՝ փող, փառք, գեղեցկուհի կին: Բայց դուք չեք հավատա, ես երջանիկ չէի:

– Ինչո՞ւ:

– Բանն այն է, որ իմ մարզական հավակնոտության պատճառով դադարել էի արժևորել այն ամենը, ինչն այն ժամանակ այնքան թանկ էր ինձ համար: Կյանքը վերածվել էր ավերջանալի, հյուծող մարզումների, ես պայքարում էի առաջին տեղը գրավելու համար: Կինս հեռացավ ինձանից, ընկերներիս հետ դադարեցի շփվելուց, նույնիսկ ծնողներիս արդեն քանի տարի չէի տեսել:

Վիկտորը կրկին լռեց: Նա նստել էր մի փոքր առաջ թեքված: Նրա ժպտերես դեմքը անսովոր լուրջ դարձավ: Քսենյան նույնպես լռում էր: Նա հասկանում էր, որ Վիկտորն ինքն է որոշում՝ օտար մարդուն իր ներքին աշխարհը ներս թողնել, թե՞ ոչ:

– Նոր տարվա նախօրյակին էր,– նորից խոսեց նա,– շուրջը բոլորը իրարանցման մեջ էին, պատրաստվում էին տոնին, նվերներ գնում: Իսկ ես տխրում էի, սիրտս ճմլվում էր: Ինչ որ կերպ տրամադրությունս բարձրացնելու համար խանութ գնացի՝ ինձ ինչ-որ բան գնելու:

Լավ ժամացույց ընտրեցի: Այն ֆիրմային թանկ ժամացույց էր, որի մասին վաղուց էի երազում: Բայց այդ խաղալիքը ևս երկար չմխիթարեց ինձ: Պատկերացրեք՝ նստել եմ նստարանին, կողքովս հարյուրավոր մարդիկ են անցնում, իսկ ես ինձ ամենամիայնակ մարդն եմ զգում: Եվ այդ պահին կողքիս մի ծերունի նստեց, շրջվեց դեպի ինձ և ասում է.

– Մարդիկ ամբողջ տարին ձգտում են իրենց համար ինչ-որ բան ձեռք բերել, երբեմն էլ խլել ուրիշից: Բայց, փառք Աստծո, վաղ թե ուշ սկսում ես հասկա-

նալ, որ իրական երջանկությունը սիրտդ ուրիշներին նվիրելն է:

Ես ոչինչ չպատասխանեցի, թեև նրա խոսքերն ինձ խորապես ցնցեցին: Ես իսկապես գտնում էի, որ ինձ երջանիկ կարող է դարձնել միայն այն, ինչ ունեմ՝ նյութական բարեկեցությունը, փառքը, ճանաչումը:

Դուրս գալով խանութից, ես մոտեցա մի կնոջ, որ հաշմասայլակով ինչ-որ տեղ էր տանում իր դեռահաս որդուն, և նրանց օգնեցի բարձրանալ աստիճաններով: Մենք խոսեցինք, և ես, գրպանիցս հանելով ժամացույցի տուփը, տղային խնդրեցի նվեր ընդունել ինձանից:

Ձեք պատկերացնում, թե ինչ կատարվեց ինձ հետ: Ես տեսա նրա մեկնած ձեռքերը, նրա երախտագիտությամբ լի աչքերը և երջանիկ ժպիտը: Իմ մեջ ասես մի ծանր բան փուլ եկավ: Ինչ-որ մեկին պետք գալու զգացումը, որ ծնվեց այդ ժամանակ, քանիցս ջերմացրել է իմ հոգին: Պատկերացնում եք, ուրիշի երեխայի ուրախությունը ինձ տվեց այն, ինչը չէր տվել և ոչ մի թանկարժեք գնում: Այդ պահին ես հասկացա, թե որքան իրավացի էր ծերունին:

Այդ հանդիպումից հետո ես սկսեցի մտածել իմ կյանքի մասին, շատ բան վերանայեցի: Եվ, հավատացեք, այսօր ես ավելի շատ բան ունեմ, քան այն ժամանակ՝ երեք տարի առաջ:

Խմբագրություն վերադառնալու ճանապարհին Քսենյան մեքենան կանգնեցրեց կարմիր լույսի տակ, նոթատետրում գրառեց. «Իսկապես հարուստ ես դառնում նրանով, ինչ տալիս ես ուրիշներին»:

Լուսակիրը թարթեց դեղին աչքը և միացրեց կանաչ գույնը: Մեքենան շարժվեց առաջ:

ԿԱՂԱՒ-ԺԱՄՀԱՐԸ

ԼԵԳԵՆԴ

Եղել է, թե չի եղել՝ բայց ձեզ կպատմեմ՝ դուք լսեք։ Սուրբ Ռուսիայում հուլիս ամսին ցրտեց, ինչպես ուշ աշնանը։ Ցրտեց մարդկային սրտերից։ Ռուս ժողովրդի մեջ հայտնվեցին անտարբեր, չար, անհնազանդ, Աստծուն չանսացող մարդիկ։ Մեծերին չեն հարգում, փոքրերին նեղացնում են։

Երկար համբերում է Աստված, բայց չէ՞ որ շատ ուժեղ էլ հարվածում է։ Եվ Աստծո բարկությունը ռուսների վրա հասավ։ Ասես անգղներ, սև ամպերի նման, Ռուսիայի վրա հարձակվեցին թշնամու զորքերը։ Հրդեհի մատնեցին քաղաքները՝ գյուղերի հետ, գերի տարան գեղեցկուհի օրիորդներին ու փոքրիկ երեխաներին։

Բայց ոչ բոլորն էին Աստծուն մոռացել։ Ռուսական երկրի ծայրամասում մի փոքրիկ քաղաք կար՝ քարե պատով պարսպված, այնտեղ մի ոսկեգմբեթ եկեղեցի՝ զանգակատունը շատ բարձր։ Եվ այն քաղաքում մոր հետ ապրում էր մի քաջ պատանի։ Նրա անունը Օնիսիմոս էր։ Աստծո տաճարում նա ժամհար էր։ Հենց դրանով էլ հայտնի էր, դրանով էլ ծառայում էր։ Սիրտը՝ մաքուր, սիրտը՝ զգայուն, բազուկներն՝ ուժեղ, բայց ոտքերը՝ թույլ։ Նա ի ծնե կաղ էր, այդ պատճառով էլ ռուսական զորքի հետ չմեկնեց պատերազմելու պիղծ խանի դեմ։

Երբ Ռուսիայի վրա հարձակվեցին պիղծ ոհմակները, այսպես ասաց Օնիսիմոսը իր մորը. «Մայր իմ հարազատ, պայծառ արև իմ, ես գնում եմ հսկելու։ Զանգակատնից չեմ իջնի, մինչև չհաղթենք ժանտ թշնամուն»։ Ստանալով մոր օրհնությունը՝ սկսեց օգնություն հայցել Աստվածամորից. «Ամենասուրբ Աստվածամա՛յր, երկնային բարեխո՛ս, մի՛ թողնիր մեզ՝ որբերիս, անօգնական, օգնի՛ր հաղթելու խանի զորքերին»։ Խոսքն ասվեց, գործը՝ արվեց. գնաց Օնիսիմոսը Աստծո տաճար։

Նայում է պատանին ինչպես սրատես բազե հեռու-հեռուները, անհուն խորքերը։ Մի օր է հսկում, երկու օր է հսկում՝ շուրջբոլորը ամեն ինչ լուռ է։ Իսկ երրորդ օրը սև ամպի նման քաղաքին է մոտենում խանի զորքը։ Ժամհարը հնչեցնում է ահազանգը, աղոթում է Աստծուն։ Ձլքեց Աստվածածինը։ Հզոր ուժը շրջապատեց քաղաքը, ուժն անտեսանելի, ուժն Աստծու։ Եվ չի կարողանում խանը ամրոցը կռվով գրավել։ Շատ չարչարվեց, շատ ուժասպառվեց. չկա ճակատամարտ՝

չկա հաղթություն: Ժամհարը խփում է զանգերը, իսկ խանի զորքերը թուլանում են:

Բայց չի ննջում մութ ուժը, ուժը չար, չի դիմանում զանգերի ձայնին: Եվ կախարդ շամանները ասացին խանին. «Մենք ժամհարին կսպանենք՝ կախարդանքով և խաբեությամբ: Ժամհարը չի թողնի, որ զորքը մոտենա քաղաքին, բայց չի էլ թողնի, որ ծերունին որբի հետ աղետի մեջ մնա»:

Ժամհարը կանգնած հսկում է զանգակատանը, հետևում է թշնամու բանակին, իսկ քաղաքի դարպասների մոտ մի ծերունի երեխայի հետ աղերսում է. «Բարի մարդի՛կ, մի՛ թողեք, որ թշնամին հոշոտի մեզ»: Օնիսիմոսի սիրտը մաքուր է, զգայուն, գթասեր. ուրիշի ցավը կարծես իրենը լինի: Բացեց դարպասները ծերունու և երեխայի առջև, և պիղծ ուժերը ներս մտան քաղաք: Ինչ իմանար, որ այդ անօգնական ծերունին չար կախարդ էր թշնամու զորքից: Ասում է Օնիսիմոսին ծերունին. «Թող քեզ գրկեմ, որդի՛ս»: Հազիվ էր ծերունին հպվել նրա ուժեղ ձեռքերին, երբ Օնիսիմոսը դարձավ մի հուժկու կաղնի:

Այլևս չի զրնգում հրաշք-զանգը, քաղաքում լսվում են միայն լաց ու տնքոց: Խանը ավերեց տաճարը զանգակատան հետ, և ազատ մարդիկ ստրուկ դարձան: Բայց խանի քունը չի տանում, նվվում է չար սիրտը, նրան հանգիստ չի տալիս հուժկու կաղնին: Եվ խանը որոշում է կաղնին կտրել, որ հավիտյան կործանի պատանուն:

Կաղնու մոտ է գալիս ծեր մայրը, բարձրաձայն ողբում է, արցունք է թափում. «Իմ բարի որդի, ինչպե՞ս ապրենք սրանից հետո: Իմ հզոր կաղնի, խանն ուզում է քեզ կտրել»: Շարժեց կատարն իր, աղմկեց, խշխշաց կաղնին, և մայրը այդ խշշյունի մեջ լսեց իր Օնիսիմոսի ձայնը. «Մի՛ տխրիր, մի՛ լար, մայր իմ, կաղնեպսակը իմ սրտով է: Սիրելի և թանկ է ինձ նահատակության պսակը: Երբ ինձ կտրեն խանի ծառաները, հավաքեք իմ տաշեղ-ոսկորները: Երբ խստաշունչ ձմեռը գա, նրանցով վառեք ռուսական վառարանները»:

Ձմեռը երկար սպասեցնել չտվեց: Ցրտաշունչ, սաստիկ սառնամանիք էր, ինչպես երբեք: Ժողովուրդը սկսեց վառարանները վառել այդ տաշեղներով՝ ժամհարը մատուցեց վերջին ծառայությունը: Եվ վառվում է կրակը, ճրթճրթում է կրակը բոլորի տներում, կարծես զարգն է զրնգում: Այնպես տաք է տներում և այնպես ուրախ, կարծես դառը ցավ չկար:

Բայց այդպես չէր խանի զորքի վրաններում, չէ՞ որ այնտեղ կրակ չի վառվում: Եվ որքան ավելի է չարանում խանը, այնքան ավելի է ցրտում: Ցնաբուքը ծածկեց վրանները, և թշնամու ամբողջ զորքը ցրտահարվեց:

Իսկ հետո եկավ գեղեցիկ գարունը: Եվ հարություն առավ Ռուսական հողը: Գերությունից վերադարձան

աղջիկները, և ժողովուրդն ապրեց խաղաղ կյանքով։ Կառուցեցին եկեղեցի՝ զանգակատնով, տնկեցին կաղնու մի փոքրիկ անտառ։ Եվ աղմկում են կաղնիների կատարները, և զրնգում են զանգերը ամբողջ Ռուսիայով մեկ, որպեսզի մարդիկ հիշեն՝ չկա ավելի դառնաշունչ ու սոսկալի ձմեռ, քան մարդկային սրտերի ձմեռը։

Բարի լո՛յս, իմ ուրախություն

Ինչից ամեն ինչ սկսվեց։ Համադասարանցիների ընկերական հանդիպումից։ Այնտեղ Նաստյան առաջին անգամ տեսավ Կոստյային, որ պատահական էր հայտնվել այդ հանդիպմանը։

Փոխադարձ համակրանքը ծագեց անմիջապես։ Սեր առաջին հայացքից։ Հնարավոր է։ Բայց սկզբում շփվելու անհագուրդ ցանկությունն էր։ Կոստյան հանդիպում էր Նաստյային ինստիտուտի դասերից հետո և ճանապարհում էր նրան մինչև տուն՝ ճանապարհին պատմելով ծիծաղելի պատմություններ։ Երբեմն նրանք կինո էին գնում կամ համերգ, կամ զբոսնում էին ծեր այգում, իսկ եբեմն էլ պարզապես թափառում էին քաղաքի փողոցներով՝ մոռանալով եղանակը։

Կոստյան հաճախ գնում էր նաև Նաստյայի տուն։ Կապտաչյա, ոսկեգանգուր մազերով և առնականացած հրեշտակի դեմքով պատանին շատ դուր եկավ Նաստյայի ծնողներին։ Մայրիկը սովորաբար հյուրին պատվում էր նոր թխած կարկանդակներով, իսկ խորթ հայրը երիտասարդի հետ ծանրակշիռ զրույցներ էր

վարում նրա ապագա մասնագիտության շուրջ՝ Կոնստանտինը սովորում էր ինժեներ-մեխանիկի մասնագիտությունը:

Հենց այդ ժամանակ Կոստյան Նաստյայենց շենքը ավտոտնակներից բաժանող փայտե ցանկապատին գրեց. «Բարի լո՛ւյս, իմ ուրախություն»: Նախամուտքից դուրս գալիս Նաստյան ամեն անգամ տեսնում էր այդ բառերը, որոնք սպիտակին էին տալիս եղրևանու թփերի և ճյուղերը ցած խոնարհած, ծեր բարդիների արանքից:

Նրանք ամուսնացան: Հարսանիքից առաջ Նաստյան փեսացուի հետ մեկնեց գյուղ՝ մեծ տատիկի մոտ, որ միայնակ իր դարն էր ապրում ամուր, գերանակապ խրճիթում: Տատիկն օրհնեց նրանց Փրկչի ընտանեկան հնամենի սրբապատկերով: Իսկ հետո լաց եղավ: Երիտասարդները հանգստացնում էին նրան: Շուտով տատիկը հանգստացավ: Նրանց հյուրասիրեց գյուղական պարզ ուտելիքով: Իսկ երբ Կոստյան գնաց խոտանոցում քնելու, թոռնուհին մեծ տատիկի հետ դեռ երկար զրուցում էր:

– Սիրելի թոռնիկս,– ասում էր տատը,– դու իմ կանացի հիմար արցունքներին մի՛ նայիր: Ամուսնացի՛ր, ապրի՛ր, ուրախացի՛ր: Միայն թե չեմ կարող քեզ չասել այն, ինչ դու էլ գիտես: Վախենում եմ քեզ համար: Մեր ընտանիքի վրա ինչ-որ գիր կա: Կարծես անիծված ենք: Տղաներ չենք ծնում: Միայն աղջիկներ: Նրանք էլ

բոլորը չէ, որ ամուսնացել են, կամ այրիացել են փոքր երեխաներով: Ինչի՞ համար է Աստված մեզ պատժում՝ չգիտեմ: Ինչ մեղք կա մեզ վրա: Աղոթում եմ, աղոթում ամեն օր, ներում եմ խնդրում, իսկ ինչի համար՝ չգիտեմ: Միայն Տերը գիտի:

Այդպես եղավ և՛ իմ մոր, և՛ տատիկիս հետ: Իմ աղջիկը՝ Քսենյան, քո տատիկը, երկու աղջիկների հետ քսաներեք տարեկանում այրիացավ: Քո մայրը այրիացավ երեսուն տարեկանում: Երկրորդ անգամ ամուսնացավ, իսկ երեխաներ Աստված այդպես էլ չտվեց: Դու նրա միակն ես: Հիշի՛ր այդ մասին: Լա՛վ նայիր ամուսնուդ:

Նաստյան պատասխանեց.

– Ինչ ես ասում, տատիկ, դա պատահականություն է, համընկել է: Մեզ վրա ոչ մի անեծք չկա: Ես չեմ հավատում: Տերը ողորմած է և բարի: Ամեն ինչ լավ կլինի,– այդպես էր ասում նա, իսկ հոգում կարծես մի ստվեր ընկավ:

Լսում էր տատիկը ծոռնուհուն, գլխով էր անում՝ չհամաձայնվելով նրա հետ: Միայն մի բան էր պնդում.

– Աղոթի՛ր, Նաստյա: Մեր ամբողջ տոհմի համար աղոթի՛ր: Մի՛շտ աղոթիր:

Ուրախ հարսանիք արեցին: Կոստյայի ծնողները երիտասարդների համար տուն վարձեցին: Մեկ տարուց ծնվեցին երկվորյակ տղաներ: Նրանց անունները դրեցին Եգոր և Իվան: Նաստյան շատ էր ուրախանում

իր փոքրիկներով: Անցնում էր ժամանակը, տղաները մեծանում էին առողջ և ամուր: Ամուսինն ավարտեց ինստիտուտը, տեղավորվեց ըստ մասնագիտության: Նրանք ծառայողական բնակարան ստացան Կոստայի աշխատավայրից: Կյանքն աստիճանաբար կարգավորվում էր:

Մի անգամ երեկոյան Կոստյան, որ միշտ այնքան ճշտապահ էր, առանց նախազգուշացնելու մնաց աշխատավայրում: Զեկավ նաև գիշերը: Նայստյան և նրա հարազատները փնտրեցին նրան: Եվ գտան: Դիահերձարանում:

Հետաքննությունը ցույց տվեց, որ երեկոյան ժամը յոթին, երբ Կոստյան շտապում էր տուն, հարևան փողոցում նրան կանգնեցրել էին երեք հոգի: Նրանցից մեկը դանակով էր: Հարվածել էին ուղիղ սրտին: Այն մեկ ակնթարթում դադարել էր բաբախելուց: Այդպես Նաստյան այրիացավ՝ մնալով երկու մանկահասակ որդիների և նոր կյանքի հետ, որը կրում էր կրծքի տակ:

Այդ ընթացքում մեծ տատիկը մահացավ: Մայրը չէր ցանկանում քննարկել կատարվածը: Նա միայն մռայլվեց և անընդհատ լռում էր: Նաստյան ինքն իրեն ասում էր. «Երևի քիչ եմ աղոթել մեր տոհմի, իմ ընտանիքի, ամուսնուս համար: Աղոթքով մեղքերս չեմ քավել»: Թաղումից հետո, երբ անցան աչքերի տակի սև շրջանակները, Նաստյան ստիպված էր տեղափոխվել ծնողների մոտ, քանի որ ծառայողական բնակարանը նրանից ետ վերցրեցին:

Պետք է շարունակեր ապրել, հաղթահարելով ամեն մի օրը: Նաստյան ասես մագլցում էր զառիթափ սարն ի վեր: Ամեն ինչ դժվարությամբ էր տրվում: Աղջիկ ծնվեց: Դաշենկան: Փոքրիկ, հիվանդոտ, լացկան: Նաստյան գիշերները համարյա չէր քնում: Ցերեկն էլ ժամանակ չկար:

Երկու կողմերի ծնողներն օգնում էին ինչով կարող էին: Նաստյան աղոթում էր և հարցնում Աստծուն «Ինչի՞ համար, Տեր Աստված: Ինչի՞ համար: Ինչո՞ւ նա մահացավ այդքան երիտասարդ: Եվ այդքան անիմաստ մահով»:

Ամբողջ ընտանիքով նրանք սրբավայրեր էին մեկնում, լինում էին վանքերում: Եվ ամեն տեղ Նաստյան պատասխան էր փնտրում: Եվ չէր գտնում: Կամ չէր լսում: Կամ չէր ուզում լսել:

Տարիներն անցնում էին: Երեխաները մեծացան: Նաստյան աշխատում էր, երեխաները սովորում էին դպրոցում: Դաշան մանկապարտեզ էր գնում: Իվանը և Եգորը սովորական տղաներ էին. տաքարյուն, կռվազան, իրենց չափով խորամանկ: Համարյա չէին հիվանդանում: Շատ էին սիրում իրենց Նաստյա մայրիկին. օգնում էին ամեն ինչում, պաշտպանում էին: Նա էլ նրանց էր սիրում: Նրանք ամուսնու երկու փոքրիկ կրկնօրինակներն էին: Բայց նա ամբողջ հոգով ու

սրտով, ինքնանմոռացության աստիճան, սիրում էր Դաշային:

«Իմ արցունքների զավակ, իմ ցավի զավակ» – այդպես էր կոչում նրան Նաստյան: Աղջիկը փխրուն էր, մեծ աչքերով, քնքշալի: Երբ նրան հարցնում էին՝ մեծանա՝ ինչ ես դառնալու, պատասխանում էր. «Հրեշտակ»:

Մի անգամ, ամառային մի արևոտ օր Նաստյան և մայրիկը նստել էին մեծ սենյակում՝ կլոր սեղանի շուրջը և նայում էին հին լուսանկարները: Տղաները խաղում էին հարևան սենյակում, իսկ Դաշան գորգի վրա պառկած նկարում էր: Երկար տարիներ անց, Նաստյայի մայրիկը առաջին անգամ խոսեց իրենց տանը արգելված թեմայի մասին: Այն նույն ճակատագրի կամ անեծքի մասին, որ կախված էր իրենց ընտանիքի վրա:

Նա վշտանում էր, արցունքները հոսում էին նրա այտերով, և՛ տխրում էր, և՛ խղճում էր բոլորին: Եվ նրանց, ովքեր հեռացան կյանքից, և՛ նրանց, ովքեր ապրում են հիմա, և՛ նրանց, ով դեռ չի ծնվել:

Եվ հանկարծ փոքրիկ Դաշան մոտեցավ նրանց, փաթաթվեց տատիկի ծնկներին և ասաց.

– Լաց մի՛ լինիր: Ես մեծանամ՝ միանձնուհի կդառնամ: Ես բոլորիդ տեղը կաղոթեմ, չվախենաք: Տեսեք ինչ ունեմ:

Եվ աղջիկը նրանց մեկնեց մի նկար, որի վրա նրանք տեսան իրենց բակը, ծաղկած եղրևանին, ծեր բարդիները և փայտե հին ցանկապատի գրությունը. «Բարի լո՛ւյս, իմ ուրախություն»: Եվ այդ բոլորի վրա սավառնում էր մի հրեշտակ, որի վրա գրված էր «հայրիկ»:

Յուլկան, կամ Աստված կներիս

1

Կանգառում սրթսրթում էր մի փոքրիկ, վտիտ աղջիկ: Ընկերուհու տնից ուշ էր դուրս եկել, իսկ ոտքով երեք կանգառ գնալ չէր ուզում, մութ էր և ցուրտ: Շուրջը ոչ-ոք չկար, և Յուլկան սկսեց պարել՝ ձեռքերը թափահարելով և ոտքերով դոփելով՝ մի կերպ պիտի տաքանա՞ր թե ոչ, մինչև գար տասներկուերորդ ավտոբուսը: Յուլյան այնպես ոգևորվեց, որ չնկատեց, թե ինչպես իր կողքին սկսեց պարել նաև մի բարձրահասակ երիտասարդ, քանի դեռ նա չէր սկսել աշխույժ ձայներ արձակել պարի տակտով:

– Օ՛յ,– վեր թռավ Յուլյան և շփոթված կանգ առավ:

– Առաջին ագամ եմ սառնամանիքին պարում, այն էլ այսքան հմայիչ զուգընկերուհու հետ: Պավել,– ներկայացավ նա:

– Յուլյա,– թոթովեց աղջիկը, զգուշավոր զննելով նրա ատլետիկ կազմվածքը. համենայն դեպս ժամը տասներկուսն է, շուրջն էլ ոչ մեկը չկա:

Զրույցի բռնվելով՝ Պավելը Յուլյային համերգի հրավիրեց, որտեղ ինքը ելույթ էր ունենալու: Աղջիկն անհարմար զգաց և ասաց, որ իրենք ծանոթներ չեն: Բայց երիտասարդն առարկեց.

– Ծանոթ ենք մի ամբողջ հինգ րոպե, իսկ ժամանակը պետք է խնայել, որովհետև դա ամենաթանկն է կյանքում:

Տասներկուսն այդպես էլ չեկավ, և Պավելը Յուլյային ճանապարհեց մինչև տուն:

Ամբողջ կիրակի օրը նա հուզվում էր: Զորս հագուստ փորձեց և վազեց ընկերուհու՝ Նադյայի մոտ՝ հինգերորդը խնդրելու: Ի վերջո, հագավ առաջինը՝ իրանը կիպ գրկող մուգ-կապույտ զգեստը և վզին գցեց մարգարիտների շարանը, որը թոցրել էր ավագ քրոջից՝ Օլյայից:

Երիտասարդության պալատի մոտ աղմուկ և իրարանցում էր: Յուլյան կանգնել էր «Ծառայողական մուտք» մակագրությամբ դռան մոտ և մտածում էր, որ իզուր է սպասում, բայց դուռը բացվեց և դուրս եկավ Պավելը՝ ժողովրդական տարազով, որը նրան շատ էր սազում: «Եկել ես: Ապրես»,– ողջունեց նա և նրան տարավ դահլիճ, նստեցրեց առաջին կարգում և վազեց կուլիսների ետև:

Համերգը սկսվեց: Պավելը մենակատար էր, այն էլ ինչպիսի՜: Վեց անգամ նրան բեմ հրավիրեցին և չէին ուզում բաց թողնել, այնքան ոգևորություն և կրակ

կար նրա պարերի մեջ: Յուլյան նստել էր, հպարտ, որ հատկապես նա է իրեն այստեղ բերել և, ինչպես ասում են՝ «իր վրա աչք է դրել»: Մի փոքրիկ խնդիր կար. Յուլյան ապրում էր մի գավառական քաղաքում, իսկ Պավելը Մոսկվայից է եկել երեք շաբաթով հյուրախաղերի: Բայց Յուլյան այնքան ֆիլմեր էր դիտել երջանիկ ավարտով, որ հավատացած էր՝ Պավելն իրեն Մոսկվա կտանի, և իրենք ամբողջ մնացած կյանքում երջանիկ կլինեն:

Երկու շաբաթ անցավ, ինչպես հեքիաթում: Ամեն օր Պավելը նրան ծաղիկներ և կոնֆետներ էր նվիրում: Ընկերուհիները նախանձից պարզապես պայթում էին:

Ծնողներին և քրոջը ոչինչ չէր պատմում, վերջ, ինքը տասնութ տարեկան է՝ չափահաս: Թե չէ կսկսեն հարցաքննել, խրատ կարդալ՝ ո՞ւմ է պետք: Այդ պատճառով ծաղիկները տանում էր Նադյայի մոտ, իսկ տուն վերադառնում էր տասնմեկից ոչ ուշ:

Մոտենում էր հին Նոր տարին: Սովորաբար ամբողջ ընտանիքը տոնը դիմավորում էր ամառանոցում, թեժ բուխարու մոտ, մոմեր վառած: Մեծ պապիկի հատակի ժամացույցը դանդաղ և հանդիսավոր խփում էր. «Բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ...»: Բոլորը միասին հաշվում էին զարկերը, հետո մի-մի բաժակ շամպայն էին խմում, իսկ վերջին կումը թափում էին բուխարու մեջ՝ երջանկության համար:

Յուլյան վատ էր զգում և ամառանոց չմեկնեց: Մայրիկն ուզում էր մնալ նրա հետ, բայց Յուլյան համոզեց, որ ինքն արդեն մեծ աղջիկ է և մրսածությունը ինքը կբուժի: Եվ ընդհանրապես, հո եսասեր չէ, որ տոն օրով ընտանիքը բաժանի: Քույրը՝ Օլյան, մի կույտ տեսաֆիլմեր բերեց, վիզը փաթաթեց շարֆով և պատվիրեց տնից դուրս չգալ, դրա կարիքը չկա, սառնարանը լիքն է մթերքով:

Տասներեքի առավոտյան բոլորը մեկնեցին: Սպասելով մի ժամից ավելի՝ գուցե վերադառնան ինչ-որ պատճառով, Յուլկան ցատկեց մահճակալից, շպարվեց և խոհանոց սլացավ ռոմանտիկ ընթրիք պատրաստելու երկուսի համար: Երեկոյան ժամը ութին հնչեց դռան զանգը: Պավելը ալ վարդերի փնջով, տասնհինգ հատից ոչ պակաս, մի ծնկի վրա իջնելով, համբուրեց նրա ձեռքը և մատուցեց ծաղիկները:

Ամեն ինչ ասես ֆիլմում լիներ: Սեղանին՝ մոմեր, կիսախավար սենյակ, երեկոյան զգեստ, ցածր երաժշտություն, հախճապակե բաժակներում՝ սուտակի փայլով շողշողացող գինի: Եվ Պավելի ձեռքերը կարծես իրենք իրենց հայտնվեցին սկզբում աղջկա ուսերին, իսկ հետո ավելի ու ավելի ներքև՝ արձակելով հագուստի կապը:

– Ո՛չ, ես չեմ կարող,– շշնջաց Յուլկան, շնչահեղձ լինելով սուր և նոր զգացողությունից,– դու ինձ կթողնես:

– Երբե՛ք, իմ սեր, երբե՛ք:

2

Մի շաբաթից նա մեկնեց: Պարզապես անհետացավ, ոչինչ չթողնելով. ո՛չ հասցե, ո՛չ հեռախոս: Ոչինչ, միայն հղիություն, բայց այդ մասին նա ավելի ուշ իմացավ:

Սկզբում Յուլկան չէր կարողանում հավատալ. մի՞թե այսպես է վերջանում սերը: Նա ժամերով չէր հեռանում հեռախոսի մոտից, օրը չորս անգամ վազում էր փոստարկղի մոտ և քողարկում էր իր զգացմունքները, ծնողներին ստելով, թե պատասխան է սպասում ինչ-որ հեռուստատեսային վիկտորինայից:

Մի ամիսից Յուլկան հանկարծ գիտակցեց՝ վերջ: Եվ ամբողջ ձայնով ոռնաց: Օլյան տանն էր: Նա այդ հեծկլտոցների վրա մոտ վազեց և քարացավ, տեսնելով, թե միշտ հանգիստ քույրը ինչպես է գալարվում հատակին՝ հեծկլտոցներից ցնցվելով: Մի ժամից հաջողվեց նրան քիչ թե շատ ուշքի բերել, վալերյանի կաթիլներ խմեցնել և նստեցնել բազկաթոռին: Յուլյան նստել էր բացակայող հայացքով, իսկ Օլյան ոչ մի կերպ չէր հասկանում՝ ինչ է կատարվում նրա հետ:

Յուլյայի համար դաժան օրեր էին: Բայց շուտով պարզվեց, որ այդ ամենը միայն ծաղիկներն էին, իսկ պտուղները զգացնել տվեցին ևս երկու շաբաթից:

Առավոտյան ժամը վեցին Յուլյան արթնացավ սրտխառնուքից, հազիվ հասցրեց վազել մինչև զուգարան: Վերջին ժամանակներս նա ինքնաբերաբար էր ուտում և չգարմացավ. այն չի կերել, ինչ պետք էր: Սակայն այդ «այն չին» շարունակվեց մի շաբաթից ավելի: Օլյան հարցրեց, թե ե՞րբ է եղել նրա վերջին ամսականը: Յուլյան աչքերը քրոջ վրա հառեց՝ որպես հիմարի վրա. վարակիչում պառկելու ժամանակն է, իսկ նա ամսական է հարցնում: Օլյան նրանից ընդամենը երեք տարի էր մեծ, բայց իրեն հարազատ մոր տեղ էր դնում:

Յուլյային դա գրգռում էր, նա այդպես էլ ասաց՝ հանգիստ թող, առանց այն էլ լավ չեմ: Օլյան ձեռք չէր քաշում նրանից, ստիպված հաշվեց օրերը և պարզվեց, որ «գործերը» պետք է սկսված լինեին դեռ մեկ ամիս առաջ:

– Հղիացել ես: Իսկ դեռ մեծ-մեծ խոսում էիր: Գոնե պաշտպանվո՞ւմ էիր,– հարցաքննում էր Օլյան:

– Ինչո՞ւ,– ողբաձայն լալիս էր Յուլկան:– Մենք դրա մասին չէինք մտածում: Մենք սիրում էինք:

– Մենք: Սիրո՞ւմ էինք: Ու՞ր է քո այդ սիրելին: Ինչ է՝ բնավորությունն ե՞րդ չհամապատասխանեցին,– գոռում էր Օլյան:

Բայց Յուլկան արդեն ոչինչ չպատասխանեց, նա կորցրեց գիտակցությունը, որովհետև ուզում էր մեռնել:

Բայց նա չմեռավ, այլ ուշքի եկավ: Օլյան կանգնած էր անուշադրի սպիտը ձեռքին:

– Եվ ե՞րբ դու հասցրեցիր:

– Ինչ անեմ հիմա: Ինչ անեմ,– փղձկում էր Յուլկան:

– Լա՛վ, մի՛ լաց: Կան եղանակներ, աբորտ կանես, ոչ մեկը չի իմանա: Իսկ մինչ այդ՝ անանուխ խմիր, որպեսզի սիրտդ չխառնի: Նայի՛ր, ոչ մեկին՝ ոչ մի խոսք, թե չէ ծնողներդ կաթված կստանան, ինչքան չլինի՝ նրանց սիրելի դստրիկն ես,– պատասխանեց Օլգան:

Երկուշաբթի հայրը գործուղում մեկնեց, իսկ մայրիկը հիվանդանոցում պառկեց իր խոցի հետազոտման համար՝ մոտենում էր գարունը՝ սրացումների շրջանը: Եվ Օլյան «հիմար հղիին» քաշ տվեց պոլիկլինիկա:

– Արդեն երկու ամսական կլինի,– որոշեց գինեկոլոգը:– «Ինչո՞ւ եք, աղջիկներ, սիրում գեղեցիկներին...»: Լավ, ո՞ւմ հետ չի պատահում, վաղը ժամը երկուսին արի հիվանդանոց, ուղեգիրը դուրս եմ գրել: Ոչինչ չուտես, թե չէ անզգայացումից շոկ կստանաս:

Օլյան սպասում էր միջանցքում:

– Դե ինչ: Ամեն ինչ կարգին է: Ուղեգիրը տվեց: Ինչո՞ւ ես գունատվել: Վաղը իմ ազատ օրն է, ես քեզ կօգնեմ հիվանդանոց հասնել և ետ վերադառնալ: Մի քիչ կպառկես այնտեղ և՝ տուն:

– Լսի՛ր, իսկ դու որտեղի՞ց այքան լավ գիտես,– Յուլյան ուղիղ նայեց նրա աչքերին: Օլգան ոչինչ չպատասխանեց, աչքերը փախցրեց և քայլեց դեպի դուռը:

3

Հիվանդանոցում ստիպված էին սպասել մի ամբողջ ժամ: Ժամը երեքին նրան տարան վիրահատարան, պատրաստեցին վիրահատության: Անզգայացնողը մոտեցավ ներարկիչը ձեռքին:

– Դե ինչ, գնացի՞ք:

– Սպասե՛ք: Ես միտքս փոխեցի: Թողե՛ք ինձ,– հանկարծ գոռաց Յուլկան:

– Ինչ ես գոռում: Մի՞թե դիտեցիր: Ու՞ր էիր մինչև հիմա: Ինչ ես անելու երեխայի հետ,– նրա վրա գոռաց մանկաբարձուհին:

Սովորաբար այդ արտահայտությունից հետո ցանկացած այցելու սկսվում էր և, դատարկ աչքերով նայելով առաստաղին, ձեռքը մեկնում էր անզգայացնողին: Բայց սա կարծես թոկից պոկվեց:

– Ում հետ ասես քարշ գալ գիտեք: Իսկ երեխային ո՞վ պետք է մեծացնի, ինչ է, մայրիկը,– կատաղեց բժիշկը:

– Ձեր գործը չէ՛: Ինքս կմեծացնեմ: Թողե՛ք ինձ: Ես ձեզ դատի կտամ,– շարունակում էր աղմկել Յուլկան:

Նրան արձակեցին և վիրահատարանից դուրս հանեցին:

– Այ քեզ աննորմալ,– ասաց անզգայացնողը:– Մեկին էլ կանչիր և գնանք թեյ խմելու: Այս աշխատանքում գժվել կարելի է, այ թե հիմար եք դուք, կանայքդ:

– Վե՛րջ, էլ չե՛մ կարող,– մանկաբարձուհին հանեց ձեռնոցները, նետեց մի անկյուն և դուրս եկավ:

Յուլյան վազում էր հիվանդանոցի մասնաշենքերի մոտով՝ արցունքները դեմքին լղոզելով: Ապրելու ուժ չկար, ուզում էր փախչել, երևի թե ինքն իրենից: Դուրս թռչելով հիվանդանոցի պարսպից՝ սլացավ փողոցով, ինքն էլ չիմանալով՝ ուր: Շուտով ուժասպառ լինելով՝ փլվեց պուրակի նստարանին:

– Ինչո՞ւ ես լալիս, սիրելիս,– հանկարծ կողքից հարցրեց մի տարեց կնոջ մեղմ ձայն: Յուլկան շրջվեց և իր կողքին տեսավ տխուր աչքերով մի բարի, փոքրիկ, լուսավոր տատիկի:

«Ինչ ամոթ, ինչպե՞ս պատմեմ»,– Յուլյան շարունակում էր լաց լինել:

– Ինչ ցավ ունես: Գուցե ինչ-որ բանով օգնեմ քեզ,– տատիկը համակրանքով ձեռքը դրեց աղջկա ուսին:

– Ոչ մեկը, ոչ մեկն ինձ օգնել չի կարող: Չեմ կարող ինձ ներել,– հեծկլտում էր Յուլյան:

– Դու ճիշտ չես: Ճիշտ է, որ մարդն իրեն չի կարող ներել, խիղճը թույլ չի տա ներել, իսկ Աստված և՛ կների, և՛ կօգնի,– վստահաբար ասաց տատիկը,

նրա հայացքը ավելի լուսավորվեց, և այնքան համբերություն կար նրանում, արիություն և ուժ, որ Յուլյան դադարեց հեկեկալուց և տարակուսանքով նայում էր տատիկին:

– Գնա՛, սիրելիս, եկեղեցի:

Դա մի անհեթեթ խորհուրդ էր: Յուլյայի ընտանիքում բոլորն աթեիստ էին, «ժողովրդական ավանդույթին տուրք չէին տալիս» նույնիսկ Զատկին: Եվ հանկարծ՝ եկեղեցի: Բայց չգիտես ինչու՝ նա լսեց և գնաց պուրակի կողքի փոքրիկ, սպիտակ եկեղեցին: Տատիկը պտտվում էր նրա կողքին:

– Անունդ ինչ է, սիրելիս:

– Յուլյա,– պատասխանեց աղջիկը,– իսկ ձեր անունը:

– Ինձ Ակսինյա Պետրովնա են կոչում: Դու գոնե մկրտվա՞ծ ես:

– Ո՛չ, տատիկ, մեր ընտանիքում բոլորն անհավատ են:

– Այդպես բոլորն են ասում, բայց հիշիր, թե մայրդ քանի անգամ է ասել՝ «փառք Աստծո» կամ «Աստված չանի»: Իսկ ինչո՞ւ են աղոթում, եթե չեն հավատում:

Յուլկան այդ մասին առաջ երբեք չէր մտածել, իսկ հիմա կարծես արթնացավ:

– Իսկ ինչո՞ւ, Յուլյա, հոգին հո գիտի, որ Աստված կա, ահա և սուրբ բառերը ամեն ծամի դուրս են թռչում: Խաչակնքել գիտե՞ս:

Յուլյան չգիտեր, և Ակսինյա Պետրովնան նրան սովորեցրեց:

Եկեղեցում կիսախավար էր, կայծկլտում էին մոմերի լույսերը: Աչքերն աստիճանաբար ընտելացան կիսամութին: Յուլյան հետաքրքրությամբ դիտում էր շուրջը ամեն ինչ, կյանքում առաջին անգամ էր եկեղեցում: Աղջիկը պտտվում էր այս ու այն կողմ, մինչև որ հանդիպեց աչքերի... Այնպիսի աչքեր էին, որ Յուլյայի շունչը կտրվեց: Նրան թվում էր, որ կարելի է միշտ այդպես կանգնել և նայել այդ մաքուր և բարեգութ, այնքան տխուր աչքերին:

– Նա Աստվածամայրն է,– կամաց ասաց Ակսինյա Պետրովնան:– Դու, սիրելիս, մոտեցիր Երկնային Թագուհուն և ասա նրան՝ ինչ է քեզ տանջում: Ահա Նա էլ քո սրտիկը կգուրգուրի:

Աստվածամայրը գրկել էր մի հրաշագեղ մանկիկի, բայց ինչ-որ բանից նրա աչքերը ուրախ չէին, այլ լուսավորված էին անսահման իմաստությամբ և խորը վշտով:

– Ես չգիտեմ ինչպես անել,– շփոթված թոթովեց Յուլկան:

– Իսկ դու ամբողջ սրտով, ինչ որ մտածում, ինչ որ զգում ես՝ այն էլ պատմիր: Տիրուհին ամեն ինչ կլսի և կօգնի քեզ: Դու միայն հավատա: Մարդիկ տարբեր կերպ են դեպի Աստված գնում. ոմանք ուրախության միջոցով, իսկ ավելի շատ՝ տառապանքի: Ահա դու էլ

քո ճանապարհը գտար, մնացածը կարևոր չէ: Հիմա ամեն ինչ լավ կլինի:

Յուլկան շատ էր ուզում հավատալ, որ այլևս լավ է լինելու: Նա մոտեցավ սրբապատկերին և, նայելով սքանչելի աչքերի մեջ, պատմեց իր դժբախտության մասին:

Եվ հանկարծ նրա հոգու վրա այնպիսի հանգստություն և խաղաղություն իջավ, որ շուրջն ամեն ինչ դարձավ անկարևոր: Եվ Յուլկան հասկացավ. կա՛ Աստված, և կա՛ Աստվածամայրը, և էլի ինչ-որ բան կա, որ ինքը չգիտի, բայց այսուհետև անպայման կիմանա:

Ակսինյա Պետրովնային մոտեցավ երկար, սև հագուստով մի բարձրահասակ մարդ:

– Օրհնեցե՛ք, տե՛ր Իգոր,– ափերը կրծքին ծալեց և խոնարհվեց տատիկը:

– Աստված օրհնի: Ինչպե՞ս ես:

– Ահա, վշացյալ եմ բերել ձեզ մոտ, այնպե՞ս էր լալիս պուրակում: Ծանր է, մկրտված չէ, նեղացրել են, կյանքը խլել է ոտքի տակի հողը: Մտածեցի բերեմ եկեղեցի, Աստված կօգնի՝ ոտքի կկանգնի:

Հոգևորականի ձայնը մեղմ էր, թավշյա: Յուլկան երկար լսում էր: Պարզվում է՝ եկեղեցին նավ է, իսկ մեր կյանքը՝ պարզվում է, ալեկոծ մի ծով:

Աստվածածինը գրկել է Քրիստոսին, Աստծո Որդուն, Որը խաչվեց, մահացավ, իսկ հետո հարություն

առավ: Նա բոլորին փրկեց և ներում է բոլորին, ովքեր զղջում են:

Տեր Իգորը մկրտեց Յուլյային, իսկ Ակսինյա Պետրովնան դարձավ նրա կնքամայրը:

Երբ աղջիկը տուն էր վերադառնում, նրա կրծքին խաչ էր կախված՝ փրկության, ներման և մահվան նկատմամբ հաղթանակի խորհրդանիշը, իսկ ձեռքին բռնել էր Աստվածաշունչը և մի աղոթագիրք, որ նվիրել էր կնքամայրը:

Օլգան նստել էր բազմոցին՝ ոտքը ոտքին գցած և նյարդային ծխում էր: «Այդ աննորմալը փախել է հիվանդանոցից՝ ուղիղ վիրահատարանից: Անցել է արդեն չորս ժամ: Հայտնի չէ՝ որտեղ է թափառում»:

Շեմին տեսնելով քրոջը, Օլյան թեթևացած շունչ քաշեց. «Գոնե ողջ է»:

– Դու, երևի, բոլորովին ցնդել ես,– ասաց նա:

– Օլյա՛, մի՛ սկսիր,– պատասխանեց Յուլկան,– ես աբորտ չեմ անի, պա՞րզ է:

– Իսկ ինչ ես անելու, հետաքրքիր է,– կծու հարցրեց քույրը, թափ տալով ծխախոտի մոխիրը:

– Տանել իմ խաչը,– հանգիստ արտաբերեց Յուլյան և գնաց սենյակ:

Օլյան նստել էր բերանը բաց, մինչև ծխախոտի մնացորդը չվառեց մատները:

4

Հիվանդանոցի մանկաբարձության և գինեկոլոգիայի բաժանմունքի բժիշկն իր առանձնասենյակում նստած՝ նորից ու նորից կարդում էր «համաձայն իր որոշման» դիմումը.

– Բայց և այնպես, Իլոնա, արի հանգիստ խոսենք: Ինչո՞ւ դուրս գաս աշխատանքից:

– Ես արդեն ամեն ինչ որոշել եմ, չեմ կարող այլևս աբորտներ անել:

– Բայց չէ՞ որ դա քո աշխատանքն է: Ամբողջ կյանքդ արել ես, իսկ հիմա...– հարցական նայում էր վարիչն իր աշխատակցուհուն:

– Ամբողջ կյանքս ճիշտ չեմ ապրել: Իմ աշխատանքն է՝ օգնել ծննդաբերելուն: Իսկ սպանությունը իմ գործը չէ, համենայն դեպս՝ հիմա:

– Գուցե, այդուհանդերձ, մնա՞ք:

– Եթե ինձ աբորտներից ազատեք, կմնամ:

– Բայց գիտեք, որ դա անհնար է,– պատասխանեց վարիչը:

– Հենց այդ է որ կա,– ասաց Իլոնա Սերգեևնան և, վերցնելով պայուսակը, դուրս եկավ աշխատասենյակից:

– Վերջնահաշվարկը հաշվապահությունից կստանաք երեք օրից,– հետևից գոռաց վարիչը, իսկ ինքը մտածեց. «Հեռանալ այսպիսի աշխատավարձից...»:

Իլոնա Սերգեևնան դանդաղ քայլում էր փողոցով: Նա վախենում էր: Այդ աղջիկը, որ հրաժարվեց աբորտից, հանկարծ այնպես տակնուվրա արեց իր հոգին... Բայց ապրի նա, ինչ քաջ աղջիկ էր, երեխան կունենա, կլինի մեկը, ում հետ կապրի, կխոսի և ում կսիրի: Իլոնան բաժանվել էր յոթ տարի առաջ, ուրիշ ամուսին փնտրելն ուշ էր. ո՞ւմ է պետք քառասունինը տարեկան կինը մեկսենյականոց «խրուշչյովկայով»...

Նա ամուսնացել էր քսանհինգ տարեկանում: Վասիլին գեղեցիկ տղամարդ էր. բոլոր ընկերուհիները նախանձում էին: Եվ ի՞նչ է գտել նրա մեջ: Նրան նույնիսկ համակրելի էլ չէիր ասի: Հարսանիքից հետո Իլոնան անմիջապես հղիացավ: Իսկ նա այնքա՜ն էր ուզում «իր համար ապրել»: Գնաց աբորտի. որոշեց՝ երեխա կբերի երկու տարի հետո, գուցե և երկուսն ունենա: Բայց երկու տարի հետո ոչինչ չստացվեց: Ոչինչ չստացվեց նաև չորս, վեց տարուց հետո: Այն աբորտը իրեն ընդմիշտ զրկեց մայրական երջանկությունից:

Երկար ապրեցին իրենց համար: Հետո ամուսինը ձանձրացավ և հեռացավ, գնաց մեկ ուրիշի մոտ, ով նրա համար երեք երեխա ունեցավ՝ տղան՝ Վիտյան՝ վեց, Սվետան՝ չորս, իսկ Դաշկան՝ երկու տարեկան: Իլոնան մնաց մենակ, բայց դրանից հետո միայն հասկացավ, որ մեղավորը ամուսինը չէր, նա երեխա շատ էր ուզում, իսկ ինքը պնդեց, թե աբորտը ճիշտ է՝ սպանելով իրենց միակ երեխային:

Իլոնայի աչքերից ասես մի փառ ընկավ: Նա հասկացավ, որ այնպես չի ապրել, ինչպես պետք է և այլևս բժիշկ լինել չի կարող:

Մի հայտարարություն էր փակցված սյան վրա. «Մանկատանը պահանջվում է դայակ՝ նախադպրոցական երեխաների խնամքի համար: Դիմել կադրերի բաժին»: Եվ Իլոնան վճռականորեն քայլեց գիշերօթիկի ուղղությամբ:

Նրան ընդունեցին անմիջապես, ձեռքի պակաս շատ կար: Զարմացան, իհարկե, որ հեռացել է բարձր աշխատավարձից՝ դայակ աշխատելու, բայց հարցուփորձ չարեցին: Խմբում երեսունվեց երեխա էր՝ երկուսից մինչև հինգ տարեկան, դաստիարակը չէր հասցնում: Երեխաները շրջապատել էին Իլոնային և հարցնում էին. «Դու մեր նոր մայրիկն ես»,– իսկ նրա սիրտը սեղմվում էր և ուզում էր ամբողջ ձայնով ողբալ:

Նա բոլորին թույլ էր տալիս իրեն մայրիկ կոչել, թեև դա հակամանկավարժական էր, ինչպես ասաց վարիչը: Բայց Իլոնայի համար միևնույն էր՝ մանկավարժակա՞ն էր դա, թե՞ ոչ:

Երեխաները ջերմության ծարավ ունեին, և նա, ասես թևեր առած, թռչում էր աշխատանքի, ազատ օրերին շատ թխվածքաբլիթներ էր թխում, որպեսզի ուրախացնի իր երեխաներին: Այդ երեխաները ոչ մեկինը չէին, իսկ դա նշանակում է՝ ումը ասես կարող են

լինել, և նոր դայակը որոշեց, որ նրանք իր երեխաները կլինեն:

Ղեկավարությունը նրան տարօրինակ էր համարում, բայց նա լավ էր աշխատում և նրան չէին կպչում: Իսկ երեխաները, զգալով, որ իրենց սիրում են, բացվեցին ինչպես ծաղիկներն արևին ընդառաջ, որը հիմա լուսավորում էր Իլոնայի հոգին...

5

Յուլկան կանգնել էր սենյակի մեջտեղում, նայելով, թե ինչպես է հայրը պահարանից դուրս շպրտում իր իրերը: Մայրը լալիս էր խոհանոցում, Օլյան նրան վալերյանա էր խմեցնում: Յուլյային այդ ամենը ցավ էր պատճառում, բայց նա այլ կերպ չէր կարող:

– Վերջին անգամ եմ հարցնում, աբորտ անելո՞ւ ես,– գոռում էր հայրը:– Ինչ ամոթ: Ապրեցինք, դաստիարակեցինք աղջկան:

– Խայտառակության համար ինձ ներեցեք, մեղավոր եմ, գիտեմ: Բայց աբորտ չեմ անի: Մեղքը մեղքով չեն շտկի,– արցունքների միջից կրկնեց նա, թեև դա նշանակություն չուներ: Իսկ ինչը որ նշանակություն ուներ՝ այն էր, որ հինգ րոպեից նա գնալու տեղ չէր ունենալու:

Հայրը հավաքեց ճամպրուկը, տվեց Յուլյայի ձեռքը և ասաց.

– Դու մեզ խայտառակել ես: Արա՛ ինչ ուզում ես, բայց հինգ րոպեից ոտքդ չտեսնեմ այստեղ: Մենք աղջիկ չունենք:

Նա սպասում էր, որ Յուլկան, միշտ այնքան փափուկ ու լսող, խելքի կգա, կսկսի աղաչել, խնդրել և համաձայնել աբորտի: Բայց նա միայն խոնարհվեց, ասաց. «Շնորհակալ եմ ամեն ինչի համար, նրա համար, որ ինձ կյանք եք տվել, դաստիարակել եք»,– և գնաց:

Մայրը բարձրաձայն փղձկաց:

– Հերիք է ողբաս: Եվ այլևս ես նրա մասին չլսեմ,– կտրեց հայրը:

Օլյայի մեջ անորոշ մեղավորության զգացում շարժվեց՝ ինքն էր ամեն ինչ պատմել ծնողներին:

Ճամպրուկը ծանր էր, Յուլկան փողոցով դժվարությամբ քայլում էր՝ ինքն էլ չիմանալով, թե ուր: Ապրիլի սկիզբը ցուրտ էր, քամին անձրևի խոշոր կաթիլները խփում էր երեսին: Ո՞ր գնալ: Ընկերուհիների մո՞տ: Բայց նրանք ապրում են ծնողների հետ: Այդպես նա հասավ մինչև եկեղեցի և որոշեց գնալ խորհրդակցել տեր հոր՝ Իգորի հետ:

Նա եկեղեցում չէր, և պահակը աղջկան տարավ ծխականների շենքը, որի առաջին հարկում կիրակնօրյա դպրոցն էր, իսկ վերևում ապրում էր տեր

հայր Իգորը երեցկնոջ և երկու որդիների՝ Սաշայի և Նիկոլայի հետ: Ամբողջ ընտանիքը թեյ էր խմում: Նրան սրտաբաց հրավիրեցին սեղանի մոտ: Երեցկինը՝ Վերան, ծիրանի մուրաբա առաջարկելով, ուրախ ժպտում էր: Հանկարծ Յուլյայի աչքի առաջ ամեն ինչ լողաց, և նա ընկղմվեց հաճելի մթության մեջ, որտեղ ոչ ցավ կար, ոչ դժբախտություն:

Յուլկան ուշքի եկավ բազմոցին, երեցկինը ջանում էր ինչ-որ բան անել: Աղջիկն ամաչում էր, որ այդքան անհանգստություն է պատճառում: Նրա ներողություններին ի պատասխան՝ երեցկինը ձեռքը թափ տվեց:

– Հանգի՛ստ, հանգի՛ստ: Ավետարանում ասված է՝ պետք է միմյանց օգնել: Թե չէ ինչպես կիմանան, որ մենք Նրանն ենք:

– Դե, Աստծո ծառա, պատմի՛ր. ի՞նչ է պատահել,– նրա կողքին բազմաթոռին նստելով ասաց տեր հայրը: Եվ նա ամեն ինչ պատմեց: Մի ժամից Նիկոլայը՝ հայր Իգորի որդին, բերեց Ակսինյա Պետրովնային:

– Հարազատս, գնանք, միասին կապրենք: Չէ որ ես կնքամայրդ եմ, պարտավոր եմ քեզ դաստիարակել, եթե ծնողներին մի բան պատահի:

– Մի՛ տատանվիր, Յուլյա, մի՛ տատանվիր: Ի զուր չէր, որ պուրակում հանդիպեցիր Ակսինյա Պետրովնային,– ժպտում էր հայր Իգորը:– Նա միայնակ է ապրում սեփական տանը, նրա համար ավելի ուրախ կլինի: Եվ աշխատիր աշխատանքի տեղավորվել, երեխայի խնամքի համար արձակուրդ կգնաս, կվճարեն: Համայնքն էլ կօգնի: Աստված կտա, ամեն ինչ լավ կլինի:

Հայր Իգորը օրհնեց նրանց, և նրանք գնացին Ակսինյա Պետրովնայի տուն: Նիկոլայը ճամպրուկն էր տանում, իսկ Յուլյան գնում էր նրանց կողքով և չէր հավատում իր երջանկությանը:

Յուլյան աշխատանքի տեղավորվեց գրադարանում: Հանգիստ աշխատանք էր, վատ չէին վճարում, և նա չէր ցանկանում նախածննդյան արձակուրդ գնալ: Մի շաբաթ էր մնացել մինչև ծննդաբերությունը, երբ վարիչը, այդուհանդերձ, համոզեց նրան գնալ, խոսք տալով, որ տեղը չի կորի: Վերջիվերջո, մեկուկես տարի է, և երեխային կարելի է մսուր տալ. աշխատակցուհին Աննա Պավլովնային դուր էր գալիս: Ճիշտ է, շատ ներամփոփ է, ընտանիքի մասին երբեք չի պատմում, փոխարենը շատ պատասխանատու է, լուրջ. այդպիսիներին վարիչը սիրում էր: Բացի դրանից, Յուլկան իր նման միայնակ մայր էր:

Աննա Պավլովնան ամուսնու հետ ապրեց մեկ տարի: Այդ ընթացքում նա չորս անգամ համոզվեց ամուսնու անհավատարմության մեջ, իսկ հինգերորդ անգամ չդիմացավ, բաժանվեց: Վոլոդյային ծննդաբերեց առանց ամուսնու: Ծննդատնից նրան վերցրին ընկերուհիները:

Շատ ծանր էր, իհարկե, բայց ոչինչ, որդուն ոտքի կանգնեցրեց, հիմա սովորում է ինստիտուտում: Նա կյանքում մի ուրախություն ունի՝ դա որդին է, թե չէ հիմա մեն-մենակ կլիներ:

Հնչեց հեռախոսազանգը, վարիչը վերցրեց խոսափողը:

– Ալլո՛, Աննա Պավլովնա՞ն է: Բարև ձեզ: Ակսինյա Պետրովնան է խոսում՝ Յուլյայի կնքամայրը: Յուլյան խնդրեց հաղորդել, որ աղջիկ է ունեցել: Հասակը 51 սանտիմետր, իսկ քաշը՝ 3400: Իրեն լավ է զգում, հինգ օրից դուրս կգրեն:

Գրադարանի կոլեկտիվը համերաշխ էր, բոլոր աղջիկները երիտասարդ էին, մի քանիսը փոքր երեխաներ ունեին: Այդ պատճառով, երբ վարիչը նրանց կանչեց իր աշխատասենյակ և հայտնեց նորությունը, միահամուռ հնչեց բարեկամական «Ուռա՜»-ն:

Ակսինյա Պետրովնայի մոտ անհրաժեշտ իրեր տարան: Հայր Իգորի որդին՝ Նիկոլայը, չգիտես որտեղից ձեռք բերեց մի մանկական մահճակալ, որը նոր չէր, բայց լավ վիճակում էր, գրադարանի աղջիկները վերմակ, բարուրաշորեր բերեցին, և աշխատավարձից փող հավաքելով, նվեր գնեցին նորածնի համար, որպեսզի նրան տուն բերեն ամբողջովին նոր շորերով:

Ծննդատնից Յուլյային դիմավորում էին ուրախ խմբով՝ ծաղիկներով և կոնֆետի տուփով: Տանը բոլորը աղջնակին ձեռքից-ձեռք էին վերցնում, հիանում էին, թե որքան գեղեցիկ է, իսկ երիտասարդ մայրիկը փայլում էր երջանկությունից: Յուլյան որոշեց աղջկա անունը Անգելինա դնել:

6

Լսվեց դռան զանգի ձայնը: «Երևի Վադիմն է»,- մտածեց Օլյան և ցատկելով դեպի հայելին, ուղղեց սանրվածքը: Նա արդեն կես տարի է, որ հանդիպում էր Վադիմի հետ և արդեն դիմում էին տվել զագս: Մեկ ամսից պետք է ամուսնանային: Ամեն ինչ լավ կլիներ, եթե Յուլյայի խնդիրը չլիներ: Հայրն ու մայրը նրա մասին լսել անգամ չէին ցանկանում: Օլյան փորձում էր գտնել Յուլյային, բայց ամեն ինչ ապարդյուն: Նա բացեց դուռը, Նադյան էր՝ չորրորդ հարկից:

– Հենց նոր ինձ զանգահարեց Յուլյան: Նա աղջիկ է ունեցել: Ինձ տվել է հասցեն, մտածեցի ասել քեզ:

Օլյան խլեց ձեռքից թուղթը և ներքև սլացավ:

– Կոշիկ հագիր,- նրա հետևից գոռաց Նադյան:- Այդ ո՞ւր մաշիկներով:

Օլգան վերադարձավ, նստեց հայելու մոտ և սկսեց ծիսել.

– Գիտես, Նադյա, ես չեմ գնա:

– Ինչո՞ւ: Հենց նոր վազում էիր, իսկ հիմա մտափոխվեցիր:

– Ես մեղավոր եմ նրա առջև, Նա ինձ տեսնել չի ցանկանա: Ես նրան աբորտի էի տանում, հետո էլ գաղտնիքը հայտնեցի ծնողներիս: Դու ինքդ գնա, իմացիր, եթե նա ինձ թույլ տա՝ ես կգամ,– և Օլյան լաց եղավ:

Նադյան հաջորդ օրը Յուլիայի մոտ գնաց մի փունջ մեխակներով, հյութեր էր վերցրել կերակրող մոր համար և անկողնու գեղեցիկ ծրար՝ Անգելինայի համար: Այն տունը, ուր այժմ ապրում էր Յուլյան, քաղաքի ծայրամասում էր, ոչ մեծ հողամասի մեջ, որտեղ Ակսինյա Պետրովնան վարունգ, լոլիկ, կանաչի էր աճեցնում: Խնձորենիների տակ նստարան էր հարմարեցված. ժուչկան պոչով ուրախ քսմսվում էր հյուրին:

Ակսինյա Պետրովնան ճաշ էր պատրաստում, իսկ Յուլկան օրորում էր դստերը: Սենյակը մեծ չէր, բայց լուսավոր էր, մաքուր, պատուհաններին ժանեկազարդ վարագույրներ:

Երբ Անգելինան քնեց, ընկերուհիները դեռ երկար խոսում էին:

–Դու կեցցես, վճռական եղար: Իսկ դու ինչ է՝ հիմա հավատացյա՞լ ես,– հարցրեց Նադյան՝ ցույց տալով սրբապատկերները:

– Այո,– հանգիստ պատասխանեց Յուլյան:

– Լսի՛ր, նույնիսկ չգիտեմ, թե ինչպես հարցնեմ: Օլյան ուզում էր գալ, բայց վախենում է: Երեկ լալիս էր: Ասում է՝ իրեն մեղավոր է զգում քո առաջ:

– Ինչո՞ւ շուտ չասացիր: Իհարկե, թող գա, հենց վաղն էլ: Նրան ասա, որ ես կսպասեմ:

Նադյան գնաց: Յուլկան անհամբեր սպասում էր վաղվա օրվան, հուզվում էր, ամեն ինչ ձեռքից ընկնում էր:

– Դե՛-դե՛, շատ մտատանջվեցիր: Չի՛ կարելի, կաթդ կպակասի,– քնքուշ կշտաբեց նրան կնքամայրը:– Փոքրիկին երբ ենք մկրտելու:

– Այ, Օլյան կգա, ես հենց նրան էլ կխնդրեմ կնքամայրը լինել,– պատասխանեց Յուլյան:

– Բայց նրան դեռ սովորեցնել է պետք: Իսկ նա գոնե հավատո՞ւմ է Աստծուն,– երկմտեց Ակսինյա Պետրովնան:

– Ամեն մեկը դեպի Աստված իր ճանապարհն ունի,– վճռական պատասխանեց Յուլկան:

...Օլյան վախենում էր, որ Յուլյան չի ցանկանա իրեն տեսնել: Տեղի ունեցածից հետո Օլգան սկսեց ծնողներից գաղտնի եկեղեցի գնալ: Սկզբում ցանկանում էր հասկանալ, թե ինչ է գտել այնտեղ Յուլյան: Երևի ինչ-որ կարևոր բան, եթե դա ստիպել է նրան փոխել իր կյանքը: Իսկ հետո արդեն հաճախում էր իր համար, փորձելով հասկանալ, թե ինչն է այնտեղ ձգում իրեն: Օլգան Կտակարան գնեց: Սկսեց կարդալ և հայտնաբերեց, որ այն ամենը, ինչ խոսում էին այդ գրքի մասին, սուտ է: Իսկ երբ կարդաց, որոշեց մկրտվել:

Նադյան զանգահարեց Օլգային և խորհրդավոր տոնով երկու բառ ասաց. «Կարելի է, վաղը»: Օլգան այնպես ուախացավ, որ ամբողջ գիշերը չքնեց և կյանքում առաջին անգամ դիմեց Աստծուն. «Եթե Դու կաս, այնպես արա՛, որ նա ինձ ների»:

Հանդիպելով՝ նրանք գրկախառնվեցին և երկար լուռ կանգնած էին՝ ցածր հեկեկալով:

– Ների՛ր,– հազիվ ասաց Օլգան:

– Ինչ ես ասում: Ես այնքան ուրախ եմ, որ դու եկար,– պատասխանեց Յուլկան:

Նրանք նստեցին բազմոցին և երկու ժամ խոսում էին, մինչև Անգելինան լաց եղավ:

– Շատ խոսեցինք,– ծիծաղեց Յուլկան,– իսկ աղջիկը թեև հրեշտակ է, բայց ուտել ուզում է:

Օլգան զննում էր զարմուհուն, նրա մանրիկ ձեռքերը, աշխույժ աչքերը, բաց գույնի նոսր մազիկները և մտածում էր, որ նա կարող էր և չլինել այս աշխարհում: Հիմա դա անհնար էր թվում:

– Իսկ մայրիկն ու հայրիկը իմ մասին հարցնո՞ւմ էին,– տխրեց Յուլյան: Օլյան լռում էր, չիմանալով ինչ ասել:– Լավ, Օլենկա, ես հասկացա: Մի՛ ասա, որ եղել ես ինձ մոտ: Իսկ դու դեռ չե՞ս մկրտվել:

– Ո՛չ, ոչ մի կերպ կնքամայր չեմ գտնում,– շփոթված ծիծաղեց Օլգան:

– Իսկ մենք կխնդրենք Ակսինյա Պետրովնային, նա քեզ մի ակնթարթում կնքամայր կգտնի: Ես ուզում եմ, որ դու Անգելինայի կնքամայրը լինես, կլինե՞ս:

– Ե՞ս, կնքամա՞յր: Իհարկե, կլինեմ: Միայն թե չգիտեմ՝ ինչ եմ անելու և դրա համար ինչպիսին պիտի լինեմ,– պատասխանեց քույրը:

– Դե, նախ և առաջ՝ թո՛ղ ծխելը և ինքդ մկրտվիր, իսկ մնացած բաներում օրինակ վերցրու Ակսինյա Պետրովնայից,– պատասխանեց Յուլյան:

Երբ Օլգան գնում էր, Յուլյան մի անգամ էլ խնդրեց ոչինչ չասել ծնողներին:

– Ես եմ մեղավորը, նրանց ոչինչ չպատմեցի: Թող որոշ ժամանակ անցնի, դրանից հետո նրանք կկարողանան ինձ ներել:

7

Եվ ժամանակն անցնում էր: Անգելինան մեծանում էր որպես իսկական մի հրեշտակ՝ բաց գույնի մազերով, մայրիկի իսկական պատճենը, միայն աչքերն էին երկնագույն և ոչ շագանակագույն: Աղջնակն արտակարգ լսող էր և հասկացող, կարծես զգում էր, որ մոր համար առանց այդ էլ ծանր է:

Երբ Յուլյան սկսեց աշխատանքի գնալ, Ակսինյա Պետրովնան մնում էր փոքրիկի հետ: «Ես մեր հրեշ-

տակին մանկամսուր չեմ տա»,- հայտարարեց տատիկը: Յուլյան տեղավորվեց կես հաստիքով, իսկ աշխատանքի մի մասը տուն էր տանում: Օլյան էլ ինչով կարող էր՝ օգնում էր, չէ՞ որ նա Անգելինայի երկրորդ մայրն էր: Աղջիկը Յուլյայի ողջ աշխարհը լցրել էր մայրության ուրախությամբ և երջանկությամբ:

Անցավ չորս տարի: Յուլկան աշխատանքից տուն էր վազում՝ շտապելով դստերը մանկապարտեզից վերցնել. այդ օրը Անգելինայի անվանակոչության օրն էր:

Երեխաները խաղում էին խաղահրապարակում: Մի կին՝ մոտ քառասունհինգ տարեկան, անցնում էր և կանգ առավ՝ երեխաներին նայելու, հիշելով, որ իր աղջիկներն էլ մի ժամանակ այսպիսին էին: Նրա ուշադրությունը գրավեց մի աղջնակ երկնագույն շորիկով, որ թռչկոտում էր մի ոտքի վրա: Կինը չհավատաց իր աչքերին՝ նա ճիշտ և ճիշտ իր աղջկա կրկնօրինակն էր: «Երևի ինձ է թվում,- մտածեց նա, և նրա սիրտը արագ բաբախեց:- Նրան ինչո՞ւ տնից վռնդեցինք: Տե՛ր Աստված, ների՛ր: Իսկ Յուլյան երբևիցե ինձ կների՞»:

Մի երիտասարդ կին բացեց դարպասը և ուղղվեց դեպի երկնագույն շորիկով աղջնակը: Գրկելով դստերը՝ երիտասարդ մայրը հրաժեշտ տվեց դաստիարակչուհուն և ուղղվեց դեպի ելքը:

- Յուլյա՛, Յուլյա՛,- լսեց նա իր հետևից:

Յուլկան շրջվեց դեպի այդ հարազատ, անմոռանալի ձայնը: Ելքից ոչ հեռու կանգնած էր նրա մայրը: Յուլյան մոտեցավ նրան և, աշխատելով ցույց չտալ, որ ձայնը դողում է, ասաց.

- Անգելինա, սա քո Վալյա տատիկն է:

- Յուլենկա՛, հարազա՛տս, ների՛ր ինձ, ների՛ր,- լաց եղավ մայրը:

- Մայրիկս, հարազատս, ինչ ես ասում, դո՛ւ ինձ ներիր,- նրան փաթաթվեց Յուլյան:

Անգելինան լուսավոր աչքերով նայեց նրանց և լրջորեն ասաց:

- Աստված կների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչության կողմից 5

Գնա՛և ետ մի՛ շրջվիր (Ս. Սերժանտովա) 11
Շնորհի գինը (Ե. Բոգանևա) 13
«Սրբուհին» (Իրինա Պիլեցկայա) 18
Կոշիկները (Ե. Կումագերչիկ) 25
Ես դեռ պե՞տք եմ որևէ մեկին (Ն. Անտիպովա-Տատուր) 29
Ցանկությունների քաղաքը (Լ. Գանագո) 31
«Եկե՛ք ինձ մոտ...» (Ն. Անտիպովա-Տատուր) 38
Սահմանագծից այն կողմ (Ի. Կուլիկովա) 43
Ում են այցելում հրեշտակները (Լ. Գանագո) ... 46
Հոգեգալստյան օրը (Տ. Մարցևա) 51
Վալեչկան (Լ. Գանագո) 59
Բեկում (Ի. Կուլիկովա) 67
Կնոջ բախտ (Ի. Կուլիկովա) 74
Հակադարձ ապացույց (Ն. Անտիպովա-Տատուր) 78
Անցումային տարիք (Լ. Գանագո) 83
Սիրով փրկվածը (Ն. Անտիպովա-Տատուր) 89
Ականապատ դաշտը (Օ. Ռուգոյ) 94
Զուղարկված նամակ (Ի. Կուլիկովա) 99
Հանդիպում (Օ. Պոլեշչուկ) 107
Բարի լուր (Լ. Բիտնո) 112
Դու իմ ամրոցն ես (Զ. Կիստենևա) 123
Նորեկը (Ն. Պրոխորովա) 130
Իմ ավագ եղբայրը (Լ. Գանագո) 136
Սուրբը վերադարձավ (Ի. Պիլեցկայա) 142
Նոր կյանք, կամ որդեծնություն (Ն. Անտիպովա-Տատուր) 146
Բարակ թելիկներ (Ի. Կուլիկովա) 153
Վերցրո՛ւ երեխային (Գ. Տորժոկ) 163
Արձագանքիր (Լ. Գանագո) 165
Զարը (Տ. Մարցևա) 172
Կատակեց (Ն. Անտիպովա-Տատուր) 177
Նվերը (Օ. Պոլեշչուկ) 181
Արյան հիշողությունը (Ի. Կուլիկովա) 185
Հարցազրույց (Ե. Ստեպանովա) 192
Կաղնի-ժամհարը. լեգենդ (Տ. Գորոխ) 198
Բարի լո՛ւյս, իմ ուրախություն (Ի. Կուլիկովա) 203
Յուլկան, կամ Աստված կների (Ն. Անտիպովա-Տատուր) 210

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - ԺԳ

ՈՒՄ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԿԱԶՄԵՑ՝ Բ. Ա. ԳԱՆԱԳՈ

Թարգմանությունը ռուսերենից՝ Կարինե Բաբայանի

Հրատարակչության
տնօրեն՝ Տ. Եզնիկ արք. Պետրոսյան
Խմբագիր՝ Յու. Հովհաննիսյան
Էջադրումը՝ Արտակ Տիգրանյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

Չափը՝ 70x100 1/32, թուղթը՝ 80 գ., տեքստը՝ 2 գույն,
կազմը՝ կոշտ, 4 գույն, ծավալը՝ 240 էջ,
տպաքանակը՝ 1000:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ